# ՊԱՏԱՍԽԱՆ
# ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻՆ

Գրքում ներկայացված է 19-րդ դարի վերջերին ԱՄՆ-ում ծնունդ առած և ներկայումս աշխարհում մեծ տարածում գտած «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության «վարդապետության» էությունը: Հեղինակը սուրբգրային համոզիչ վկայություններով ներկայացնում է դրա հակաաստվածաշնչային բովանդակությունը և ավանդական քրիստոնեական ուսմունքին հակառակ լինելը:

«Եհովայի վկաներ» կազմակերպությունն այսօր բազմաթիվ հետևորդներ է գտել նաև Հայաստանում, ուստի այս առումով կարևորվում է աշխատանքի արժեքն ու արդիականությունը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երկու խոսք աղանդների մասին .......................................... 4
Ընդհանուր տեղեկություններ Եհովայի վկաների մասին ... 6

*Մաս առաջին. Ուղղափառ դավանություն և հերձվածություն*

Գլուխ 1. Ամենասուրբ Երրորդության մասին .................. 10
Գլուխ 2. Քրիստոս՝ Աստված ............................................ 18
Գլուխ 3. Սուրբ Հոգու Աստվածության և անձնավորության մասին .......................... 46
Գլուխ 4. Քրիստոսի երկրորդ գալուստը ........................ 49
Գլուխ 5. Հավիտենական դատապարտության և դատաստանի օրվա մասին ........................ 55
Գլուխ 6. Աստծո արքայությունը՝ բաժանվա՞ծ ................ 61
Գլուխ 7. Հարության կերպը ............................................ 65
Գլուխ 8. Մարդու հոգու գոյության մասին ....................... 68
Գլուխ 9. Խաչի մասին ......................................................71
Գլուխ 10. Հաղորդության խորհրդի աղավաղումը «վկաների մոտ և այլ շեղումներ ................ 74
Գլուխ 11 Զինվորական ծառայության մասին .................. 76

*Մաս երկրորդ. «Եհովայի վկաներ» կազմակերպության մեծամտական հավակնությունների մասին*

Գլուխ 1. «Եհովայի վկաներ» կազմակերպությունը՝ մարգարե՞ .................................................. 80
Գլուխ 2. Առաջնորդվենք «Դիտարանո՞վ», թե՞ Սուրբ Գրքով ......................................... 85
Գլուխ 3. Կազմակերպությունը ընդեմ Եկեղեցու ............. 88
Գլուխ 4. Հավատանք և հնազանդվենք կազմակերպությա՞նը, թե՞ Աստծուն .......... 91
Գլուխ 5. Աստծուն մատուցենք մտավո՞ր, թե՞ հոգևոր պաշտամունք ................................ 93
Վերջաբան ......................................................................... 96

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնեական Եկեղեցին, որի հիմնադիրը և Գլուխը մեր Տեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն է, իր գոյատեւման ողջ ընթացքում, բազում փորձությունների միջով է անցել: Դիմակայելով թե՛ արտաքին ճնշումներին և թե՛ ներքին անկանոնություններին ու շեղումներին, այն պիտի հաստատուն մնար, քանզի անխախտ պետք է լիներ Տիրոջ այն խոսքը, թե՝ **«այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն»** (Մատթ. 16.18):

Քրիստոնեության պատմությունը ցույց է տալիս, որ Եկեղեցուն հուզող խնդիրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավել աղանդավորության հարցը: Անշուշտ, վարդապետական որոշ ոչ էական հարցերի շուրջ հենց Եկեղեցու ներսում առկա են եղել տարաձայնություններ, որոնցով և Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցում բաժանումներ են առաջ եկել, սակայն քրիստոնեության հիմնական հավատալիքներում ընդհանրությունները մեծ են: Այսպես՝ աշխարհի բոլոր հնագույն, առաքելահիմն և ավելի ուշ դրանցից ճյուղավորված եկեղեցիների հավատքի բանաձևի հիմքում ընկած է Սուրբ Երրորդությունը և Նիկիո հանգանակով ամրագրված դավանաբանական հիմնադրույթները: Ահա այդ վերջինների հերքումով հանդես եկող կրոնական ուղղությունները և խմբավորումներն են, որ անվանվում են աղանդներ և հերձվածներ:

Հերձվածների վտանգավորության մասին մեզ զգուշացնում են Հիսուս Քրիստոսը և Իր աշակերտները: Փրկիչը նախ ասում է. **«Զգո՛ւյշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են»** (Մատթ. 7.15): Պետրոս առաքյալն էլ, խոսելով Սուրբ Գրքի և այն թյուր մեկնաբանողների մասին, նշում է. **«...դրանց մեջ կան ինչ ինչ դժվարիմաց բաներ, որ անուսները և տատանվողները ծուռ են մեկնում. նրանք այդպես են մեկնում նաև բոլոր գրվածքները՝ իրենց անձերի կորստյան համար»** (Բ Պետ. 3. 16): Իսկ Պողոս առաքյալը ճշմարիտ վարդապետությունից հեռացածների մասին ասում է. **«Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ո՛ւշ մի դրեք այնպիսիններին, որ հերձվածներ և գայթակղություններ են առաջ բերում այն վարդապետությունից դուրս, որ դուք սովորել էք. և խորշե՛ք նրանցից: Որովհետև այնպիսիները մեր Տեր Քրիստոսին չեն ծառայում»** (Հռոմ. 16. 17-18): **«Հեռացի՛ր հերձվածող մարդուց՝ մեկ կամ երկու անգամ նրան խրատելուց հետո. իմացի՛ր, որ շեղված է այդպիսին և մեղանչում է՝ ինքն իսկ դատապարտելով իրեն»** (Տիտ. 3. 10,11):

Աղանդները, որոնք մերժում են Ընդհանրական Եկեղեցու դավանաբանությունը և ողջ պատմական քրիստոնեությունը, մեծամտաբար իրենց են համարում ճշմարտության միակ կրողներ, և հայտարարում, թե մարդ կարող է փրկվել՝ անդամակցելով միայն իրենց կազմակերպությանը: Սովորաբար աղանդների ղեկավարները մեծ հավակնություններով են հանդես գալիս, իրենց համարելով վերջին ժամանակների մեծագույն մարգարե, և իբր թե՝ միայն իրենց է տրված Աստվածաշունչը հասկանալու, մեկնելու մենաշնորհը:

Աղանդներին բնորոշ են նաև թարգմանական աղավաղումները, մասնավորապես Սուրբ Գրքի այն մասերում, որոնք չեն համապատասխանում իրենց ըմբռնումներին*:

Որոշ աղանդներ քարոզչական եռանդուն գործունեություն են ծավալում: Մարդիկ, որոնք հավատում են այդ մոլորեցնողներին և ընկնում նրանց ազդեցության տակ, սովորաբար անտեղյակ են լինում Աստվածաշնչի հիմնական ճշմարտություններին: Այդ միամիտ մարդկանց Հովհաննես ավետարանիչն զգուշացնում է. **«Սիրելինե՛ր, մի՛ հավատացեք ամեն մի հոգու, այլ փորձեցե՛ք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են, որովհետև բազում սուտ մարգարեներ են երևան եկել աշխարհում»** (Ա Հովհ. 4.1):

Աղանդավորական հոսանքների և խմբավորումների շարքում թե՛ աշխարհում և թե՛ Հայաստանում, իր վարդապետության շեղվածությամբ ու վտանգավորությամբ, ինչպես նաև կազմակերպական կառույցների ծավալմամբ և անդամների քանակով, առանձնապես աչքի է ընկնում «Եհովայի վկաներ» կազմակերպությունը:

* Տե՛ս, ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՅԼԱՓՈԽՎԱԾ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ Զարեհ եպս. Ազնավուրյան Հայաստանի աստվածաշնչային ընկերություն 2005

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## *Պատմական զարգացումը*

*«Եհովայի վկաներ» կազմակերպության հիմնադիրը Չարլզ Ռասելն է (ծնվ. 1852թ.՝ ԱՄՆ Պիտսբուրգ քաղաքում): Երիտասարդ տարիքում Չ. Ռասելը, չնայած անդամակցում է մի քանի եկեղեցիների, սակայն չի համաձայնում հավիտենական պատժի մասին քրիստոնեական տեսակետին և ավանդական եկեղեցիների դեմ է դուրս գալիս: 1884թ. Չ. Ռասելը Պիտսբուրգում հիմնում է «Դիտարանի» ընկերությունը: Նրա հիմնական աշխատությունները հայտնի են «Աստվածաշնչի բանալին» անունով (6 հատոր), որոնցում նա, մասնավորապես, հայտարարում էր, թե երկրի վրա Հազարամյա թագավորության սկիզբը 1914 թվականն է: Չ. Ռասելը մահանում է 1916 թվականին՝ այդպես էլ չտեսնելով երկրային դրախտը:*

*1916 թվականին՝ Ռասելի մահից հետո, կազմակերպությունը գլխավորում է Ժոզեֆ Ռուտերֆորդը: 1931 թվականին կայացած համագումարում նա կազմակերպությանը տվեց «Եհովայի վկաներ» անունը՝ հիմք ունենալով Եսայու մարգարեության 43.10 համարը, այն է. **«Եղե՛ք ինձ համար վկաներ, ասում է Տեր Աստվածը»**: Եհովականները հաստատակամորեն իրենց համարում են նաև Աստծու հավատարիմ և իմաստուն ծառա, սիրելով հաճախակի մեջբերել Հիսուսի խոսքը, որ իբր թե իրենց համար է ասել. **«Ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն ծառան, որին իր տերը իր ծառաների վրա կարգեց՝ իր ժամին կերակուր տալու համար նրանց»** (Մատթ. 24.45): Ռուտերֆորդը մահանում է 1942թ., և կազմակերպության ղեկավարն է դառնում Ն. Կնորրը: Վերջինիս նախագահության տարիներին Եհովայի վկաների թիվը 110 հազարից հասնում է 2 միլիոնի: 1977 թվականին, իրեն աստվածպետական (թեոկրատական) կազմակերպություն համարող, այդ կառույցի նախագահ է դառնում Ֆ. Ֆրանցը:*



*«Եհովայի վկաներ» կազմակերպությունը կառավարում է Կառավարիչ մարմինը, որի նստավայրը Բրուկլինում է (Նյու Յորք), որտեղ էլ գտնվում է նրա ամենախոշոր տպարանը: Եհովայի վկաներն իրենց հիմնական քարոզչական աշխատանքը կատարում են գրականության տարածմամբ: Նրանք հրատարակում են «Դիտարան» և «Արթնացե՛ք» ամսագրերը. ամսական ավելի քան 100* միլիոն տպաքանակով՝ 153 լեզուներով, որոնք տարածվում են աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Այս ամսագրերից զատ տասնյակ միլիոնների հասնող օրինակներով (մեկ ամսում) տպագրվում են նաև Եհովայի վկաների վարդապետությունը ներկայացնող տարբեր գրքեր: Գունավոր նկարների առատությամբ աչքի ընկնող և բարձրորակ այդ հրատարակություններով «զինված» եհովականները ջանադրաբար այցելում են մարդկանց բնակարանները, ձեռքներին ունենալով Աստվածաշունչը, որում պարտադիր ընդգծումներ են արված. դրանք գլխավորապես Աստվածաշնչի այն հատվածներն են, որոնք Եհովայի վկաները, առանձնացնելով Սուրբ Գրքի ամբողջական բովանդակությունից, հարմարեցնում են իրենց նորահայտ ուսմունքին:*

*Եհովայի վկաների ամենամեծ հավաքները Քրիստոսի մահվան հիշատակի երեկույթներն են (ի դեպ, նրանք դրանից զատ այլ հիշատակման օր չեն ընդունում): Ամբողջ աշխարհում հիշատակի այդ երեկույթներին վերջին տարիներին մասնակցում են մոտ 20* միլիոն Եհովայի վկա: Վկաները լայն տարածում են ստացել նաև Հայաստանում. թե՛ մայրաքաղաքում և թե՛ շրջաններում նրանց թիվը շարունակում է աճել:*

* *2005 թվականի տվյալներով*

## Եհովայի վկաների դավանանքը

Եհովայի վկաների վարդապետությունը տրամագծորեն հակառակ է Քրիստոնեական Եկեղեցու դավանանքին: Նրանք հերքում են Քրիստոնեական Տիեզերական Եկեղեցու, Նիկիո հանգանակի վրա հիմնված, հավատամքի հիմնադրույթները, այն է.

1. չեն ընդունում Սուրբ Երրորդությունը, որ նշանակում է՝ դեմ են Քրիստոսի և Սուրբ Հոգու Աստվածությանը.

2. ժխտում են տեսանելի կերպով Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը և հայտարարում, թե անտեսանելիորեն այն իրականացել է 1914 թվականի հոկտեմբերին.

3. մերժում են հավիտենական դատաստանի գոյությունը և այն համարում սատանայի կողմից ներշնչված գաղափար.

4. Քրիստոսի քավչարար արյունը անբավարար համարելով, կարծում են, որ հազարամյա թագավորության ժամանակ բոլոր մեռելները, այդ թվում՝ անհավատ մեղավորները, պետք է կյանք ստանան և Եհովայի առջև գործերով արդարանալու երկրորդ առիթը ունենան, որով և դատաստանի օրը համարում են հազարամյա թագավորության ժամանակաշրջանը.

5. գտնում են, որ հավիտենական կյանքը ժառանգողները երկու մասի պետք է բաժանվեն. 144 հազար ընտրյալները, որպես հոգեղեն էակներ, մեզ համար անտեսանելի կերպով, պետք է Քրիստոսի հետ թագավորեն երկնային արքայությունում, իսկ Աստծու «մեծ հոտը»՝ Եհովայի աստվածպետական կազմակերպության մնացած անդամները, երկրային դրախտում պետք է բնակվեն.

6. Քրիստոսի հարության մասին ասում են, որ Նա հարություն է առել որպես ոգի, իսկ, թե ինչ է եղել մարմինը, Աստծուն է միայն հայտնի.

7. իրենց թեոկրատական կազմակերպությունից դուրս գտնվող ամեն ինչ, այդ թվում՝ Սուրբ Երրորդությունը դավանող քրիստոնեական եկեղեցիները, համարում են սատանայական կառույցներ:



Այս բոլորից զատ եհովականները գտնում են, որ մարդը հոգի չունի և Աստվածաշնչում հանդիպող «մարդու հոգի» արտահայտությունը լոկ նրա մարմնին է վերաբերում: Նրանք միաժամանակ չեն ընդունում խաչը, նշելով, որ Քրիստոսը ցցահարվել է, և բացի այդ էլ, մահապատժի գործիքը չպետք է պաշտամունքի առարկա դարձնել: Եհովայի վկաներն առանձնանում են նաև նրանով, որ հրաժարվում են զինվորական ծառայությունից:

Սուրբգրային վկայություններով փորձենք ցույց տալ, թե Եհովայի վկաների վարդապետական սկզբունքները որքան են հեռացած քրիստոնեական ավանդական ուղղափառ դավանանքից:

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
# ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՐՁՎԱԾՈՒԹՅՈՒՆ

## Գլուխ 1
## ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Երրորդության պաշտամունքը, անկասկած, Քրիստոնեական Ընդհանրական մեկ Եկեղեցու դավանաբանական հիմքն է: Ըստ այդմ, Մի Աստվածությունում Երեք Անձ ենք ճանաչում, և չնայած Երեք Անձեր են, այդուհանդերձ, Մի Աստվածություն ու Մի զորություն է և ոչ թե երեք Աստված: Առաջին անգամ Սուրբ Երրորդությունը բանաձևեց հենց Հիսուս Քրիստոսը. դիմելով աշակերտներին, Նա ասաց. **«Ուրեմն գնացե՛ք աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերը, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով»** (Մատթ. 28. 19):

Աշխարհի քրիստոնեական եկեղեցիները տարբեր ժամանակներում ունեցան շատ վարդապետական վեճեր, սակայն Ս. Երրորդության դավանանքն անխախտ վեմի պես հաստատուն մնաց բոլոր եկեղեցիների հավատամքի մեջ: Սակայն 4-րդ դարում, հանձինս արիոսականության և վերջին դարում էլ նրանց հետևորդ Եհովայի վկաների, Սուրբ Երրորդության դավանանքը ունեցավ իր հակառակորդները: Նրանք, նշելով, թե Սուրբ Գրքում չի հանդիպում «Երրորդություն» բառը, և հիմք ունենալով Աստվածաշնչի այն խոսքը, որ **«մեր Տեր Աստվածը մեկ Տեր է»** (Բ Օրենք 6. 4), ասել և ասում են, թե Աստված կատարյալ միակություն է, որը և Եհովան է: Եհովականները հայտարարում են, թե քրիստոնեական աշխարհի պաշտած Երրորդությունը հեթանոսական, մասնավորապես, բաբելոնյան և եգիպտական ծագում ունի, որը պետք է Աստծու կողմից դատապարտվի. «Շուտով, երբ Աստված իրերի այս չար դրությանը վերջ տա, Երրորդությունը դավանող քրիստո-



նեական աշխարհը պատասխանատվության կկանչվի: Այն կդատապարտվի Աստծուն անարգող իր գործերի և ուսմունքի համար» («Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» 1995թ. , էջ 31):

Երրորդության ուսմունքը հիմնավորելու համար անհրաժեշտ է խոսել Քրիստոսի և Սուրբ Հոգու Աստվածության մասին, սակայն նախ անդրադառնանք սուրբգրային այն վկայություններին, որոնք փաստում են Մի Աստվածությունում մի քանի Դեմքերի առկայությունը, և թե ինչպես Մի էությունը և Մի զորությունը կարող է դրսևորվել նույն էության Երեք Դեմքերի միջոցով: Աստվածաշնչի առաջին նախադասությունն ասում է. **«Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»** (Ծննդ. 1. 1): Եբրայերեն ձեռագրերում չնայած «ստեղծեց» բայը եզակի թվով է, սակայն «Աստված» բառը, եբրայերենում՝ «Էլոհիմը», հոգնակի թիվ է ցույց տալիս: Այս համարը վկայում է, որ չնայած Աստված Մեկ է, սակայն Իր մեջ հոգնակիություն է կրում: Այս առնչությամբ Պողոս առաքյալն ասում է, որ Աստված (Հայրը) Քրիստոսով **«ստեղծեց տիեզերքը»** (Եբր. 1.2) և, Որդու մասին խոսքը շարունակելով, նշում է. **«Դո՛ւ, Տե՛ր, ի սկզբանե երկիրը հիմնեցիր»** (Եբր.1. 10): Մեկ ուրիշ տեղ ասում է, թե **«նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է և ինչ որ՝ երկրի վրա»** (Կողոս. 1. 16): Ուրեմն, եթե **«ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»**, ապա ամեն բան ստեղծող Քրիստոսը չէր կարող այս խոսքից դուրս լինել: Միաժամանակ Սուրբ Հոգին է արարչագործությանը մասնակցել. **«Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա»** (Ծննդ. 1.2):

«Էլոհիմ» բառը օգտագործվում է Ծննդոց գրքի այլ հատվածներում ևս: Բազմաթիվ են դեպքերը, երբ «Աստված» ենթակայի դիմաց դրված է հոգնակի թիվ ցույց տվող դերանուն և ստորոգյալ, որը ևս վկայում է Մի Աստվածության տարբեր Դեմքերի մասին, օրինակ. **«Աստված ասաց. Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ»** (Ծննդ. 1.26): **«Տեր Աստված ասաց. Ահա**

**Ադամ դարձավ մեզ նման մեկը»** (Ծննդ. 3. 22): **«Մեզ նման մեկը»** արտահայտությունը այստեղ ևս հաստատում է, որ չնայած Աստված Մեկ է, սակայն Իր մեջ հոգնակիություն ունի: Մեկ այլ տեղ Ծննդոց գրքում նույն կերպ Աստված ասում է. **«Արի իջնենք և խառնենք նրանց լեզուն»** (Ծննդ. 11. 7):

Ուրեմն, ինչպե՞ս հասկանանք, որ Աստված Մեկ է, բայց և Երեք Դեմք. սա խորհուրդ է, որին հավատքով պետք է մոտենանք: Այն հասկանալու համար, նախ պետք է Աստծո էությունը տեսնել, որն արարածներիս տկար մտքից ահավոր վեր բան է: Որքան որ մարդու համար անհասկանալի է Աստծու անսկզբությունը և ամենակարողությունը, այնքան էլ անընկալելի է Երրորդությունը: Եւ եթե այս պարագայում լոկ մտքով առաջնորդվենք, կամ թե միտքը հոգուց առաջ անցնի, ապա կսայթաքենք: Քանի որ Աստված հոգի է, ապա հոգևոր բաները հոգով միայն կարելի է քննել և ճանաչել: Ինչպես Սուրբ Գրքում ասված է, թե Աստված **«անմատույց լույսի մեջ է բնակված»**, և Նրա ամբողջական փառքը ծածկված է մեր աչքերից, այնպես էլ՝ Երրորդության խորհուրդը՝ Նա միայն գիտի Իրեն:

Պատմում են, թե եկեղեցու մեծ աստվածաբաններից սբ. Օգոստինոսը, երբ, ծովափին քայլելով, Երրորդության էությունն էր մտքով աշխատում ըմբռնել, տեսնում է մի երեխայի, որը փորձում էր ծովի ջուրը տեղափոխել ոչ հեռու եղած մի փոսի մեջ: Օգոստինոսը, իմանալով, որ երեխան ծովի ամբողջ ջուրն է ցանկանում այնտեղ տեղավորել, ժպտալով նրան ասում է, թե չի կարող իր նպատակին հասնել: Այդ ժամանակ երեխան պատասխանում է, որ ավելի հեշտ է ծովի ամբողջ ջուրը այդ փոսորակը լցնել, քան մարդկային մտքով ըմբռնել Աստծու էությունն ու Երրորդության խորհուրդը: Այս խոսքերը ասելուց հետո երեխան աներևույթ եղավ, և նա հրեշտակ էր՝ Աստծուց ուղարկված:

Արդ, հավատքով ընդունենք Ամենասուրբ Երրորդությունը և մտքով փորձենք փոքր-ինչ մերձենալ այդ անմատչելի



խորհրդին: Եվ չնայած անպատշաճ է Երրորդության խորհուրդը բնության մեջ եղած երևույթների համեմատությամբ ներկայացնել, բայց մեր մտքի համար որոշ չափով պատկերավոր դարձնելու համար փորձենք նման օրինակներ բերել, որում ցույց տրվի մեկի երեք լինելը, մեկ էությունը՝ երեք դրսևորումներով:

Վերցնենք արևը. այն գունդ է, որից լույս է ծնվում և ջերմություն բխում: Լույսով ճանաչում ենք արևը, իսկ ջերմությամբ՝ «հաղորդվում» նրա հետ: Այդպես և Աստվածության Երրորդությունն է՝ Հայրը (որի խորհրդապատկերը արևն է) անծին Էությունն է, իսկ Հորից ծնված Որդին մեզ համար Աստծու շնորհն է (արևի լույսը), որպեսզի խավարում չմնանք և մեր մեղքերը Նրանով քավենք, և Հորից բխած Սուրբ Հոգով (արևի ջերմությունը) հաղորդվում ենք Աստվածության հետ: Սրա պես էլ Պողոս առաքյալն Երրորդության մասին ասում է. **«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն»** (Բ Կորնթ. 13.13):

Արևի բերված օրինակում Աստվածային Երրորդության հետ տարբերությունը նրանում է, որ եթե արևից ծնված լույսը և նրանից բխած ջերմությունը արևի լոկ հատկանիշներն են, նրա բնության դրսևորումներն են, ապա Աստվածության պարագայում Նրանք Անձեր են: Ինչպես Աստծու Խոսքը (Բանը՝ Քրիստոսը), այնպես էլ Աստծո Հոգին, առանձին Դեմքեր են: Ինչպես արևի լույսը տեսնելով և արևի ջերմությունը զգալով, ասում ենք՝ «արևն եմ տեսնում, և արևն է ինձ տաքացնում», նմանապես Որդուն տեսնելով և Սուրբ Հոգուն զգալով, Աստծու ներկայությունն ենք դա համարում և միասնական Երրորդությանը երկրպագում:

Ոմանք ասում են, որ եթե Որդին ծնված է, իսկ Սուրբ Հոգին՝ բխած, ապա պետք է ժամանակի մեջ սկիզբ ունենան և արարած լինեն: Այստեղ դարձյալ հիշենք արևի օրինակը. եթե արևը անժամանակ առաջ գոյություն ունեցած լիներ, ապա անժամանակորեն պետք է թե՛ լույս ծնած

լիներ և թե՛ ջերմություն բխած լիներ: Այդպես էլ՝ Ամենակալ Հայրը ի սկզբանե է Որդուն ծնել, նաև ամենասկզբից է Հոգին Նրանից բխել. չի եղել ժամանակ, գեթ ակնթարթ, որ Որդին և Հոգին եղած չլինեն: Ի սկզբանե Աստվածությունը այս կերպ է միայն եղել՝ Հոր հետ՝ Որդով և Սուրբ Հոգով: Զուր չէ, որ սբ. Հովհաննեսը Որդու մասին ասում է. **«Սկզբից էր Բանը և Բանն Աստծու մոտ էր, Բանը Աստված էր»** (Հովհ. 1. 1):

Եվ քանի որ Որդին Խոսքն է (Բանը), ապա առօրյա կյանքից մի համեմատություն ևս բերենք: Պատկերացնենք, թե միտքը Հայրն է, խոսքը՝ Որդին, իսկ խոսքի գործադրումը՝ Սուրբ Հոգին: Նման օրինակով, եթե թագավորը մի քաղաք կառուցելու հրաման տալու միտք (Հայր Աստծու խորհրդապատկերը) ունենա, և միտքը խոսքով (Որդու խորհրդապատկերը) չարտահայտվի, ապա թագավորական այդ հրամանը չի գործադրվի (Սուրբ Հոգու խորհրդապատկերը): Այստեղ առանձնանում են երեք տարրեր՝ միտքը, խոսքը և գործադրումը (շինարարությունը), որոնք բոլորը մեկ են նրանով, որ քաղաքն են իրենց մեջ ամփոփում: Նույն կերպ էլ Աստծու Երրորդության մեջ Երեքն էլ Աստվածությունն են իրենց մեջ ամփոփում, սակայն տարբեր խնդիրներ իրականացնելու պատճառով զանազանություն ունեն (որով և տարբեր Դեմքեր են ճանաչվում), որպեսզի Աստծու մեկ իշխանությունում ամեն ինչ ներդաշնակ և ամբողջական լինի: Այսպիսով, Երեք Դեմքերը, առանձնաբար միավորվելով Մեկ ամբողջական Աստվածությունում, ըստ էության, Մեկ են, մեկ կամքով, մեկ զորությամբ:

Խոսելով Հոր և Որդու համագոյության մասին, հարկ է նաև նշել, թե ինչպես խոսքը մտքի պատկերն է, այնպես էլ Որդին Հայր Աստծու պատկերն է, ինչպես Պողոս առաքյալն է ասում, թե Քրիստոսը **«աներևույթ Աստծու պատկերն է»** (Բ Կորնթ. 4. 4), **«բուն պատկերը նրա էության»** (Եբր. 1.3): Հիսուսն էլ ասում է. **«Ես և իմ Հայրը մի ենք»** (Հովհ. 10.30): Հետևաբար, թեև Երկուսն են, սակայն միաժամանակ Մի են: Այս ամենի մասին ուղղակիորեն վկայում է



Հովհաննես առաքյալը, խոսելով Հոր և Որդու մասին, նա շարունակում է. **«Դո՛ւք ևս կբնակվեք Որդու և Հոր մէջ: Եվ այս է այն խոստումը, որ Նա խոստացավ մեզ, այն է հավիտենական կյանքը»** (Ա Հովհ. 2. 24,25): Հիշատակելով Որդուն և Հորը, այնուհետև ավետարանիչն օգտագործում է **«Նա»** դերանունը, որով շեշտում է Երկուսի Մեկությունը, միաժամանակ հայտնում, որ հավատացյալները պետք է բնակվեն Որդու և Հոր մեջ, բայց և անկասկած՝ Մեկ միասնական Աստծու մեջ:

Ինչ վերաբերում է Սուրբ Հոգուն, ապա Նա մեզ այնպես է ներկայանում, որ կարծես թե Երրորդությունում Նա սպասավորողի դերն է կատարում: Զկորցնելով Իր Աստվածային փառքն ու պատիվը, Նա մեզ ցույց է տալիս Հոր և Որդու փառքը: Եվ քանի որ Աստված Մեկ է, ապա Հոր և Որդու փառքը հավասարապես Սուրբ Հոգունն է: Սրանով ոչ թե Երրորդության Անձերի միջև դիրքերի և բնությունների տարբերություն է առաջ գալիս, այլ ապահովվում է Մի Աստվածության ամբողջական զորությունը և իշխանությունը, որով համահավասար Երեքն են փառավորվում:

Գործք առաքելոցում, երբ ներկայացվում է Ստեփանոսի քարկոծման պահը, Եհովայի վկաները, այդ հատվածը մեջբերելով, ասում են, թե Ստեփանոսը միայն Աստծուն (Հորը) և Քրիստոսին է տեսնում, և եթե Սուրբ Հոգին անձ է, ապա ինչո՞ւ Ստեփանոսը նրան չի տեսնում... Հարցն այն է, որ այդ պահին, որպեսզի Աստվածային Երկու Անձերի փառքը Ստեփանոսին ցույց տրվեր, ապա դա պետք է կատարեր Երրորդության երրորդ Դեմքը: Եթե մինչ այդ Քրիստոսն էր մարդկանց պատմում Հոր փառքի մասին, ապա Նրա համբարձվելուց հետո Մխիթարիչ Սուրբ Հոգին դա պետք է աներ: Եւ Ստեփանոսի քարկոծման ժամանակ մենք՝ Սուրբ Գիրքն ընթերցողներս ենք Երրորդության Երեք Անձերին տեսնում, որով և Աստծու փառքն է հայտնվում. **«Իսկ Նա լի էր Սուրբ Հոգով. նայեց երկինք ու տեսավ Աստծու փառքը և Հիսուսին, որ կանգնած էր Աստծու աջ կողմը»** (Գործք 7.55):

Թե ինչպես երեքի մեջ, մեկով՝ երկուսին ենք տեսնում,

օրինակ կարող է հանդիսանալ վառվող մոմը: Երբ սենյակում մոմ է վառվում, ապա տեսնում ենք երկու բան՝ մոմը և մոմի կրակի փունջը: Սակայն շատերս չենք խորհում, որ սենյակի ամբողջ տարածությունը, որը ողողված է լույսի ֆոտոններով (տարածության մեջ լուսավորությունը առաջ է գալիս լույսի աղբյուրից բխած տարրական էներգակիր մասնիկներ ֆոտոններից), դա է ստեղծում լուսավորությունը (այն Ս. Հոգու խորհրդապատկերն է), որի ներգործությամբ տեսնում ենք մոմը (Հայր Աստծու խորհրդապատկերը) և նրանից ծնված լուսե, կրակե փունջը (Որդու խորհրդապատկերը), որը կարելի է ասել, թե մոմի զորությունն է, ինչպես որ Քրիստոսն է Աստծու զորությունը (Ա Կորնթ. 1.24): Այսպիսով, չնայած էությունից բխած, զորությամբ անցած, ներգործությունը առանձին պատկեր իրենից չի կառուցում, սակայն նրանով ենք ճանաչում մոմը (էությունը) և դրա կրակե փունջը (զորությունը): Մոմի մեծությունը որոշում է կրակե փնջի զորությունը, իսկ վերջինովս էլ՝ լուսային ֆոտոնների ներգործությունը: Նույնն է պարագան նաև Աստվածության մեջ. Հոր էությունից է Որդու Աստվածային զորությունը և Սուրբ Հոգու Աստվածային ներգործությունը: Ուրեմն, երկու դեպքում էլ մեկով երկուսն է ցույց տրվում, բայց մենք ճանաչում ենք երեքին:

Ինչպես մոմի օրինակում, ներգործությունը էության և զորության մեջ է, միաժամանակ և դրանց կրողն է, նույն կերպ էլ Աստվածային Երրորդությունում է. որտեղ Հայրը, այնտեղ՝ Աստված, որտեղ Որդին, այնտեղ Աստվածային զորությունն է, որտեղ Սուրբ Հոգին, այնտեղ Աստծու ներկայությունն ու ներգործությունն է: Այդ նկատառումով էլ, երբ Սուրբ Գրքում առանձնաբար ասվում է, թե Աստված (Հայրը), մեկ ուրիշ տեղ՝ Քրիստոս և այլ տեղ՝ Սուրբ Հոգին պետք է բնակվի հավատացյալների մեջ, մենք, միևնույն է, հասկանում ենք, որ նույն Մեկ Աստվածությունը պետք է քրիստոնյաների մեջ ներկա լինի:

Ավարտելով մեր խոսքը Ամենասուրբ Երրորդության մասին, նորից նշենք, որ Աստծու կողմից արարված



աշխարհում ոչինչ, ըստ էության, համեմատելի չէ Աստվածային Երրորդության հետ: Նա նման չէ մարդկային մեկ կամ երեք անձի և ո՛չ էլ բնական որևէ պատկերի (թեկուզ փորձեցինք որոշ զուգահեռներ անցկացնել): Այն խորհուրդ խորհրդոց է, որ պահանջում է անտեսանելիի մեջ անտեսանելիին հավատալ: Նրան մենք ճանաչում ենք ոչ թե մտավոր ճիգերով, այլ Աստծուն հոգևոր պաշտամունք մատուցելով, ոչ թե տրամաբանությամբ, այլ հոգևոր կյանքի փորձառությամբ: Եւ քրիստոնեության ողջ պատմությունն է վկայում, թե որտեղ Հոր, Որդու և Սուրբ Հոգու պաշտամունք է եղել, այնտեղ Աստվածությունն է ներկա եղել: Այդ դեպքում է, որ Աստված հավատացյալ ժողովրդի մեջ գործել է բազմապիսի պարգևներով, զորություններով և նշաններով, ինչի մասին կանխապես ասված էր Սուրբ Գրքում (մասնավորապես՝ Պողոս առաքյալի թղթերում):

Վերջում ավելացնենք, որ Սուրբ Երրորդության դավանությունը վերջնականորեն բանաձևվել է 4-րդ դարում՝ առաջին և երկրորդ Տիեզերաժողովներում, և տարբեր ժամանակներում Քրիստոնեական Եկեղեցու Հայրերը հիմնավորել և պաշտպանել են այն: Սբ. Գրիգոր Լուսավորիչը Մի Աստվածության մասին ասում է, որ մենք պետք է **«ճանաչենք ամենակալ Հորը և համազոր Որդուն և համագործ Հոգուն»**: Իսկ Կյուրեղ Երուսաղեմցին այդ անմատչելի խորհրդի մասին նշում է. **«Ո՛չ հրեշտակները, ո՛չ զորությունները չեն կարող տեսնել այս ահև խորհրդի խորքերը: Այն, ինչ վեր է մարդկային բնության սահմաններից, ճանաչվում է հավատքով»**: Գրիգոր Աստվածաբանն էլ ուսուցանում է այսպես. **«Մի Աստվածություն և զորություն՝ Երեքի միությամբ, և Երեքը միասին վերցրած՝ առանց բաժանելու, ո՛չ բնությունների և էությունների առավելությամբ, ո՛չ աճող կամ նվազող գերազանցությամբ և կամ ենթակայությամբ»** («Գանձասար» հանդես, 1992թ., Ա, էջ 119-123): Իսկ սբ. Աթանաս Ալեքսանդրացու խոսքը, որ ժամանակին ուղղված էր Որդու և Սուրբ Հոգու Աստվածությունը ժխտողներին, այսօր հարկ է, որ լսեն նաև Եհո-

*վայի վկաները.* **«Եթե Բանի մասին ուղիղ խորհեին, ողջախոհաբար կխորհեին նաև Հոգու մասին, որ Հորից է ելնում, և Իր՝ Որդու էությամբ, Նրա միջոցով բաշխվում է աշակերտներին և բոլորին, ովքեր Նրան հավատում են: Եվ այսպիսով, մոլորվածները ողջախոհապես Հոր հավատքը նույնպես չունեն»:** *Պողոսը, սա սովորեցնելով, գրեց.* ***«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ բոլորիդ հետ լինի»:*** *Քանզի տրված շնորհներն ու պարգևները Երրորդությամբ են բաշխվում. Հորից՝ Որդու միջոցով՝ Սուրբ Հոգով, քանի որ ինչպես Հորից է տրվում շնորհը Որդու միջոցով, նույնպես և պարգևների հաղորդակցությունը մեզ հետ լինում է Սուրբ Հոգով, քանզի, Նրա հետ հաղորդվելով, ստանում ենք Հոր սերը, Որդու շնորհները և Իր իսկ՝ Սուրբ Հոգու հաղորդությունը:*

## Գլուխ 2
## ՔՐԻՍՏՈՍ՝ ԱՍՏՎԱԾ

*Քրիստոսի Աստվածության շուրջ առաջին վեճերը սկիզբ առան 4-րդ դարի սկզբից: Ի հայտ եկավ Արիոսի վարդապետությունը, ըստ որի՝ Որդին Հորից տարբերվող այլ էություն և բնություն ունի. Որդին արարած է, և Նրա ու Հոր միջև ժամանակային տարբերություն գոյություն ունի: Արիոսի ուսմունքը հերքվեց 325թ.՝ Նիկիո առաջին Տիեզերաժողովում: Եկեղեցու հայրերը, հաստատելով Քրիստոսի Աստվածությունը, Որդու մասին բանաձևեցին.* ***«Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց. ծնունդ և ոչ՝ արարած: Նույն Դեմքը՝ Հոր բնությունից, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա»:***

*Այս հարցի շուրջ ավելի քան 1500 տարի գրեթե հակառակություններ չեղան, սակայն 19-րդ դարի վերջերին ԱՄՆ-ում ստեղծված «Եհովայի վկաներ» կազմակերպությունը սկսեց քարոզել, թե Աստված մեկ է՝ Եհովան է, իսկ Քրիստոսը, Աստվածությունից դուրս, երկնքում այլ հոգեղեն արարած է: Եհովայի վկաների մոլորությունը այնքան մեծ է, որ նրանք Քրիստոսին նույնիսկ մինչև հրեշտակների դասն են իջեցնում՝ Նրան համարելով Միքայել հրեշտակապետը.* «Աստվածաշունչը Միքայելը կը մատնանշէ որպես Հիսուս Քրիստոսը» («Քու թագաւորութիւնը գայ)», *1984թ., էջ 34): Մեկ այլ տեղ, Քրիստոսին արարած ներկայացնելով, գրում են.* «Իր (Եհովայի) առաջին ստեղծագործութիւնն էր Որդի մը... անոր միջոցով ուրիշ որդիներ ալ ստեղծվեցան» («Միացած՝ միակ ճշմարիտ Աստուծո պաշտամունքին մէջ» 1988թ., էջ 184): *Որոշ դեպքերում Եհովայի վկաները ընդունում են, որ Քրիստոսը Աստված է, ինչպես որ Հովհաննեսի Ավետարանի սկզբում է գրված՝* ***«Բանը Աստված էր»****, սակայն ավելացնում են, որ Սուրբ Գրքում այլոց ևս «աստված» անունն է տրված.* «Սակայն չէ՞ որ Հիսուսը Աստվածաշնչում անվանվում է «աստված», կհարցնի ինչ որ մեկը: Դա ճիշտ է, սակայն չէ՞ որ սատանան էլ է անվանվում աստված» («Դու կարող ես հավերժ ապրել երկրային դրախտում» 1993թ. , էջ 40): *Ուրեմն, Եհովայի վկաները, Քրիստոսին դասելով նման աստվածների շարքին, վերոհիշյալ համարում (Հովհ. 1.1), «Աստված» բառը փոքրատառով են գրում:*

### *1. Եհովայի վկաների ոչ հիմնավոր վկայությունների մասին*

*Եհովականները Քրիստոսի Աստվածությունը մերժելու համար նախ ասում են, որ Քրիստոսը երբեք չի ասել, թե Ինքն Աստված է և հետո, Սուրբ Գրքից որոշ մեջբերումներ կատարելով և այն կտրելով Աստվածաշնչի մյուս մասերից, ջանում են այն համարեցնել իրենց մտահանգումներին: Ներկայացնենք այդ մեջբերումներից առավել առանցքայինները.*

*Հիսուսը աշակերտներին ասում է.* ***«Եթէ ինձ սիրեիք, ապա ուրախ կլինեիք, որ ասացի՝ Հոր մոտ եմ գնում. որով-***

***հետև իմ Հայրը մեծ է, քան ես»*** *(Հովհ. 14.28): Եհովականները, Հիսուսի այս խոսքերը ցուցանելով, նշում են, որ դրանով իբր ցույց է տրվում Քրիստոսի ցածր լինելը՝ Հայր Աստծու համեմատ: Եւ իսկապես, Իր երկրային ծառայության ընթացքում Քրիստոսը Հոր ծառան էր: Սակայն նույն հատվածում Հիսուսը, ասելով, որ Իրեն տեսնողը Հորն է տեսել (Հովհ. 14. 8,9), միանգամից շեշտում է Որդու և Հոր միությունը և բնությամբ մեկ լինելը:*

*Այսպիսով, Քրիստոսը, լինելով Ս. Երրորդության Անձերից մեկը, մարդանալով, Իրեն դրեց Հայր Աստծու իշխանության տակ, Իր Անձը ցածրացրեց հանուն մարդկության փրկության: Եհովայի վկաները դա անընդունելի են համարում, ասելով.* «Ինչպե՞ս կկարողանար ամենակարող աստվածության որևէ մի մասը՝ Հայրը, Որդին կամ Սուրբ Հոգին, երբևէ հրեշտակներից ցածրացած լինել» («Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», 1995թ., էջ 15): *Սակայն ավելի լավ է տեսնենք, թե Պողոս առաքյալն ինչպես է դա ներկայացնում.* ***«Բայց տեսնում ենք փառքով և պատվով Հիսուսին, որ մի փոքր հրեշտակներից ավելի ցածր էր դասվել մահվան չարչարանքները հանձն առնելու պատճառով»*** *(Եբր. 2.9):* ***«Ձեզանից ամեն մեկը թող խորհի այն, ինչ որ կա Քրիստոս Հիսուսի մեջ, որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձն ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչև մահ»*** *(Փիլիպ. 2.58): Եթե այստեղ ասվում է, որ Հիսուսը հափշտակություն չհամարեց Աստծուն հավասար լինելը, կնշանակի՝ մինչև մարդանալը, Նա այդ հավասարությունը ունեցել է: Հակառակ դեպքում անհասկանալի կլինի նաև Հիսուսի՝ Հորն ուղղված խոսքը, թե՝* ***«փառավորի՛ր ինձ, Հայր, քեզ մոտ եղող այն փառքով, որ ունեի քեզ մոտ՝ նախքան աշխարհի լինելը»*** *(Հովհ. 17.5): Քանի որ միակ փառքն Աստծունն է, ապա, Հոր հետ Մեկ եղող, Քրիստոսի փառքը նաև Աստծու փառքն էր:*



*Ուրեմն, Քրիստոս, ցածրանալով, եղավ մարդու Որդի, որպեսզի մենք, Նրանով բարձրանալով, դառնանք Աստծու որդիներ: Մեկ այլ տեղ առաքյալն այս մասին ասում է.* ***«...ձեզ համար աղքատացավ, նա, որ հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք»*** *(Բ Կորնթ. 8.9): Այսպիսով, Իր երկրային ծառայության ընթացքում Քրիստոս, չնայած Իր մեջ Աստվածային բնությունը ուներ, սակայն, մարդկային մարմնի մեջ լինելով, կրեց նաև մարդկային բնության տկարությունները, ի վերջո, խաչի չարչարանքներով մահվան բաժակը խմեց:*

*Ահա այսպես, Աստվածային փրկագործության խորհրդում, որին մասնակից էր Աստված և մարդ, մեր առջև ներկայանում է մտքով անըմբռնելի ևս մի խորհուրդ՝ Անչարչարելին չարչարվեց, Ամենազորեղը տկարություն կրեց, բայց և Աստվածությունը չտուժեց: Ինչպես որ, եթե ոսկին ցեխի մեջ հայտնվի, միևնույն է, իր արժանիքները չի կորցնի: Բանի մարդեղացումը նման է նաև նրան, որ արևի ճառագայթը (Քրիստոսը) չնայած արևի (Հոր) մոտ ունի արևի ջերմությունը (Հոր դիրքը և բնությունը), սակայն մարդկանց կյանքի համար այն բավականին նվազած է երկիր հասնում (Քրիստոսի մարդանալով՝ Իր դիրքի ցածրացումը), բայց և բնությունը նույնն է պահում:*

*Ահա այսպես, Եհովայի վկաները, վկայակոչելով Քրիստոսի՝ երկրում գտնված ժամանակ Իր պահվածքը (մասնավորապես՝ Հորը աղոթելը, սատանայից փորձվելը, չարչարվելը և այլն), որում տեսնում ենք մարդ-Քրիստոսին, ասում են, որ եթե Քրիստոս Աստված լիներ, ինչպե՞ս կարող էր նման վիճակներում հայտնվել: Եհովականների համար անըմբռնելի է, որ Արարիչը, Իր կողմից արարված մարդկանց փրկության համար, հենց Ինքը կարող էր, ցածրանալով, զրկանքներ կրել և տառապել, մարդկանց փրկության գինը, Իր իսկ սրբության և արդարության առջև, Ինքը՝ Ամենակալը, պետք է տար և ոչ թե ուրիշից դա պահանջեր: Զուր չէ, որ Սուրբ Գրքում ասված է, որ Աստված Իր Եկեղեցին Իր արյունով է ստացել.* ***«Զգո՛ւյշ եղեք***

**ինքներդ ձեր և ամբողջ հոտի համար, որի վրայ Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Աստծո ժողովրդին, որին Նա փրկեց իր արյունով»** (Գործք 20.28):

Կրկին վերադառնանք Հիսուսի՝ Իր աշակերտներին ուղղված վերը հիշատակված այն խոսքին, թե որ **«եթէ ինձ սիրեիք, ապա ուրախ կլինեիք, որ ասացի՝ Հոր մոտ եմ գնում. որովհետև իմ Հայրը մեծ է, քան ես»**: Քրիստոս, չնայած Իրեն սիրող աշակերտներին լքելու էր, բայց աշակերտները դրանում ուրախ պետք է լինեին: Հարց է ծագում՝ ինչո՞ւ... Անշուշտ, միայն մի բանի համար՝ Քրիստոս, որ երկրի վրա ցածրացել էր, երկինք համբարձվելուց հետո Հոր մեծությունը պետք է ընդուներ: Այս համարին այլ մեկնություն տալու դեպքում Հիսուսի խոսքի առաջին մասը ոչ մի կերպ չի կարող կապակցվել երկրորդ մասի հետ (սկսած **«որովհետև»** բառից), այսինքն՝ Հիսուսի գնալու համար՝ աշակերտների ուրախանալու և Հոր ավելի մեծ լինելու միջև այլ առնչություն չի կարող լինել:

Այս մեկնակետով են հերքվում նաև եհովականների՝ Քրիստոսի Աստվածությունը ժխտող մյուս փորձերը:

Մյուս անհիմն վկայությունները, որ առավել հաճախ մեջբերվում են «Դիտարաններում», հետևյալն են. երբ Հիսուսին հարցնում են, թե երբ է Իր երկրորդ գալուստը լինելու, Նա պատասխանում է, որ միայն Հայրը գիտի այդ ժամանակի մասին (Մարկ. 13.32), մյուս դեպքում էլ՝ Հիսուսը Իր ձերբակալումից առաջ Հորն է աղոթում (Ղուկ. 22.42):

Երբ Հիսուսը ասում էր, թե միայն Հայր Աստծուն է հայտնի Իր երկրորդ գալստյան ժամը, ապա պետք է նկատի ունենալ, որ Հիսուսը, Իր երկրային կյանքի ընթացքում, լինելով Հոր ծառա և մարդու Որդի, Ինքն Իրեն որոշ սահմանափակումների շրջանակում դրեց, որդիական հնազանդության մեջ մնաց, չօգտվեց Աստվածային Իր բոլոր մենաշնորհներից և մարդկանց առջև, որպես Ամենակալ, հանդես չեկավ: Հակառակ դեպքում, Նա երկրի վրա չէր կարող մարդու տեսքով հանդես գալ, որպես Հորը հնազանդվող ծառա, որին սպասում էր գողգոթյան խաչը:



Իսկ երբ Հիսուսն աղոթում էր, ապա մարդ Քրիստոսն էր, որ, ունենալով մարդկային բնության տկարությունները, գողգոթյան տառապանքների սպասումով, ծնկի էր եկել: Եւ եթե Քրիստոսը ճշմարտապես Իր հոգում տագնապ և հուզում չապրեր, մարմնով ցավ և տառապանք չկրեր, ապա Քրիստոսի մարդանալու և մեզ համար Նրա զոհ լինելու խորհուրդը կիմաստազրկվեր: Միաժամանակ Հիսուսը, որպես կատարյալ մարդ, ճշմարիտ աստվածպաշտության, Աստծու կամքին ամբողջությամբ հնազանդվելու օրինակը բոլորիս ցույց տվեց:

Եհովայի վկաները Քրիստոսի արարած լինելը պատճառաբանում են նաև Պողոս առաքյալի՝ Հիսուսի մասին ասված **«ամեն ստեղծվածներից առաջ ծնված»** (Կողոս. 1. 15), արտահայտությունով: Սակայն սա չի նշանակում, որ Հիսուսը Աստծու առաջին ստեղծագործությունն է, այլ քանի որ Որդի է՝ հավիտենական ծնունդով, բոլոր արարածական ծնունդներից առաջ եղավ, քանի որ ի սկզբանե Ինքը կար: Վերոնշյալ խոսքից անմիջապես հետո առաքյալն ասում է. **«Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքումն է և ինչ որ՝ երկրի վրա»** (Կողոս. 1.16): Սա նշանակում է, որ Հայր Աստծու էությունից բոլոր հավիտյաններից առաջ ծնված Նրա Որդով է ամեն բան արարվել: Հետևապես, աստվածանարգություն է բոլորի Արարչին արարած համարել:

Նույն կերպ եհովականները վկայակոչում են Հայտնության գրքի՝ **«Աստծու արարածների Սկիզբը»** (Հայտ. 3.14), խոսքը: Բայց սրանով ևս փաստվում է, որ Հիսուսը ոչ թե առաջին արարածն է, այլ բոլոր արարած էակների Ստեղծիչը ու կյանք տվողը, Սկիզբը և Աղբյուրը:

## 2. Քրիստոսի Աստվածությունը ուղղակիորեն ներկայացնող սուրբգրային վկայությունները

Նոր Կտակարանում Հիսուսը մեկ անգամ չէ, որ ուղղակիորեն անվանվում է Աստված: Պողոս առաքյալը նշում է.

**«Եվ հայտնապես մեծ է Աստվածպաշտության խորհուրդը, որ Աստված հայտնվեցավ մարմնով»** (Ա Տիմ. 3.16): **«Նրանցից են նահապետները, նրանցից է նաև Քրիստոս՝ ըստ մարմնի. և նա է բոլորի վրա հավիտյանս օրհնյալ Աստված. ամեն»** (Հռոմ. 9.5): **«Իսկ Որդու մասին ասում է. Աստված, Քո աթոռը հավիտյանս հավիտենից է… դրա համար Աստվա՛ծ, քո Աստվածը օծեց քեզ, ուրախության յուղով»** (Եբր.1.8,9): Եթե Հայրը Որդուն անվանում է Աստված, ապա մենք առավել ևս չպետք է վարանենք Որդուն Աստված կոչելուց:

Տիտոսին ուղղված թղթում էլ Պողոս առաքյալը Փրկիչ, Աստված և Քրիստոս անուններն ու կոչումները համապատասխանեցնում և նույնացնում է. **«…որ մեր Փրկչի՝ Աստծո վարդապետությունը ամեն ինչում զարդարեն»** (Տիտ.2.10): **«Ակնդետ սպասենք երանելի հույսին և փառքի հայտնությանը մեծն Աստծու և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի»** (Տիտ. 2.13):

Գործք առաքելոցում առ Հիսուս հավատքը նույնացվում է առ Աստված եղած հավատքի հետ. **«Եվ նրանք ասացին. Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես դու և քո ամբողջ տունը»** (Գործք 16.31): **«Եվ նրանց բերելով իր տունը, նրանց առաջ սեղան դրեց և իր ամբողջ տնով ուրախացավ Աստծուն հավատացած լինելու համար»** (Գործք 16.34):

Հովհաննես առաքյալն իր հերթին ևս շեշտում է Քրիստոսի՝ ճշմարիտ Աստված լինելը. **«…և մենք Ճշմարտի՝ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ ենք. որովհետև Նա՛ է ճշմարիտ Աստված և հավիտենական կյանք»** (Ա Հովհ. 5.20): Եհովականները այս համարի վերաբերյալ նշում են, թե «Աստված և հավիտենական կյանք» խոսքերը Հայր Աստծուն են վերաբերում, սակայն նկատի ունենանք, որ Հովհաննես ավետարանիչը մյուս դեպքերում «հավիտենական կյանք» արտահայտության կողքին Քրիստոսի անունն է միշտ հիշատակում:



### Քրիստոսի Աստվածությունը հաստատող մարգարեությունները

Եսայի մարգարեն, մինչ Հիսուսի մարդանալը, հայտնել է Նրա Աստված լինելու մասին. **«…մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի. Նա պիտի կոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված…»** (Ես. 9. 6): Մատթեոսի ավետարանում, որտեղ խոսվում է Քրիստոսի ծննդյան մասին, գրված է. **«Եվ այս ամենը եղավ, որպեսզի կատարվի, ինչ որ Տիրոջ կողմից ասվել էր Եսայի մարգարեի բերանով. Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում է Աստված մեզ հետ»** (Մատթ. 1.22-23):

## 3. Քրիստոս չի ժխտում Իր Աստված լինելը

Հիսուսը նախատվեց հրեաների կողմից, քանզի Իրեն Աստծուն հավասար Անձ ներկայացրեց. **«Դրա համար հրեաները առավել ևս ուզում էին սպանել Նրան, որովհետև ոչ միայն չէր պահում շաբաթը, այլ Աստծուն կոչում էր իր Հայրը, իր անձն Աստծուն հավասար էր դասում»** (Հովհ. 5.18): **«Բարի գործի համար քեզ չենք քարկոծում, այլ հայհոյության համար և նրա համար, որ դու մարդ ես, բայց ինքդ քեզ Աստծո տեղ ես դնում»** (Հովհ. 10.33): Այսպիսով, Հիսուսը հրեաներին երկընտրանքի առջև կանգնեցրեց. նրանք պետք է Հիսուսին ընդունեին որպես Աստված և խոնարհվեին Նրա առաջ կամ համարեին Աստծո անունը անարգող և մահվան դատապարտեին: Իսկ Թովմասը հարություն Հիսուսին տեսնելուց հետո այլևս չտարակուսեց, որ Նա Աստվածն է. **«Թովմասը պատասխան տվեց ու նրան ասաց. Տե՛ր իմ և Աստված իմ»** (Հովհ. 20.28): Եթե Հիսուսը Ինքն Իրեն Աստված չհամարեր, մի՞թե Նա չէր հանդիմանի Թովմասին՝ Իրեն Աստված ասելու համար, քանզի Տերը Եսայի մարգարեի միջոցով բացահայտ ասում է. **«Ես եմ Տեր Աստվածը, և չկա մեկ ուրիշը»** (Ես. 44.5):

## 4. Եհովա և Քրիստոս

### Աստծու անունները Հին Կտակարանում

Հանրահայտ է, որ Հին Կտակարանը գրվել է եբրայերեն, և Հին Կտակարանի հրեական ձեռագրերում Աստված տարբեր անուններով է կոչվում. դրանք Աստծու էությունն են արտահայտում և բնութագրում Նրա Անձը: Նմանապես Նոր Կտակարանում **«Քրիստոս»** անունը նշանակում է կոչում. հունարենից (որով գրվել է Նոր Կտակարանը) թարգմանված, այն նշանակում է **Օծյալ:**

Աստվածաշնչի Ծննդոց գրքի սկզբում Աստծու անունը ավելի շատ **«Էլոհիմ»** է հիշատակված: Ինչպես վերը արդեն նշվել է, այն հոգնակի թիվ է ցուցանում և արտահայտում է Արարչի հատկանիշների ամբողջությունը: Միևնույն ժամանակ **«Էլոհիմ»** անվան հետ բայի եզակի թվով գործածումը, ընդգծում է Աստվածության միասնությունը: Ծննդոց գրքի այլ հատվածներում (Ծննդ. 17-րդ գլ.) Աստծու անունը **«Էլ-Շադայ»** է նշված, որը Տիրոջը ներկայացնում է որպես պարգևատու և շնորհատու Անձ: Աստված նաև **«Ադոնայ»** անունով է հիշատակվում. այն ավելի շատ արտահայտում է դիրք և հեղինակություն: Իսկ **«Էլյոն»** անունը իր մեջ Բարձրյալի գաղափարն է պարունակում:

Սակայն Աստծու ամենատարածված անունը Հին Կտակարանի հնագույն ձեռագրերում **«ԵՀՎՀ»**-ն է: Եբրայերենում այն կապվում է «լինել» բառի հետ և ցուցանում է Աստծու ինքնագոյությունը: Այլ կերպ ասած՝ Աստված Նա է, **Ով** (կա) **Է** (առաջին դեմքով ասած՝ **ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ**), Որով և ամեն ինչ գոյություն ունի:

Այսպիսով, **«ԵՀՎՀ»**-ն կենդանի Աստված է, կյանքի աղբյուր, ի տարբերություն հեթանոսական աստվածների, որոնք գոյություն չունեն իրենց երկրպագողների երևակայությունից դուրս:

Երբ քրիստոնյաները սկսեցին օգտվել եբրայերեն գրված Հին Կտակարանի գրքերից, թարգմանիչները Աստծու բոլոր



այս անունների փոխարեն գրեցին՝ **«Աստված»** կամ **«Տեր»**: Որոշ դեպքերում բացառություն կազմեց **«ԵՀՎՀ»**-ն (ըստ հնչողության՝ **Յահվե** կամ **Եհովա**): Որպես Հին Կտակարանում առավել հաճախ հանդիպող անուն, թարգմանիչներն այս անունը ոչ թե թարգմանեցին, այլ, ըստ հրեական հնչողության, գրեցին իրենց այբուբենի տառերով: Հետևապես, Եհովան ոչ թե Աստծու միակ անունն է, ինչպես եհովականներն են պնդում, այլ Հին Կտակարանում հանդիպող Աստծուն բնորոշող անունների մեջ հրեական հնչողությամբ պահպանված անունն է:

***

Անդրադառնալով հինկտակարանյան **«ԵՀՎՀ»**- Եհովա անվանը, նշենք, որ երբ Մովսեսը Աստծուց հարցնում է Նրա անունը, Տերը նրան պատասխանում է. **«ԵՍ ԵՄ որ եմ: Եվ ավելացրեց. Այսպես կասես իսրայելացիներին. որ ԵՄ-ը (Էն) առաքեց ինձ ձեզ մոտ»** (Ելք 3.14):

Այսպիսով, **«ԵՍ ԵՄ»**-ը և «**Է**»-ն համազոր է **Յահվե** (Եհովա) անվանը: Եվ Նոր Կտակարանում Քրիստոսը բազմիցս այդ կոչումը Ինքն Իրեն է վերագրում, դիմելով հրեաներին, Նա ասում է. **«Երբ մարդու Որդուն բարձրացնեք, այն ժամանակ պիտի իմանաք, թե ԵՍ ԵՄ. և ես ինքս ինձ ոչինչ չեմ անում»** (Հովհ. 8.28): **«Հիսուս նրանց ասաց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ԵՍ Ե՛Մ նախքան Աբրահամի լինելը: Եվ նրանք քարեր վերցրեցին, որ Նրա վրա գցեն»** (Հովհ. 8.58, 59): Այս խոսքերը լսելուց հետո հրեաները շատ լավ հասկացան, որ Հիսուսը Աստծո Եհովա անունն է Իրեն վերագրում, դրա համար էլ ցանկացան Նրան քարկոծել:

Ուշագրավ է, որ Հայտնությունում ևս Քրիստոսը **«ԵՄ»**, **«Է»** անունն է կրում.

**«Ահա Նա գալիս է ամպերով, և Նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը, նաև նրանք, որ խոցեցին Նրան. և երկրի բոլոր ազգերը պիտի ողբան Նրա վրա: Այո՛, Ամեն: Ես եմ Ալֆան և Օմեղան. ասում է Տեր Աստվածը, Նա, որ Է և որ էր և որ գալու է. Ամենակալը»** (Հայտն. 1.7, 8):

## 5. Աստծու մասին ասվածը նաև Քրիստոսին է վերաբերում

Սուրբ Գրքում բազմաթիվ են դեպքերը, երբ Աստծուն ցուցանող արտահայտությունները նույնությամբ կրկնվում են՝ մատնանշելով Քրիստոսին: Այսպես՝ Աստված Եսայի մարգարեի միջոցով ասում է. **«Անապատում կանչողի ձայնն է. պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը»** (Ես. Խ 40.3): Մինչ Հիսուսի աշխարհ գալը ով այս տողերը կարդար, անշուշտ, կհասկանար, թե այստեղ «Տեր» բառը Աստծուն է վերաբերում: Սակայն, երբ այս մարգարեությունը Հովհաննես Մկրտչով իրականացավ, ինչպես ինքն է ասում. **«Ես եմ անապատում կանչողի ձայնը. հարթեցե՛ք Տիրոջ ճանապարհը, ինչպէս Եսայի մարգարեն ասաց»** (Հովհ. 1.23), ապա ակնհայտ է դառնում, **որ «անապատում կանչողի ձայնով»** Քրիստոսի ճանապարհը պետք է պատրաստվեր:

Իսկ Զաքարիա մարգարեի միջոցով Աստված ասում է. **«... և նրանք պիտի նայեն ինձ, որին խոցեցին և սուգ պիտի անեն նրա վրա»** (Զաք. 12.10): Նկատենք, որ Աստված խոցվողի համար ասում է և՛ **«ինձ»**, և՛ **«նրան»**, որով ցույց է տրվում Աստվածության մեջ տարբեր Անձերի առկայությունը: Բոլորիս համար պարզ է, որ այս տողերը գրված են Աստծու Որդու մասին, ինչպես որ Հովհաննես ավետարանիչն է մեզ հիշեցնում (Հովհ. 19.17):

Հին Կտակարանում Աստված ասում է, որ Ինքն է մարդկանց սրտերը քննողը. **«Ես՝ Տերս, քննում եմ սրտերը և փորձում երիկամները»** (Երեմ. 17.10): Իսկ Հայտնությունում Քրիստոսն ասում է, որ եկեղեցիները պետք է իմանան, թե այդ խոսքերը Իրեն են վերաբերում. **«Այսպես է ասում Աստծո Որդին»** (Հայտ. Բ 18), **«... բոլոր եկեղեցիները պիտի իմանան, որ ե՛ս եմ, որ զննում եմ երիկամներն ու սրտերը»** (Հայտ. 2.23):

Հին ուխտում Աստծու մեծ և ահեղ օրվա մասին գրված է. **«Արեգակը կխավարի, և լուսինը արյուն կդառնա Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ»** (Հովել 2. 31): Նոր Կտակարանում տեսնում ենք, որ այս արտահայտությունը Աստծու Որդու երկրորդ գալստյանն է վերաբերում. **«...և արեգակը սև դարձավ... և լուսինն արյունի պես եղավ»** (Հայտ. 6.12,13): **«Բայց այն օրերին, այդ նեղությունից հետո, արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա... Եվ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զորությունով և բազում փառքով»** (Մարկ. 13.2426):

Բացի այդ, Հին Կտակարանում գրված է, որ այդ օրը Աստված կրակով պետք է գա. **«Ահա գալու է Աստված ինչպես կրակ... քանզի համայն երկիրը պիտի դատվի Տիրոջ կրակով»** (Ես. 66. 15-16): Իսկ Նոր Կտակարանում հայտարարվում է, թե այդ օրը Քրիստո՛սը պետք է կրակով հայտնվի. «...**երբ Տեր Հիսուսը հայտնվի երկնքից՝ իր հրեշտակների զորքով՝ կրակի բոցով վրեժ առնելու նրանցից, որոնք Աստծուն չեն ճանաչում»** (Բ Թես. 1.7,8): Պետրոս առաքյալը, խոսելով Քրիստոսի հանկարծակի գալստյան մասին, ասում է. **«...սպասելով և հասնել ջանալով Տիրոջ օրվա գալստյան, երբ հրավառ երկինքը պիտի չքանա, և տարերքը հրկիզվելով պիտի հալվի»** (Բ Պետ. 3.12):

Տերը Եսայի մարգարեի միջոցով ասում է, որ միակ Աստծու առջև բոլորը պետք է խոնարհվեն. **«Ես եմ Աստվածը, ինձանից բացի ուրիշը չկա... ամեն ծունկ ինձ է խոնարհվելու»** (Ես. 45.22-23): Սակայն Նոր Կտակարանում դարձյալ տեսնում ենք, որ նույնը Հիսուսի մասին է ասված. **«Որ Հիսուսի անունով խոնարհվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների»** (Փիլիպ. 2.10):

Հիշենք նաև, թե ինչ է ասում Հիսուսը, երբ մոտենում է Երուսաղեմին. **«Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ կոտորում էիր մարգարեներին և քարկոծում քեզ մոտ ուղարկվածներին. քանի՛ անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ, բայց չկամեցաք»** (Մատթ. 23.37): Կնշանակի՝ հինկտակարանային Աստվածը, որ մարգարեներ էր ուղարկում՝ հրեաներին դարձի բերելու, Քրիստոսն էր. Հակառակ դեպքում Նա

չէր ասի՝ **«կամեցա քո մանուկներին հավաքել»**, այլ՝ «Հայրը կամ Աստված կամեցավ»: Ուրեմն, եթե չհավատանք, որ Քրիստոսն է Աստվածը (Եհովա-ԵՍ ԵՄ-ը), մեր մեղքերի մեջ կմեռնենք, ինչպես որ դա Ինքն է ասում. **«Բայց ասացի ձեզ, որ ձեր մեղքերի մեջ կմեռնեք. արդարև, եթե չհավատաք, որ ԵՍ ԵՄ, կմեռնեք ձեր մեղքերի մեջ: Նրան ասացին՝ ո՞վ ես դու: Հիսուս նրանց ասաց. Նա, որ սկզբից ևեթ ձեզ հետ խոսում էր»** (Հովհ. 8.24,25): **«Դու ո՞վ ես»** հարցին Հիսուսի նման պատասխանը միանշանակ կերպով վկայում է, որ ամենասկզբից Սուրբ Գրքում մարգարեների միջոցով Քրիստոսն է խոսում, որը Հայր Աստծու հետ Մի է, Որը և Եհովան է, քանզի Հին ուխտում Եհովա Աստվածն է ամենուր մարգարեների միջոցով խոսում:

## 6. Քրիստոսը և Հայր Աստվածը Մի են

Քրիստոսը ավելի բացահայտ Իրեն ներկայացրեց՝ հաստատելով վերոհիշյալը, Նա ասում է. **«Ես և Հայրը մի ենք»** (Հովհ.10.30): Հիսուսը միանշանակ հայտարարում էր, որ Ինքը և Հայր Աստվածը Մի անբաժանելի էություն ու ամբողջություն են և Իրեն տեսնողը Հայր Աստծուն էլ է տեսնում. **«Եթե ինձ ճանաչեիք, ապա կճանաչեիք և իմ Հորը. այսուհետև կճանաչեք նրան. և տեսել եք նրան: Փիլիպպոսը Նրան ասաց. Տե՛ր, Հորը մեզ ցո՛ւյց տուր, և այդ բավական է մեզ: Հիսուս Նրան ասաց. Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպո՛ս, և ինձ չճանաչեցի՞ր. ով ինձ տեսավ, Հորը տեսավ. իսկ դու ինչպե՞ս ես ասում, թե՝ Հորը ցո՛ւյց տուր մեզ»** (Հովհ. 14.79): Հիսուսը նաև ասում է. **«Ամեն ինչ որ Հայրն ունի, իմն է»** (Հովհ. 16.15): **«Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ տվել է նրա ձեռքը»** (Հովհ. 3.35):

Հայր Աստծու և Որդի Աստծու Մեկությունը արտահայտվում է նաև նրանով, որ Աստվածաշնչում շատ տեղերում **«Հոր և Որդուց»** հետո դրվող դերանունը եզակի թվով է գործածված, օրինակ. **«Եվ լեռներին ասում էին՝ ընկե՛ք մեր վրա, և բլուրներին՝ թե՝ ծածկեցե՛ք մեզ աթոռի վրա Նստողի երեսից և Գառան բարկությունից. որովհետև**



**նրա բարկության մեծ օրը եկել է, և ո՞վ կարող է կանգնել նրա առաջ»** (Հայտն. 6. 16,17): Այսպիսով, բարկության օրը թե՛ Հորն է և թե՛ Որդունը:

Հոր և Որդու Մեկությունը դրսևորվում է նաև Նրանց միակամությամբ: Օրինակ, երբ Հայրը, մարդկանց հանդեպ Իր սիրուց ելնելով, աշխարհ ուղարկեց Որդուն, տեսնում ենք, որ դա միաժամանակ Քրիստոսի սիրո դրսևորումն էր. **«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց...»** (Հովհ. 16.3): **«...(Քրիստոս) որ մեզ սիրեց և արձակեց մեր մեղքերի կապանքները իր արյամբ»** (Հայտն. 1.5):

## 7. Քրիստոս՝ Արարիչ Աստված

Սուրբ Գրքում Տերը հանդես է գալիս որպես Արարիչ Աստված. **«Ի սկզբանէ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»** (Ծննդ. 1.1): Աշխարհի արարումը մի եզակի մենաշնորհ է, որը լոկ Աստծուց է բխել: Ոչ մի արարած չի կարող արարել, որովհետև արարելու համար անսահման, այսինքն՝ Աստվածային զորություն է պահանջվում: Միայն Աստված է, որ կարող է ոչնչից որևիցե բան ստեղծել: Եվ, ինչպես վերը արդեն նշել ենք, Սուրբ Գիրքը Քրիստոսին Արարիչ Աստված է ներկայացնում:

Հովհաննեսի Ավետարանը սկսվում է նրանով, որ նախ խոսվում է Հոր և Որդու (Բանի) միության մասին և հետո՝ որ Որդին Աստված է, և ամեն ինչ Նրանով է ստեղծվել. **«Սկզբից էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր... Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրա չեղավ ոչինչ, ինչ որ եղել է»** (Հովհ. 1.1,3): Պողոս առաքյալն այս առումով ասում է. **«Նրանով ամեն ինչ ստեղծվեց ինչ որ երկնքումն է և ինչ որ երկրի վրա է... ամեն ինչ նրանով և նրա համար ստեղծվեց...»** (Կողոս. 1.16): Եբրայեցիներին ուղղված թղթում էլ առաքյալը Քրիստոսի մասին ասում է. **«Դո՛ւ, Տե՛ր, սկզբից երկիրը հիմնեցիր, և երկինքները քո ձեռքի գործն են»** (Եբր. 1.10): Արդ, եթե ամեն ինչ Քրիստոսով է ստեղծվել և մինչ օրս մնացել հաստատուն, և եթե Նա

Աստված չէ, ապա Աստծու գործը տիեզերքում ուրիշ ո՞րը պետք է լինի: Հետեվապես՝ հակառակը պետք է մտածենք. **«...ով ամեն բան արարեց՝ Աստված է»** (Եբր. 3.4): Պատահական չէ նաև, որ Պողոս առաքյալը Աստծուն փառաբանելիս Քրիստոսի մասին վերը ասված խոսքերը նույնությամբ կրկնում է. **«Որովհետև նրանից, նրանով և նրա համար է ամեն բան. նրան փա՛ռք հավիտյանս. ամեն»** (Հռոմ. 11.36):

## 8. Քրիստոս ընդունել է երկրպագություն և մարդկանց մեղքերին թողություն տվել

Չնայած Աստված ասում է՝ **«իմ պատիվը ուրիշին չեմ տա»** (Ես. 42. 8) և միայն Բարձրյալին պետք է երկրպագել, սակայն Ինքը Քրիստոս երկրպագություն է ընդունել մարդկանցից: Երբ աշակերտները տեսնում են Հիսուսին ծովի ալիքների վրայով քայլելիս, Նրան երկրպագում են (Մատթ. 14.33): Իսկ երբ հարություն առած Քրիստոսը նրանց հայտնվեց **«նրանք մոտենալով՝ նրա ոտքերին փարվեցին ու երկրպագեցին նրան»** (Մատթ. 28.9):

Պողոս առաքյալը, խոսելով Քրիստոսի մասին, սաղմոսներից հիշատակում է հետևյալը. **«Թող երկրպագեն նրան Աստծո բոլոր հրեշտակները»** (Եբր. 1.6): Հիսուսն այդ առումով ասում է. **«Որ ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը: Ով Որդուն չի պատվում, չի պատվում և Հորը»** (Հովհ. 5.22-23): Եթե Քրիստոսը Իր անձը չհավասարեցներ Հայր Աստծուն, ինչպե՞ս կարող էր նման խոսքեր ասել, մանավանդ, եթե Աստված ասում է, որ **«իմ պատիվը ուրիշին չեմ տա»** (Ես. 42. 8):

Այս ամենին հակառակ են Եհովայի վկաները, որոնք քարոզում են, թե Քրիստոսին ո՛չ պետք է երկրպագել և ո՛չ էլ աղոթել («Դիտարան» 15 դեկտեմբեր 1994թ. , էջ 23):

***

Աստծու եզակիությունը դրսևորվում է նաև նրանով, որ միայն Նա կարող է մարդկանց մեղքերը և հանցանքները ներել: Ելք գրքում Աստծու մասին գրված է. **«Որ հազարների ողորմություն ես անում, որ անօրենություն՝ հանցանք և մեղք ես ներում»**: Եվ երբ Հիսուսը մարդկանց մեղքերին թողություն էր տալիս, հրեա դպիրները Հիսուսի խոսքերը աստվածանարգություն համարեցին. նրանց մտքով չանցավ, որ Հիսուսը հենց մարմնավորված Աստվածն է. **«Հիսուսն էլ նրանց հավատքը տեսնելով, ասաց անդամալույծին. Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են: Օրենսգետներից մի քանիսը, որ նստած էին այնտեղ, իրենց մտքում խորհում էին. Այս ի՞նչ է խոսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերին թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված»** (Մարկ. 2.57):

Քրիստոս մարդկանց մեղքերը ներեց, որովհետև մեղքը հանցանք է Աստծու նկատմամբ, և այդ մեղքն էլ Իր դեմ էր ուղղված, և Ինքն էլ, Աստված լինելով, Իր Աստվածային իշխանությամբ ներեց այդ մեղքերը:

Հիշատակման է արժանի նաև այն պահը, երբ Ստեփանոսին քարկոծում են, նա ասում է. «Տեր Հիսո՛ւս, ընդունիր իմ հոգին» (Գործք 7.59): Մի՞թե Աստծուց բացի որևէ մեկին կարելի է ավանդել հոգին: (Ժողովող 12.7

## 9. Քրիստոս՝ Աստվածային բոլոր կոչումների կրող

Ինչպես մարդկանց մեջ, ծնողից ծնված որևէ անձ կրում է ծնողի բոլոր մարդկային հատկանիշները (զգայություններ, մտածողություն, հիշողություն, զգացմունքներ և այլն), նմանապես Հայր Աստծուց անժամանակ ծնված (ոչ մարդկային ծնունդի պես) Միածին Որդին էլ աստվածային բոլոր կոչումների և հատկանիշների կրող է: Ինչպես մարդուց ծնվածն է ճշմարիտ մարդ, այնպես էլ Աստծուց ծնվածն է ճշմարիտ Աստված: Ամեն բան իր հատկանիշներով է իր էությունը ձեռք բերում՝ մարդը մարդ է ճանաչվում իր մարդկային հատկանիշներով, այդպես էլ Աստված Աստված է ճանաչվում Իր Աստվածային հատկանիշներով: Եվ եթե ուշադիր կարդանք Աստվածաշունչը, ապա կհամոզվենք, որ Քրիստոս կրում է Աստծուն բնորոշող բոլոր

կոչումները և հատկանիշները: Ուրեմն, ըստ Ավետարանի պատգամի, պատվենք Որդուն, ինչպես Հորը (Հովհ. 5. 23), ինչից և հրաժարվում են Եհովայի վկաները: Մարդկային փոխհարաբերություններում իր որդուն սիրող ծնողը երբեք չի նեղսրտի, եթե այն մեծ հարգանքը և պատիվը, որ ինքն ունի մարդկանց մոտ, նույնը վայելի նաև իր սիրելի որդին. նույն կերպ էլ Աստվածության պարագայում է: Սրա համար է, որ Որդին ասում է. **«Հայրը սիրում է Որդուն, և ամեն ինչ տվել է Նրա ձեռքը»** (Հովհ. 3.35): **«Ամեն ինչ, որ Հայրն ունի, իմն է»** (Հովհ. 16.15): **«Ով ինձ է ատում, ատում է և իմ Հորը»** (Հովհ. 15.23):

## Քրիստոս՝ Տեր և Թագավոր

Ինչպես որ ամենուր՝ Աստված, այնպես էլ Նոր Կտակարանում Քրիստոսը անվանվում է Տեր և Թագավոր: Սաղմոսներում Աստծու մասին ասվում է. **«Ո՞վ է այդ փառքի Թագավորը, զորությունների Տերը՝ նա ինքն է փառքի Թագավորը»** (Սաղմ. 22.10): Հայտնությունում կարդում ենք. **«Ալելուիա՛, որովհետև Ամենակալ Տեր Աստվածը թագավորեց»** (Հայտ. 19. 6): Սակայն այս խոսքերը չեն կարող միաժամանակ Քրիստոսին չվերաբերել, քանի որ Նրա մասին Սուրբ Գիրքը նույնն է ասում. **«Բոլորի Տերը»** (Գործք 10.36), **«Փառքի Տերը»** (Ա Կորնթ. 2.8): Հայտնությունում Հիսուս նույնիսկ կրում է **«Թագավորների Թագավոր»** և **«տերերի Տեր»** (Հայտ. 19.16) տիտղոսը: Ուրեմն, Թագավորը և Տերը ոչ թե երկու տարբեր զորություններ են, այլ Նրանք՝ Հայրը և Որդին, Երկու Դեմքով, Մեկ են՝ միևնույն Մեկ Աստվածության մեջ: Օրինակ, Հայտնությունում գրված է. **«Աշխարհի թագավորությունները մեր Տիրոջը և Նրա Քրիստոսինը եղան և Նա կթագավորի հավիտյանս հավիտենից»** (Հայտ. 11.15): Չնայած այստեղ Երկու Դեմքերի մասին է ասվում, որոնք Թագավորներ են, սակայն այնուհետև օգտագործված է **«Նա կթագավորի»** եզակի թիվ ցույց տվող արտահայտությունը, որով և շեշտվում է Աստվածային Երկու Դեմքերի Մեկ կամքը և Մեկ իշխանությունը:



## Աստծու Որդին՝ Փրկիչ

Հին ուխտում Աստված ներկայացվում է նաև որպես մեր Փրկիչը. **«Ե՛ս եմ Աստված, ինձնից բացի չկա մեկը, որ փրկություն տա»** (Ես. 43.11): Չնայած Աստծուց բացի այլ Փրկիչ չկա, այդուհանդերձ Հովհաննես ավետարանիչն ասում է. **«Եվ գիտենք, որ ճշմարտապես սա է աշխարհի Փրկիչը՝ Քրիստոսը»** (Հովհ. 4. 42): Պետրոս առաքյալը Նրա մասին ասում է. **«Եվ ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա»** (Գործք 4.12): **«Աճեցե՛ք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհովը և գիտությամբ»** (Բ Պետ. 3.18): Եթե Աստծուց դուրս Փրկիչ չկա, ապա Հիսուս Փրկչին պետք է Աստծու մեջ տեսնենք:

## Քրիստոս՝ դատավոր

Ողջ Հին Կտակարանը ներշնչված է այն ոգով, որ Աստված է մարդկանց գերագույն դատավորը: Նոր ուխտով էլ Հիսուսն է այդ կոչումը կրում. **«Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է իր Որդուն»** (Հովհ. 5.22): Հակոբոս առաքյալը Նրան անվանում է միակ Օրենսդիր և Դատավոր (Հակոբ. 4.11): Քրիստոսն է, որ **«պիտի նստի իր փառքի գահի վրա, ու Նրա առաջ պիտի հավաքվեն բոլոր ազգերը, և նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի հովիվ, որ զատում է ոչխարները այծերից»** (Մատթ. 25.32):

Պողոս առաքյալը Քրիստոսի ատյանի մասին, ասում է, որ ամեն մարդ պետք է Աստծուն հաշիվ տա. **«...բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի ատյանի առաջ... ուրեմն մեզանից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշիվ տա Աստծուն»** (Հռոմ. 14. 10-12): Դարավոր լինելու մեջ Հայր Աստծու և Քրիստոսի Մեկ լինելու մասին առաքյալն ավելացնում է. **«Այս բանն եմ վկայել տալիս Աստծո և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին և մեռածներին՝ իր հայտնության օրը, երբ գա իր արքայությամբ»** (Բ.Տիմ.4.1): Ուրեմն, չնայած Դատավոր

Անձերը երկուսն են, սակայն դատողը միաժամանակ Մեկ և միակ Աստվածն է:

### Քրիստոս՝ լույս և հովիվ

Հին Կտակարանում Աստված նաև լույս է կոչվում. **«Տերն է իմ լույսը»** (Սաղմ. 27.1): Հիսուսն Իր մասին եվս նույնն է պնդում. **«Ես եմ աշխարհի լույսը»** (Հովհ. 8.12): Իսկ Հովհաննես առաքյալը Քրիստոսի մասին ասում է. **«Նա էր ճշմարիտ լույսը»** (Հովհ. 1.9): Սրանից չպետք է ենթադրել, որ Քրիստոս և Աստված լույսի տարբեր աղբյուրներ կարող են լինել:

Աստված նաև մեր բարի առաջնորդն է՝ հովիվը մարդկության. **«Տերն է իմ հովիվը»** (Սաղմ. 23.1): Քրիստոս Իր մասին նույնն է ասում. **«Ես եմ լավ հովիվը»** (Հովհ. 10.11): Հիսուսն է, որ արժանավորներին պետք է առաջնորդի դեպի անմահություն. **«Գառը, որ աթոռի մեջտեղում է, պիտի հովվի նրանց ու պիտի առաջնորդի նրանց դեպի կյանքի աղբյուրը կենդանի ջրի»** (Հայտ. 7.17):

## 10. Քրիստոսը՝ Աստծու հիմնական հատկանիշների կրող

### Քրիստոսն ամենուր է

Աստծու ամենակարողությունը արտահայտվում է նաև Նրա ամենուր լինելով: Հիսուսն ասաց, թե **«ուր երկու կամ երեք հոգի իմ անունով հավաքված լինեն, այնտեղ եմ ես, նրանց մեջ»** (Մատթ. 18.20): Պողոս առաքյալը սրան ավելացնում է. **«...չգիտե՞ք ձեր անձերը, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է»** (Բ Կորնթ. 13.5): Միաժամանակ նա մարդկանց մեջ բնակվող Աստծու Հոգին կոչում է Քրիստոսի Հոգի, որով Աստծու և Քրիստոսի միջև տարբերակում չի դնում. **«Բայց դուք մարմնի իշխանության տակ չեք՝ այլ հոգու, եթե Աստծո Հոգին բնակված է ձեր մեջ: Ապա եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա նրան չի պատկանում»** (Հռոմ 8.9): Ուրեմն, ինչպե՞ս կարող է որևիցե մեկը, եթե



ինքը Աստված չէ, գտնվել ամենուրեք և բնակվել բոլոր Իրեն հավատացողների մեջ:

### Քրիստոս՝ հավիտենական, առաջինն ու վերջինը

Աստծուն բնորոշ հատկանիշներից է Նրա հավերժական բնությունը: Միայն Աստված է, որ անսկիզբ և անվերջ է՝ առաջինը և վերջինն է (Ալֆան ու Օմեղան): Եսայի մարգարեի միջոցով Տերը հայտնում է. **«Ես եմ Տերն առաջին, նույնն եմ լինելու և հավիտյան»** (Ես. 41.4): Եսայու մարգարեությունում Քրիստոս ևս անվանվում է **«Հավիտենականության Հայր»** (Ես. 9. 6): Պողոս առաքյալը Որդու մասին ասում է՝ **«որ հավիտյան կատարեալ է»** (Եբր. 7.28), իսկ Հայտնությունում Հիսուսը Հովհաննեսին այսպես է ներկայանում՝ **«Ես եմ Առաջինը և Վերջինը»** (Հայտ. 1.17):

### Աստծու Որդին՝ մեռելներին հարուցանող

Երբ խոսվում է Աստծու մասին, թերահավատ մարդիկ շատ հարցերում համաձայնում են, սակայն մեռելների հարությունը «խելամիտ» բան չեն համարում: Մեռելներին հարուցանելը (խոսքը ոչ թե մի քանի օրվա մեռելների, այլ Քրիստոսի գալստյամբ ննջեցյալ արդարների՝ նոր, անմահական մարմնով կենդանանալու մասին է) Տիրոջ զարմանահրաշ ամենակարողությունն է ցույց տալիս, որը և Նրա մենաշնորհն է: Եվ **«ինչպես որ Հայրը հարություն է տալիս մեռելներին և կենդանացնում է, նույնպես և Որդին կենդանացնում է՝ ում կամենա»** (Հովհ. 5.21): Հիսուս նաև ավելացնում է. **«Իմ մարմինը ուտողը և իմ արյունը խմողը հավիտենական կյանք ունի, և ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ»** (Հովհ. 6.55): **«Ես եմ հարությունը և կյանքը»** (Հովհ. 11.25):

## 11. Ո՞ւմ անունը պետք է տանք, որ փրկվենք

Եհովայի վկաները պնդում են, մարդկանց փրկությունը կապված է Աստծու անվան ճանաչման հետ: Նրանք, մեջ-

բերելով Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված թղթի 10.13 համարը, ասում են. «Ո՞ւմ անունը մենք պետք է կանչենք, որ փրկվենք: Քանի որ Հիսուսին հաճախ Տեր են անվանում, դրանից հետևո՞ւմ է արդյոք, որ Պողոսն այստեղ Հիսուսի մասին է ասել: Ո՛չ, Հռոմ. 10:13-ը ցուցանում է Հովել 2:32 համարը... Հովելը եբրայերեն բնագիր տեքստում ասել է. «Ով կանչի Եհովայի անունը, կփրկվի»: Այո՛, Պողոսը նմանապես նկատի ուներ, որ մենք պետք է Եհովայի անունը կանչենք: Այսպիսով, թեկուզ մենք պետք է հավատանք Հիսուսին, բայց և մեր փրկությունը սերտորեն կապված է Աստծու անվան ճիշտ ճանաչման հետ: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչպես Աստծու անվան հեռացումը հունական գրություններից (Նոր Կտակարան) նպաստել է այն բանին, որ այսօր շատ մարդիկ Հիսուսին շփոթում են Եհովայի հետ: Անկասկած, դա էականորեն նպաստել է Երրորդության ուսմունքի զարգացմանը» («Աստծու անունը կմնա հավիտյան», էջ 26):

Հակառակ եհովականների տեսակետի՝ թե՛ Պողոսի վերոհիշյալ խոսքում և թե՛ Նոր Կտակարանում ամբողջապես մատնանշվում է, թե Քրիստոսի անունով է, որ ունենք փրկություն: Ինչ վերաբերում է Պողոս առաքյալի խոսքին, ապա դրան նախորդող և հաջորդող հատվածները հաստատում են, որ առաքյալի խոսքը Քրիստոսի մասին է: Նա նախ, մեջբերելով Եսայի մարգարեության՝ Հիսուսին վերաբերող մարգարեությունը (Ես. 28.16), նշում է. **«Որովհետև գիրքն ասում է. ամենայն ոք, որ հավատա նրան, չի ամաչելու»** (Հռոմ. 10.11): Այնուհետև Պողոս առաքյալն ավելացնում է. **«Որովհետև ամենայն ոք, որ Տիրոջ անունը կանչի, կփրկվի: Իսկ ինչպե՞ս կանչեն նրան, ում չհավատացին»** (Հռոմ. 10.13-14):

Պետրոս առաքյալը, նկարագրելով Քրիստոսի երկրորդ գալստյանը նախորդող նշանները, ասում է. **«Արեգակը խավար պիտի դառնա, և լուսինը՝ կարմիր, ինչպես արյուն, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ և երևելի օրը: Եվ պիտի լինի այնպէս, որ ամեն ոք, ով որ Տիրոջ անունը կանչի, պիտի**



**փրկվի»** (Գործք 2.20,21):

Նոր Կտակարանի մյուս հատվածներում ևս հավատացյալներին պատգամված է Քրիստոսի անունը կրել, Նրա անվանը հուսալ և Նրա անունը կանչել: Փրկիչն այս մասին ասում է. **«Եվ իմ անվան համար բոլորից պիտի ատվեք»** (Մատթ. 10.22): **«Եվ հեթանոսները հույս պիտի դնեն Նրա անվան վրա»** (Մատթ. 12.21): **«Եվ ամեն ոք, ով որ թողել է տուն կամ եղբայրներ, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ագարակներ իմ անվան համար, հարյուրապատիկ պիտի ստանա և հավիտենական կյանքը պիտի ժառանգի»** (Մատթ.19.29):

Պետրոս առաքյալը Հիսուսի մասին ավելացնում է. **«...որովհետև երկնքի տակ չկա մարդկանց տրված այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկվենք»** (Գործք 4.12): **«Եթե նախատվեք Քրիստոսի անվան համար, երանելի՛ եք»** (Ա Պետ. 4.14): Նա նաև օգտագործում է՝ **«Նրա անվան հավատք»** (Գործք 3.16) արտահայտությունը: Պողոս առաքյալն ասում է. **«...մեռնելու էլ պատրաստ եմ Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար»** (Գործք 21.13), նաև ավելացնում՝ **«...մեր Տեր Հիսուսի անունը կանչում են ամեն տեղ»** (Ա Կորնթ. 1.2): Իսկ Հովհաննես ավետարանիչն իր հերթին վկայում է. **«Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծո որդիներ, նրանց, ովքեր իր անվանը կհավատան»** (Հովհ. 1.12): **«...Որպեսզի հավատաք ու Նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք»** (Հովհ. 20.31): Հայտնությունում էլ Հիսուսը Պերգամոնի եկեղեցուն ասում **է՝ «Իմ անունը պահում ես»** (Հայտ. 2.13), իսկ Եփեսոսի եկեղեցուն հայտնում, թե՝ **«Իմ անվան համար աշխատեցիր»** (Հայտ. 2. 3):

Ուրեմն, Քրիստոսի եկեղեցում Իր անունով պետք է հավաքվենք, ինչպես որ մեր Փրկիչն է պատգամել. **«Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ»** (Մատթ. 18.20): Արդ, եթե Քրիստոսը մեր Փրկիչն է և մեր մեջ է, ապա ինչո՞ւ պետք է երկմտենք Նրա անունը կանչելուց:

## 12. Հոր և Որդու արքայությունը մեկ է

Ըստ Աստվածաշնչի Աստված Երկնային արքայությունը (թագավորությունը) ժառանգելու է Իր ընտրյալներին։ Հիսուսը իր երկրային կյանքի ընթացքում, ավելի շատ քարոզում էր Աստծու արքայությունը և պատվիրեց, որ առ Աստված բարձրացված մեր աղոթքներում ասենք՝ **«քո թագավորությունը թող գա»** (Մատթ. 6.10)։ Եվ չնայած ասված է՝ **«Տիրոջն է թագավորությունը»** (Սաղմ. 23.28), բայց քանի որ Հիսուսն ասաց․ **«Ամեն ինչ, որ Հայրն ունի, իմն է»** (Հովհ. 16.15), ապա երկնային այդ արքայությունը միաժամանակ Որդունն է՝ ինչպես որ Ինքն է ասում․ **«Որ ուտեք և խմեք իմ սեղանի վրա՝ իմ արքայությունում»** (Ղուկ. 22.30)․ **«...մինչև որ չտեսնեն մարդու Որդուն՝ եկած իր արքայությամբ»** (Մատթ. 16 .28)։

Սակայն Եհովայի վկաները չեն ցանկանում Քրիստոսին ընդունել որպես հավիտյանս հավիտենից Թագավոր և ինքնահնար հավելում են կատարում, թե Քրիստոսը պետք է թագավորի միայն Հազարամյա թագավորությունում։ Սուրբ Գիրքը այստեղ նորից հակառակն է փաստում․ **«Եվ նրա (Քրիստոսի) թագավորությունը վախճան չի ունենա»** (Ղուկ. 1.33)․ **«...մուտք պիտի շնորհվի ձեզ դեպի մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը»** (Բ Պետ. 1.11)։

Պողոս առաքյալը ևս, Հին ուխտից՝ Քրիստոսին վերաբերող հատված մեջբերելով, նշում է, որ Նրա աթոռը հավիտենական է. **«Բայց Որդու մասին ասում է․ Աստվա՛ծ, քո աթոռը հավիտյանս հավիտենից է, քո թագավորության գավազանը՝ ուղղության գավազան»** (Եբր. 1.8)։ Ուրեմն, **«Աստծո արքայություն»** և **«Քրիստոսի արքայություն»** արտահայտությունները նույնն են, ինչպես առաքյալն է իր խոսքով հաստատում․ **«...ամեն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսի և Աստծու արքայությունում ժառանգություն չունի»** (Եփես. 5.5)։



## 13. Փրկությունը և հավիտենական կյանքի ժառանգումը՝ Քրիստոսի հավատքով

Աստվածաշունչը վկայում է Տիրոջ այն պատգամը, թե մարդու փրկության, արքայության ժառանգման ճանապարհը առ Աստված հավատքն է։ Եթե ասում ենք՝ հավատք, ապա անմիջապես մտածում ենք, որ մեր այդ հավատքը առ Աստված պետք է լինի, հակառակ դեպքում մենք հավատացյալ չենք կոչվի։ Եվ Նոր ուխտում ավելի հաճախ տեսնում ենք, թե հավիտենական կյանք ունենալու համար մեր հավատքի հայացքը առ Քրիստոս պետք է ուղղվի, որովհետև Նա մեր Տեր Աստվածն է։

Փիլիպպեի բանտապետը կեսգիշերին բանտում կատարված մեծ հրաշքից հետո սարսափահար Պողոսին և Շիղային է դիմում այսպես․ **«ես ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ։ Եվ նրանք ասացին․ Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես...»** (Գործք 16.30-31)։ Այսպիսով, Պողոսը հեթանոս բանտապետին, որը չէր լսել Եհովայի անունը, պատվիրում է հավատալ ոչ թե Եհովային, այլ Հիսուս Քրիստոսին։

Հիսուսը նույնի մասին մեզ ասում է՝ **«Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի»** (Հովհ. 11.25)․ **«որպեսզի, ով նրան հավատում է չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը»** (Հովհ. 3.16)։

Հայտնությունում Հիսուս Պերգամոնի եկեղեցուն ասում է, որ **«իմ հավատքը չուրացար...»** (Հայտ. 2.13)։ Նման բան միայն Աստված Իր եկեղեցուն կարող է ասել։

Նկատենք, որ Պողոս առաքյալի թղթերը հաճախ ավարտվում են ոչ թե Եհովային, այլ՝ Քրիստոսին հիշատակող, փառաբանող խոսքերով, որոշ դեպքերում էլ հանդիպում ենք առ Քրիստոս սիրո հորդորներ, ինչպէս օրինակ՝ եփեսացիներին ուղղված թղթի վերջում է ասում․ **«Շնո՛րհ բոլոր նրանց ովքեր մեր Տեր Հիսուս Քրիստոսին սիրում են անկեղծությամբ։ Ամեն»։** Իսկ կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի վերջում կարդում ենք․ **«Եթե մեկը չի սիրում Տեր Հիսուսին, նզովյալ թող լինի»** (Ա Կորնթ.

16.22): Եթե պատգամվում է Մեկին այսպես հավատալ և սիրել, կնշանակի՝ Նա Աստվածն է, Որի անունն էլ կրեցին Իր հետևորդները՝ սկսած առաքյալներից:

Ուրեմն, մենք էլ հավատանք և սիրենք մեր Փրկիչ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին. Նրան փառք և պատիվ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

## 14. Քրիստոսի Աստվածությունը Հայտնությունում

Սբ. Հովհաննես աստվածաբանի Հայտնությունը Աստվածաշնչի այն թղթերից է, որտեղ Քրիստոսի Աստվածային փառքը առավել բացահայտ է ներկայացված: **«Ահա Նա գալիս է ամպերով, և Նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը, նաև նրանք, որ խոցեցին Նրան. և երկրի բոլոր ազգերը պիտի ողբան Նրա վրա: Այո՛, Ամեն: Ես եմ Ալֆան և Օմեղան. ասում է Տեր Աստվածը, Նա, որ Է և որ ԷՐ և որ գալու է. Ամենակալը»** (Հայտն. 1.7,8): Հայտնության այս հատվածում տեսնում ենք, որ Նա, ով ամպերով պետք է գա (Քրիստոսը)՝ **Ալֆան և Օմեղան, Է-ն** (Ես եմ-ը) և Ամենակալն է. արտահայտություններ, որոնք Աստծուն են միայն վերաբերում:

Հայտնության 4-րդ գլխում կարդում ենք. **«Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, ամենակա՛լ Տեր Աստված, դու որ Էն ես և ես և որ գալու ես: Եվ երբ կենդանիները փառք և պատիվ և գոհություն էին մատուցում աթոռի վրա նստածին՝ որ կենդանի է հավիտյանս հավիտենից, քսանչորս երեցներն ընկնում էին աթոռի վրա նստածի առաջ և երկրպագում հավիտյանս հավիտենից կենդանի եղողին և իրենց պսակները դնում էին աթոռի առաջ ու ասում. Մեր սուրբ Տե՛ր Աստված, արժանի ես ընդունելու փառքը և պատիվ և զորություն»** (Հայտ. 4. 8-11): Եթե ասվում է, որ ամենակարող Աստվածը պետք է գա, ապա կնշանակի՝ խոսքը Քրիստոսի երկրորդ գալստյան մասին է: Բայց քանի որ ոմանք կարող են դա վիճարկել, դրա համար էլ Հայտնու-



թյան մեջբերված հատվածը նույնությամբ կրկնվում է հաջորդ գլխում՝ **«Աստված»** բառը՝ **«Գառով»** փոխարինված: Այսպես, եթե վերը մեջբերված հատվածում քսանչորս երեցները Աստծուն են երկրպագում, ապա այստեղ կարդում ենք. **«Եվ երբ առավ գիրքը, չորս կենդանիներն ու քսանչորս երեցներն ընկան Գառան առաջ»** (Հայտ. 5.8): Եվ եթե Հայտնության 4-րդ գլխում նշված է, թե **«Աստված պետք է ընդունի փառք և պատիվ և զորություն»**, ապա 5-րդ գլխում տեսնում ենք, որ նույնը Քրիստոս Գառան մասին է ասված. **«Նրանք ասում էին բարձր ձայնով. Արժանի է այդ մորթված Գառը ընդունելու մեծություն, զորություն, իմաստություն, պատիվ, փառք և օրհնություն»** (Հայտ. 5. 12):

Հայտնության 21-րդ գլխում գրված է. **«Եվ գահի վրա նստողն ինձ ասաց. Ահա ամեն բան նոր եմ դարձնում: Ապա ինձ ասաց. Գրի՛ր, այս խոսքերը ճշմարիտ և վստահելի են: Դարձյալ ինձ ասաց. Եղավ. ես եմ Ալֆան և Օմեղան, սկիզբը և վերջը. ես ծարավածներին ձրի պիտի տամ կյանքի ջրի աղբյուրից: Ով հաղթի, պիտի ժառանգի այս ամենը. և նրանց համար Աստված պիտի լինեմ, և նրանք ինձ համար պիտի լինեն որդիներ»** (Հայտ. 21. 57): Այս խոսքերի հեղինակը՝ աթոռի վրա նստողը, որ Հովհաննեսին ասաց՝ **«գրիր»**, անշուշտ, Քրիստոսն է՝ Հովհաննեսին հայտնություն տվողը, որն, անկասկած, ըստ Իր խոսքի, արքայությունը ժառանգողների Աստվածն է:

Հայտնության վերջին գլխում կարդում ենք. **«Տեր Աստվածը իր հրեշտակին ուղարկեց իր ծառայի մոտ, ցույց տալու այն, ինչ որ շուտով լինելու է: Ահա շուտով գալիս եմ»** (Հայտ. 22. 6): **«Աստված իր հրեշտակն ուղարկեց»** խոսքը Հիսուսին է վերաբերում, քանի որ մի քանի տող ներքև կարդում ենք. **«Ես՝ Հիսուսը, ուղարկեցի իմ հրեշտակին, որ այս բանը վկայի ձեզ»** (Հայտ. 22.16): Բացի այդ, Հայտ. 22.6 համարում տեսնում ենք, որ Նա, ով շուտով պետք է գա՝ Աստվածն է, որ և Հիսուսն է. **«Ես շուտով գալիս եմ: Ամեն: Եկ, Տեր Հիսուս Քրիստոս»** (Հայտ. 22.20):

## 15. Քրիստոսի Աստվածության ընդունումը առաջին դարերում

Եհովայի վկաները, հակադրվելով Քրիստոսի Աստվածությանը, փորձում են նույնիսկ քրիստոնեության պատմությունը աղավաղել: Նրանք հայտարարում են, թե մինչ 4-րդ դարը Քրիստոսի Աստվածության մասին խոսք չի եղել, և այդ տեսակետը Նիկիո Տիեզերաժողովում ընդունվել է Բյուզանդիայի Կոստանդին կայսրի ճնշմամբ: Սակայն պահպանվել են պատմական տեղեկություններ, որով հաստատվում է առաջին դարերի Եկեղեցու հայրերի և հավատացյալների կողմից Քրիստոսի Աստվածության ընդունումը:

Այսպես՝ Հռոմի եպիսկոպոս Կլիմենտը (մահացել է 101թ.), իր առաջին ուղերձում, Քրիստոսին ներկայացնում է որպես Աստված, Որը, ըստ Մաղաքիայի մարգարեության, պետք է Աստծու Տաճարում հայտնվեր: Պոլիկարպը (ծնվ. 69թ. , մահ. 155թ.) `Զմյուռնիայի եպիսկոպոսը, որը եղել է Հովհաննեսի աշակերտը, փիլիպպեցիներին ուղղված թղթում գրել է՝ **«Հավերժական քահանայապետը՝ Հիսուս Քրիստոս Աստվածը»:**

Իգնատիոսը (մահ. 110թ.)՝ Անտիոքի եկեղեցու եպիսկոպոսը, եփեսացիներին ուղղված թղթում Հիսուսի մասին գրել է՝ **«մեր Աստվածը՝ Հիսուս Քրիստոսը»,**

**«...քանզի Աստված հայտնվեց որպես մարդ»:** Հռոմեացիներին ուղղված ուղերձում Իգնատիոսը դարձյալ օգտագործել է **«Հիսուս Քրիստոսը՝ մեր Աստվածը»** արտահայտությունը:

Հուստինիոս Վկան (111-166), իր «Երկխոսություններ» աշխատության մեջ, նշում է, թե Ծննդոց գրքում այրվող մորենու միջից Մովսեսի հետ խոսողը Քրիստոսն էր: Նա նաև ավելացնում է, թե Հին Կտակարանում հանդիպող **«Աբրահամի, Իսահակի Աստված», «Ես եմ որ եմ»** խոսքերի հեղինակը ևս Քրիստոսն է:

Իրինիոսը, իր՝ «Հերետիկոսների դեմ» աշխատության մեջ, խոսելով Հայր Աստծու մասին, նշում է. **«Նրա հետ միշտ եղել է Որդին և Հոգին, Որոնցով և Նա արարեց աշխարհը, Որոնց էլ Նա դիմեց, ասելով. «Ստեղծենք մարդուն մեր պատկերով և մեր նմանությամբ»:**

Ի դեպ, Եկեղեցու այս հայրերը, որոնք պաշտպանել են Քրիստոսի Աստվածությունը, հերձվածներ չեն անվանվել, հակառակը՝ հերձված անվանվեց Արիոսը, որը Քրիստոսին արարած անվանեց: Այս վկայություններից բացի պահպանվել են նաև տեղեկություններ այն մասին, որ առաջին դարերի քրիստոնյաները Քրիստոսին որպես Աստված են ընդունել և պաշտել: Այսպես՝ Պլինիոս Կրտսերը, 112 թվականին Տրայիանոս կայսերը գրած իր նամակում, Բութանիայում ապրող քրիստոնյաների կենցաղը նկարագրելով, ավելացնում է. **«Իմ հարցաքննությունը ցույց տվեց, որ նրանք որոշված օրերերին, արևը ծագելուց առաջ, հավաքվում են Քրիստոսի համար՝ որպես Աստծու, մի տաղ երգելու»:**

Լուկիանոս Սամոսացին, շուրջ 170թ. գրած իր «Ուխտավորի մահը» գրքում, պախարակելով քրիստոնյաներին, ասում է, թե նրանք **«Աստվածների պաշտամունքը լքեցին և, իբրև Աստված, Պաղեստինում խաչված մի մարդու պաշտեցին... Նրանք (քրիստոնյաները) այս խաչյալին են պաշտում և ապրում են նրա օրենքների համաձայն»:**

2-րդ դարի հայտնի աստվածաբան Տերտուղիանոսը հիշեցնում է Հռոմի կայսր Տիբերիոսի և Պոնտացի Պիղատոսի միջև եղած վեճը. **«Այն օրերին, երբ Քրիստոսի անունը աշխարհ էր մտնում, Տիբերիոսն ինքը վկայություններ ստացավ Քրիստոսի Աստվածության ճշմարտացիության մասին և դրեց այդ հարցը Սենատի քննարկմանը»:**

Այսպիսով, այս վկայությունները ևս փաստում են, որ սկզբից ևեթ Քրիստոս պաշտվել և երկրպագվել է որպես Աստված:

# Գլուխ 3

## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես որ Հիսուսն ասաց. **«Ինձ տեսնողը Հորը տեսավ»** (Հովհ. 14.9), նույնպես էլ Սուրբ Հոգով Հորը և Որդուն ենք տեսնում: Օրինակ, երբ Հին Կտակարանում Աստված խոսում է մարգարեների միջոցով, մենք, ինչպես Հայր Աստծուն ենք տեսնում, այնպես էլ՝ Քրիստոսին (**ի սկզբանե մեզ հետ խոսողը**՝ Հովհ. 8.25) և Սուրբ Հոգուն: Այսպես՝ Նոր Կտակարանում առաքյալները հաճախ մեջբերումներ են անում Հին Կտակարանից և նշում, որ այդ տողերի հեղինակը Սուրբ Հոգին է: Օրինակ՝ Գործք առաքելոցում (21.24,25) ասվում է, որ Եսայու մարգարեության 6.8,9 համարները Սուրբ Հոգու խոսքերն են: Հայտնության գրքում տեսնում ենք, որ ինչ որ Հիսուսը ցույց է տալիս Հովհաննես առաքյալին, միաժամանակ դա Սուրբ Հոգու ներկայացրածն է: Այսպես՝ Հայտնության սկզբում կարդում ենք. **«Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որի միջոցով Աստված ցույց տվեց իր ծառաներին, ինչ որ լինելու է շուտով»**: Իսկ հետո Հովհաննեսն ասում է. **«Եվ ես շուտով Հոգում եղա»** (Հայտ. 4.2):

Երբ Հիսուսը դիմում է Ասիայի յոթ եկեղեցիներին, խոսողը միաժամանակ Սուրբ Հոգին է. **«Գրի՛ր նաև Թիվատիրի եկեղեցու հրեշտակին. Այսպես է ասում Աստծո Որդին...»** (Հայտ. 2.18): Այս հատվածում՝ խոսքի վերջում, գրված է. **«Ով ականջ ունի, թող լսի ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին»** (Հայտ. 2.29):

Ինչպես ոմանց համար դժվարըմբռնելի է Մի Աստվածությունում Քրիստոսի ներկայությունը, նմանապես ոմանք տարակուսում են, թե Սուրբ Հոգին ինչպե՞ս կարող է Անձնավորություն լինել և համարվել Ս. Երրորդության երրորդ Անձը: Բայց ինչպես Աստվածության շատ խորհուրդներ մարդկանց մտքին անմատչելի են, սա ևս դժվա-



րըմբռնելի է: Շատերի համար Հոր և Որդու Անձնավորությունն ավելի դյուրին է ընկալվում այն պատճառով, որ Երրորդության Երկու Անձերը մարդկային անունով են կոչվում (ինչպես որ մարդկանց մեջ հայր և որդի կա) և Նրանց որոշակի պատկերով են տեսնում, իսկ Սուրբ Հոգուն լոկ Աստծու զորություն են դիտում, որը թյուր ընկալում է:

Այսպես, Եհովայի վկաները, հերքելով Սուրբ Հոգու Անձնավորությունը, ասում են. «Անոնք (Հիսուսի աշակերտները) անձո՞վ մը լեցվեցան: Ո՛չ, Աստծո գործոն ուժով լեցվեցան» («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մեջ», 1989թ. , էջ 40): Սուրբ Հոգուն համարելով Աստծու գործուն ուժ՝ նրանք բերում են ազդանշանային շչակի և դրանից արձակված ձայնի օրինակը: Սակայն այդ համեմատությունը ճիշտ չէ այն պատճառով, որ Աստվածության պարագայում Սուրբ Հոգու ներկայության ժամանակ, ասում ենք, որ Աստված՝ իր Անձն է ներկա, և ոչ թե Նրա ուժը: Իսկ որտեղ, որ լսվում է շչակի ձայնը, այնտեղ ամենուր շչակը գտնվել չի կարող:

Պատասխանելով այն հարցին, թե հավատացյալները կարո՞ղ էին լցվել անձնավորությամբ, ասենք, որ այն ենթադրվում է հենց Աստծու Անձի ամենուր լինելուց: Աստվածության հակառակը՝ Սատանան էլ մի անձնավորություն է, որ բնակվում է չար մարդկանց մեջ, ինչպես որ եղավ Հուդայի պարագայում. **«Սատանան էլ մտավ Հուդայի մեջ»** (Ղուկ. 22.3):

Այսպիսով, երբ հավատացյալները Սուրբ Հոգով են լցվում, ըստ Աստծու խոսքի, Աստծու Անձն է նրանցում բնակվում, ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ **«կենդանի Աստծո տաճար եք դուք, ինչպես Աստված ասաց. պիտի բնակվեմ նրանց մեջ»** (Բ Կորնթ. 6.16): Սուրբ Հոգու Անձ լինելը հաստատվում է սուրբգրային շատ այլ վկայություններով ևս: Հիսուսը Սուրբ Հոգու մասին ասում է. **«Եվ ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ»** (Հովհ. 14.16): **«Այլ»** բառը այստեղ ընդգծում է, որ Քրիստոս Իր

պես Անձի նկատի ուներ, Որին Հայրը պետք է ուղարկեր: Հիսուս այնուհետև ավելացնում է. **«Երբ որ գա Նա՝ Ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ. որովհետև ինքն իրենից չի խոսի...»** (Հովհ. 16.13): Պարզ տեսնում ենք, որ Հիսուսն այստեղ խոսում է մի Անձի մասին, որի հետ հավատացյալները պետք է հաղորդակցվեն:

Մեկ այլ հանգամանքում Քրիստոսն ասում է, թե ով Սուրբ Հոգու դեմ խոսի, չպետք է այդ մեղքը նրան ներվի (Մատթ. 12.32): Իսկ երկինք համբարձվելուց առաջ Փրկիչն աշակերտներին ասում է. **«Ուրեմն գնացե՛ք, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերը, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով»** (Մատթ. 28. 19): Եթե Սուրբ Հոգին Հոր մեջ եղող լոկ անդեմ զորություն է, ապա ի՞նչ կարիք կար, որ Հիսուսն Իր այդ կարևոր պատգամում Իր և Հոր անվան հետ անձ չեղողին հիշատակեր:

Պողոս առաքյալը, նույն կերպ, Երեքին համատեղ է հիշատակում. **«Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ, մեր Տեր Հիսուս Քրիստոսով և Հոգու սիրով, մարտակից լինել ինձ, ինձ համար Աստծուն ուղղված աղոթքների մեջ»** (Հռոմ. 15.30):

Պողոսի մյուս թղթերում տեսնում ենք, որ Սուրբ Հոգին կամք ունի. Նա կարող է տրտմել, խոստումներ տալ, խոսել (Գործք 8.29, 10.19, 13.2)՝ հատկանիշներ, որոնք անձին են բնորոշ:

Առաքյալը Սուրբ Հոգու պարգևների մասին նշում է. **«Բայց այս ամենը միևնույն Հոգին է ներգործում, ամեն մեկին բաժանելով ինչպես կամենում է»** (Ա Կորնթ. 12.11): Մեկ այլ տեղ Պողոս առաքյալը գրում է. **«...որպեսզի մենք Սուրբ Հոգու խոստումն ընդունենք հավատքով»** (Գաղատ. 3.14): Գործք առաքելոցում հանդիպում ենք **«հաճելի թվաց Սուրբ Հոգուն»** (Գործք 15.28) արտահայտությանը: Իսկ ստախոս Անանիային Պետրոս առաքյալն ասում է. **«Անանիա՛, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստեիր Սուրբ Հոգուն»** (Գործք 5.3). հետո ավելացնում է՝ **«մարդկանց չստեցիր, այլ Աստծուն»** (Գործք 5.4): Ուրեմն, Հոր և Որդու հետ Աստվածային պատիվ տանք նաև Սուրբ Հոգուն, Որով հաղորդակցվում ենք ամբողջ Աստվածության հետ:



# Գլուխ 4
# ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

Եհովայի վկաները կարծում են, որ ճիշտ չէ մտածել, որ տառացիորեն կատարվելու են Աստվածաշնչի այն խոսքերը, թե Հիսուսը տեսանելիորեն երկնքով երկիր է վերադառնալու: Նրանք պնդում են, որ Քրիստոսը հոգեղեն և անտեսանելի մարմնով աշխարհ է վերադարձել 1914 թվականի հոկտեմբերին՝ կործանելու սատանայի երկրային հաստատությունները, որը պետք է վերջանա Արմագեդոնի պատերազմով, որից հետո էլ երկրի վրա պետք է սկսվի Հազարամյա թագավորության շրջանը: «Երբ Հիսուսը երկինք էր համբարձվում, ասում են Եհովայի վկաները, ամպը ծածկեց նրան և Նա անտեսանելի դարձավ, և քանի որ հրեշտակները այդ ժամանակ աշակերտներին ասացին, թե Քրիստոսը նույն կերպ էլ պետք է վերադառնա, ուրեմն Նրա երկրորդ գալուստը անտեսանելի պետք է լիներ»:

Խոսելով Հիսուսի գալստյան մասին, եհովականներն ավելացնում են. «Գալուստ» բառը թարգմանված է հունարեն «պարուսիա» բառից, և դա նշանակում է «ներկայություն», այսինքն՝ փաստորեն ներկա լինելը: Ուստի երբ «նշանը» տեսնվեր, չէր նշանակի, որ Հիսուսը շուտով գալու է, այլ որ նա արդեն վերադարձել է և ներկա է: Դա կնշանակեր, որ նա սկսել է անտեսանելիորեն իշխել, որպես երկնային թագավոր» («Կապրե՞ս այս աշխարհը»): Այստեղ նրանք միանգամից նշում են Քրիստոսի ներկայության նշանները՝ պատերազմները, երկրաշարժները, սովը և այլն (ինչի մասին, որ Հիսուսը ասել էր աշակերտներին. Մատթ. 24 գլ.), որին և մեր սերունդը ականատես եղավ: Այն հարցին, թե ինչո՞ւ է Քրիստոսը երկիր վերադարձել հենց 1914թ. , եհովականները պատասխանում են, որ այդ տարեթիվն է «ազգերին սահմանված ժամանակի» վերջը, որն իբր թե բացահայտվում է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքայի երազում ցույց տրված, յոթ ժամանակ կտրված եղած, ծառի խորհրդի մեկ-

նությամբ (Դան. 4.10,24, «Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մեջ», 1993թ. , էջ 138-141):

Սակայն Եհովայի վկաների այս մոլորեցնող ուսմունքները ճշմարտության հետ ոչ մի առնչություն չունեն: Սրան հակառակ՝ Քրիստոսի Եկեղեցին ամենասկզբից մինչև այսօր հաստատել է, որ Քրիստոսի երկրորդ գալուստը տեսանելի և բացահայտ պետք է լինի, ինչը բացահայտ ներկայացված է Աստվածաշնչում:

## 1. Քրիստոսի գալուստը՝ տեսանելի, ըստ Իր խոսքի

Հիսուսը, նկատի ունենալով, որ աշխարհ պետք է գային Իր գալստյան մասին սուտ լուրեր տարածող Եհովայի վկաներ և այլ մոլորեցնողներ, ժամանակին ասել է. **«Ապա եթէ ձեզ ասեն՝ ահա անապատի մէջ է, չելնեք կամ թե՝ ահա մառանում է, չհավատաք: Որովհետև ինչպես կայծակը դուրս է գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, մարդու Որդու գալուստը այնպես կլինի»** (Մատթ. 24.26,27):

Իր հանդեպ մեղադրանքներ ներկայացնող հոգևորականներին Հիսուսը պատասխանեց, որ երբ երկրորդ անգամ գա, բոլորը կիմանան, որ Ինքն է Քրիստոսը. **«Քահանայապետը կրկին անգամ նրան հարցեց. Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնյալ Աստծո Որդին: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. Դու ասացիր, թե ես եմ. բայց պիտի տեսնեք մարդու Որդուն՝ ամենազոր Աստծո աջ կողմում նստած և երկնքի ամպերի վրայով եկած»** (Մարկ. 14.61,62): Նույնի մասին Հայտնությունում ասվում է. **«Ահա նա, որ գալու է ամպերով, և նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը»** (Հայտ. 1.7):

Քրիստոսի գալստյան ժամանակ ամբարիշտների վիճակի մասին կարդում ենք. **«Եվ լեռներին ասում էին՝ ընկե՛ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցե՛ք մեզ. որովհետև եկավ նրա բարկության մեծ օրը»** (Հայտն. 6.16,17):

Իսկ եհովականները Քրիստոսի գալստյան և ներկայության մասին գրում են. «Քանի որ այդ փառքին փայլը վնասակար պիտի ըլլայ մարդկային պարզ աչքերուն, ուրեմն Թագավորը մարդոց անտեսանելի պիտի մնա» («Քո Թագավորությունը գա», 1984թ., էջ 110): Անշուշտ, Քրիստոսի հակառակորդները երկնային Թագավորի երեսի լույսից պետք է հալածվեն, սակայն Իր ընտրյալների համար Նա ասում է՝ **«Նրա ծառաները պաշտում էին նրան. Նրանք տեսնում էին նրա դեմքը...»** (Հայտն. 22.3,4):

Հիսուսի խոսքերը հաստատում է Հովհաննես ավետարանիչը, շեշտելով Փրկչի գալստյանը՝ Նրա ակնհայտ ներկայությունը. «Եվ հիմա, որդյակնե՛ր, մնացե՛ք Նրա մեջ, որպեսզի երբ Նա հայտնվի, վստահություն ունենանք, և Նրա գալստյան ժամանակ Նրանից չամանչենք» (Ա Հովհ. 2.28):

## 2. Քրիստոսի գալստյան նշանների մասին

Աստծու խոսքը մեզ ուսուցանում է, որ Հիսուսի երկրորդ անգամ աշխարհ գալը բացահայտ լինելուց բացի, դրան պետք է նախորդեն, ուղեկցեն և հաջորդեն իրադարձություններ, որոնք երբեք չեն կարող աննկատ մնալ:

Նախ նշենք, որ եհովականների կողմից մատնանշվող ներկայության (գալստյան) նշանները վերաբերում են այն ժամանակներին, երբ մենք պետք է իմանանք, որ ոչ թե Քրիստոսն արդեն եկել է, այլ որ գալուստը մոտ է: Ահա, ինչպես է Քրիստոսը դա ներկայացնում. **«Ազգ ազգի դեմ պիտի ելնի և թագավորություն՝ թագավորության վրա. և տեղ-տեղ երկրաշարժեր պիտի լինեն, սով և համաճարակ և խռովություններ. բայց այդ բոլորը սկիզբն է երկնացի»** (Մարկ. 13.8): **«Բայց այդ օրերին, այդ նեղությունից հետո արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա: Եւ աստղերը երկնքից վայր պիտի թափվեն, և երկնքում զորությունները պիտի շարժվեն: Եվ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով: Եվ այն ժամանակ պիտի ուղարկի իր հրեշտակներին ու պիտի հավաքի իր ընտրյալներին չորս կողմից»** (Մարկ. 13.24-27):

Այսպիսով, ակնհայտ է, որ եհովականների հիշատակած **«ներկայության նշանները»** պետք է նախորդեն Քրիստոսի գալստյանը և ոչ թե՝ հաջորդեն: Եվ ի հաստատումն այդ բանի, Հիսուսն անմիջապես ավելացնում է. **«Բայց դուք այդ թզենու՛ց սովորեցեք առակը. հենց որ նրա ոստերը կակղեն և նրա վրա տերև դուրս գա, իմանում եք, որ ամառը մոտ է, նույնպես և դուք. երբ այս բոլորը կատարված տեսնեք, իմացե՛ք որ նա մոտ է, դռների առջև»** (Մարկ. 13.28,29): Հետևաբար, գալստյան նշանները տեսնելով, պետք է գիտենանք, որ գալուստը մոտ է և ոչ թե այն արդեն եղել է: Ինչպե՞ս Քրիստոսի գալուստը 1914 թվականին իրականացած կլիներ, եթե մինչև այսօր ո՛չ արևն ու լուսինն է խավարել և ո՛չ էլ հավատացյալների հափշտակությունն է եղել, ինչի մասին, վերոհիշյալ խոսքում, Հիսուսն ասել էր:

### 3. Հիսուսի գալստյան ժամանակ հավատացյալների հափշտակության և ննջեցյալների հարության մասին

Սուրբ Գիրքը միանշանակ վկայում է, որ Քրիստոսի գալստյան ժամանակ Իր եկեղեցին պետք է երկրից հափշտակվի և միանա Իրեն: Վերը արդեն վկայեցինք Քրիստոսի այն խոսքը, որ Իր գալստյան ժամանակ Նա Իր ընտրյալներին աշխարհի չորս կողմերից պետք է հավաքի (Մարկ. 13.26,27): Իր խոսքն այս մասին շարունակելով, Հիսուսն ասում է, թե ինչպես Նոյի օրերում արդարները վեր բարձրացվեցին ջրի երեսը, նույն կերպ էլ Քրիստոսի գալստյանը փրկվողները պետք է կրակի դատաստանի ենթարկվող երկրից վեր հափշտակվեն. **«Եվ ինչպէս Նոյի օրերն էին, այնպես պիտի լինի մարդու Որդու գալստյանը: Որովետև ինչպես որ ջրհեղեղից առաջ եղած օրերն էին, երբ ուտում էին և խմում, կին էին առնում և մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապանը, ու նրանք բան չիմացան մինչև որ ջրհեղեղն եկավ ու վերցրեց տարավ բոլորին,



այնպես պիտի լինի մարդու Որդու գալստյանը: Այն ժամանակ, եթե դաշտի մեջ երկու հոգի լինեն, մեկը պիտի վերցվի և մյուսը պիտի թողնվի: Եվ եթե երկու կին աղան մի երկանքի վրա, մեկը պիտի վերցվի, և մյուսը պիտի թողնվի: Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտէք, թե ո՛ր ժամին ձեր Տերը կգա»** (Մատթ. 24.3742): Այս խոսքերը նշանակում են, որ Քրիստոսի երկրորդ գալուստը Նոյի ժամանակ պատահած ջրհեղեղից ոչ պակաս շոշափելի պետք է լինի:

Պողոս առաքյալը, գալստյան օրվա մասին խոսելիս, հափշտակության հետ հիշատակում է նաև մեռելների հարությունը. **«Որովհետև Տերն ինքը, ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով պիտի իջնի երկնքից և Քրիստոսով մեռածները առաջինը հարություն պիտի առնեն. ապա և մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք ամպերի վրայից Տիրոջը առաջ օդում և այդպէս մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք»** (Ա Թես. 4.15,16): Առաքյալը այստեղ շատ պարզ ասում է, որ հավատացյալները հափշտակությամբ պետք է Քրիստոսի գալուստը դիմավորեն, ինչը մինչ այսօր չի եղել:

Առաքյալը նույն կերպ ասում է, որ երբ Քրիստոսի գալստյան ժամանակ Աստծո վերջին փողի ձայնը լսվի, կենդանի հավատացյալները պետք է նորոգվեն, իսկ մեռելները՝ հարություն առնեն՝ «պիտի նորոգվենք հանկարծակի՝ մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի և մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության» (Ա Կորնթ. 15.52): Պողոս առաքյալը մեկ այլ տեղ ևս նշում է, որ քրիստոնյաների հարությունը պետք է լինի Քրիստոսի գալստյան ժամանակ. **«Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան՝ յուրաքանչյուրն իր հերթին. նախ՝ Քրիստոս, ապա՝ քրիստոսականները՝ նրա գալստյանը»** (Ա Կորնթ. 15.22-23): Հետևաբար՝ Քրիստոսի գալուստը, հավատացյալների հափշտակությունը, նրանց՝ մարմնով նորոգվելը և մեռելների հարությունը միաժամանակ պետք է լինեն:

### 4. Քրիստոսի գալստյամբ արդարները պետք է արքայությունը ժառանգեն, իսկ ամբարիշտները դատապարտություն կրեն

*Աստվածաշնչում հստակ մատնանշվում է, որ երկրորդ գալստյանը Հիսուսը ողջերին և մեռածներին հատուցելու է ըստ իրենց գործերի՝ արդարները պետք է Իր Թագավորությունը ժառանգեն, իսկ անհավատները՝ կրակե դատաստանի ենթարկվեն: Սրա մասին Հիսուսն ասում է.* ***«Արդ, երբ որ մարդու Որդին գա իր փառքով և բոլոր հրեշտակները՝ իր հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի գահի վրա, և նրա առաջ պիտի հավաքվեն բոլոր ազգերը, և նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի հովիվ, որ զատում է ոչխարները այծերից»*** *(Մատթ. 25.31,32).* ***«...մարդու Որդին գալու է իր Հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին. և այն ժամանակ յուրաքանչյուրին կհատուցի ըստ իր գործերի»*** *(Մատթ. 16.27):*

*Մեկ այլ տեղ Հիսուսն ավելացնում է.* ***«Նույնպես, ինչպես Ղովտի օրով էլ եղավ. ուտում էին, խմում էին, առնում էին ու վաճառում էին, տնկում էին, շինում էին: Եվ այն օրը, երբ Ղովտը Սոդոմից դուրս ելավ, երկնքից կրակ և ծծումբ տեղաց ու բոլորին կորստյան մատնեց: Նույն ձևով է լինելու այն օրն էլ, երբ մարդու Որդին է հայտնվելու»*** *(Ղուկ. 17.28-30):*

*Պողոս առաքյալն այս մասին ասում է՝* ***«իսկ ձեզ՝ նեղություն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տեր Հիսուս հայտնվի երկնքից՝ հրեշտակների զորքով՝ կրակի բոցով վրեժ առնելու նրանցից, որոնք Աստծուն չեն ճանաչում»*** *(Բ Թես. 1.7,8):* ***«Այս բանն եմ վկայել տալիս Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին և մեռածներին՝ իր հայտնության օրը, երբ գա իր թագավորությամբ»*** *(Բ Տիմ. 4.1):*

*Պետրոս առաքյալն այս մասին ասում է.* ***«...սպասելով և հասնել ջանալով Տիրոջ օրվա գալստյան, երբ հրավառ երկինքը պիտի չքանա շառաչյունով և տարրերը, հրով կիզված, պիտի լուծվի»*** *(Բ Պետ. 3.12):*

*Այսպիսով, սուրբգրային այս վկայությունները ևս հաստատում են, որ Քրիստոսի երկրորդ գալուստը անտեսանելի կերպով հնարավոր չէ, որ իրականացած լինի: Այդ մասին եհովականների տարածած ուսմունքը բացահայտ մոլորություն է, որի համար Հիսուսն կանխապես ասաց.* ***«Զգո՛ւյշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի»*** *(Մատթ. 24.4):*

## Գլուխ 5
## ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐՎԱ ՄԱՍԻՆ

*Փրկության և դատապարտության մասին Եհովայի վկաների դավանած ուսմունքը ամբողջովին հակադրվում է Աստծու խոսքին: Այդ մասին նրանք ասում են.*

*1. Չկա և չի լինելու հավիտենական դատապարտության վայր, Աստվածաշնչում օգտագործվող «դժոխք» բառը Սուրբ Գրքի ձեռագրերում եբրայերեն «շեոլն» է, իսկ հունարենում՝ «հադեսը»: Վերջիններս ավելի ճշգրիտ թարգմանվում են «գերեզման», որովհետև մարդիկ ոչինչ չպետք է զգան, իսկ հավիտենական տանջանքների գաղափարը՝ Սատանայի միտքն է:*

*2. Մարդկանց մահով՝ իրենց մեղքերն էլ են մահանում, և մարդ դատվելու է ոչ թե այն գործերով, որ կյանքում է գործել, այլ՝ նրանով, ինչ նա կանի դատաստանի օրը, որը Հազարամյա Թագավորության ժամանակաշրջանն է, երբ բոլոր մարդիկ պետք է հարություն առնեն և երկրորդ անգամ Աստծու առջև գործերով արդարանալու հնարավորություն ձեռք բերեն:*

### Դատապարտության վայրը

*Առաջին հարցի մասին եհովականների գաղափարական առաջնորդները գրում են.* «Հովհաննես առաքյալի տրված տեսիլքի մը մեջ ցույց տրված է որ Հիսուս ի՛նչ տարողու-

թյամբ պիտի գործածե «Հատեսին (դժոխքի) բանալին» մարդկության ի նպաստ։ Հովհաննէս տեսավ որ Հատեսը «կրակի լիճին մեջ ձգվեցավ»։ Ասիկա ի՞նչ կը նշանակե։ Կը նշանակե որ ան կը բնաջնջվի, ան գոյությունէ կը դադրի, քանի որ ամբողջովին կը պարպվի։ Այս կերպով կը տեսնենք որ Եհովայի հավատարիմ երկրպագուները հարուցանելե զատ, Հիսուս ողորմածորեն Հատեսեն կամ Շեոլեն դուրս պիտի բերե նույնիսկ ամբարիշտները։ Ասոնցմե ոչ մեկը դարձեալ մահվան դատապարտվելու համար պիտի հարուցվի։ Աստծո Թագավորության ներքև արդար միջավայրի մը մեջ, անոնց օգնություն պիտի տրվի որպեսզի Եհովայի ճամբաներուն համաձայն ապրին։ Անոնք անհատապես «պիտի դատվին իրենց գործերուն համեմատ», որոնք գործած էին հարուցվելե ետք։ Ուստի վերջնական արդյունքեն դատելով, անոնց հարությունը կրնա «կենաց հարություն» մը ըլլալ եւ ոչ թե անպայմանորեն «դատապարտության հարություն մը» («Միացած՝ միակ ճշմարիտ Աստծո պաշտամունքին մէջ», 1988թ. , էջ 75, 76)։

*Սուրբգրային ճշմարտություններից հեռացած այդ վարդապետությունը հերքելու համար նախ ասենք, որ եհովականների ասած դժոխքի՝ գերեզման լինելը այնքանով է ճիշտ, որքանով դժոխքը Աստվածաշնչում շատ անգամ օգտագործվում է ոչ որպես դատապարտության տեղ, այլ վայր, որտև հոգիները սպասում են Քրիստոսի դատին, որը պետք է լինի Իր գալստյամբ։ Այդ ժամանակ ամեն մարդ, հարություն առնելով, մարմնով պետք է ստանա այն, ինչ գործել է իր երկրային կյանքի ընթացքում։ Այս մասին Փրկիչն ասում է՝* ***«կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան՝ ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար»*** *(Հովհ. 5.28,29)։ Այսինքն՝ վերջին օրը մեռելները պետք է հավիտենական մարմին ստանան և կանգնեն Քրիստոսի ատյանի առաջ, և Նա նրանց երկու մասի պետք է բաժանի։ Հետևապես, եհովականների ասած «հատեսը» (գերեզմանը) ոչ թե դատապարտության վայրն է, այլ ամբարիշտ մեռելների համար հոգիների այն խավար կայանը, որտեղից դատաստանի օրը,* ***«դատաստանի հարությունն»*** *ապրելով, պետք է գցվեն հավիտենական կրակե լիճը։ Հայտնությունում այդ մասին գրված է.* ***«Եվ նա, որի անունը կյանքի գրքում գրված չգտնվեց, կրակի լճի մեջ գցվեց»*** *(Հայտ. 20.15)։*

*Հավիտենական դատապարտության մասին Քրիստոսն ասում է.* ***«Մի՛ վախեցեք նրանից, որ մարմինն են սպանում, և դրանից հետո ավելի բան չեն կարող անել, այլ ցույց կտամ ձեզ, թե ումի՛ց պետք է վախենաք։ Նրանից վախեցե՛ք, ով սպանելուց հետո գեհեն նետելու իշխանություն ունի։ Այո՛, ասում եմ ձեզ նրանի՛ց վախեցեք»*** *(Ղուկ. 12.4,5)։ Եթե, ըստ Եհովայի վկաների, մարդու ամենամեծ դատապարտությունը, մարմնապես մահանալով, ընդհանրապես գոյություն չունենալն է, ապա ինչո՞ւ է Հիսուսը մատնանշում գեհենի սպառնալիքը։ Կամ եթե գեհենը սովորական կրակն է (ինչպես իրենք են ասում), ապա ո՞րն է տարբերությունը Հիսուսի խոսքի առաջին և երկրորդ դեպքի միջև։ Չէ՞ որ այս կյանքում էլ մարդիկ կարող են, մարդկանց դատաստանին ենթարկվելով, կրակով այրվել։*

*Սրա պես մեկ այլ տեղ Հիսուսն աշակերտներին ասումէ, որ այն քաղաքներում, որտեղ իրենց չընդունեն, ապա* ***«սոդոմացիների և գոմորացիների համար ավելի հեշտ պիտի լինի դատաստանի օրը, քան այդ քաղաքի համար»*** *(Մատթ. 10.15)։ Սա նշանակում է, որ սոդոմ գոմորացիների՝ կրակով կործանումից շատ ավելի մեծ պատիժ Աստված կարող է ամբարշտին տալ, այն է՝ հավիտենական կրակը, որով և Հիսուսը պետք է հայտնվի։ Այն ժամանակ նա չարագործներին կասի.* ***«Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար»*** *(Մատթ. 25.41)։ Ինչ վերաբերում է* ***«հավիտենական կրակ»*** *արտահայտությանը, ապա, ըստ եհովականների վարդապետության, ոչ թե տանջանքը և դատաստանն է հավիտենական, այլ կրակը։ Այդ կար-*

ծիքն անհիմն է նրանով, որ եթե մարդ պետք է կրակի մեջ ընկնի և այրվելով անէանա, ապա ի՞նչ կարիք կար, որ Հիսուսը շեշտեր, թե այդ կրակը հավիտենակա՞ն է, թե՞ անցողիկ: Բացի այդ, Սուրբ Գրքում միաժամանակ հիշատակվում է հավիտենական տանջանքների մասին: Այդ մասին Հիսուսն ասում է. **«Եվ եթէ քո ձեռքը քեզ գայթակղեցնում է, կտրիր դե՛ն գցիր քեզնից, որովհետև քեզ համար ավելի լավ է խեղված մտնել հավիտենական կյանքը, քան թե երկու ձեռք ունենալ ու գնալ գեհեն, անշեջ կրակի մեջ»** (Մարկ. 9.42):

Մեկ ուրիշ տեղ Հիսուսն ասում է. **«Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք»** (Մատթ. 25.46). այսինքն՝ որքան արդարների համար կյանքն է հավիտենական լինելու, այնքան էլ անհավատների համար՝ տանջանքները: Իսկ Դանիել մարգարեն հարությունից հետո մարդկանց համար եղած երկու վիճակի մասին ասում է. **«Երկրում, հողի մեջ ննջածներից շատերը հարություն պիտի առնեն, ոմանք հավիտենական կյանքի համար, և ոմանք հավիտենական նախատինքի և անարգանքի համար»** (Դան. 12.2):

Որպեսզի համոզվենք, թե հավիտենական դատապարտության վայրը իրական է, Հիսուսը պատմեց նաև աղքատ Ղազարոսի և հարուստի պատմությունը: Երբ հարուստը **«դժոխքում մինչ տանջանքների մեջ էր… աղաղակեց ու ասաց. Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ»** (Ղուկ. 16.23,24):

Ուշագրավ է նաև Հիսուսի խոսքերը խաչի ճանապարհին: Նա Իր վրա լացող կանանց ասում է, որ ողբան իրենց որդիների վրա, սրանով Հիսուսն ակնարկում էր չարագործների հավիտենական դատաստանը. **«Հիսուս դարձավ և նրանց ասաց. Երուսաղեմի՛ դուստրեր, ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լաց եղեք ձեր և ձեր որդիների վրա»** (Ղուկ. 23.28): Նրանց սպասվող պատուհասների մասին հայտնելուց հետո, Հիսուսն ավելացնում է՝ **«որովհետև եթե**



**դալա՛ր փայտին այսպէս անեն, չորի՛ն ինչ կպատահի»** (Ղուկ. 23.31): Այս խոսքի իմաստն այն է, որ եթե անմեղ մարդը այսպես չարչարվում է, ապա մեղավորին ի՞նչ կլինի:

Այսպիսով, տեսնում ենք, որ հավիտենական դատապարտության մասին Աստծու խոսքը և եհովականների «վարդապետությունը» ամբողջովին հակադիր են:

### Դատաստանի օրը

Հիսուս բացահայտ ասաց, որ երկրորդ անգամ աշխարհ է գալու դատելու այն: Դատաստանի օրվա մասին Պողոս առաքյալն ասում է. **«Այն օրը, երբ Աստուած պիտի դատի մարդկանց գաղտնի գործերը, ըստ իմ աւետարանի, Յիսուս Քրիստոսի միջոցով»** (Հռոմ. 2.16). **«…սահմանել է մի օր, երբ աշխարհը արդարությամբ պիտի դատի»** (Գործք 17.31): Հուդա առաքյալի թղթում կարդում ենք. **«Ահա Տերը եկավ իր բյուրավոր սուրբ հրեշտակներով՝ դատաստան տեսնելու բոլորի հանդեպ»** (Հուդա 15): Իսկ Պետրոս առաքյալն այս մասին ասում է. **«Տերը գիտի աստվածապաշտներին փրկել փորձությունից, իսկ անիրավներին պահել դատաստանի օրվա համար՝ տանջանքների մատնելու նրանց»** (Բ Պետ 2.9):

Այժմ տեսնենք, թե ինչ են ասում «վկաները» դատաստանի այդ օրվա մասին. «Ժողովրդային կարծիքին հակառակը, ան (Աստված) մարդիկը իրենց անցյալի մեղքերուն համար պիտի չդատե… Աստվածաշունչը կը բացատրե որ մահվան ատեն անհատ մը կազատագրվի՛ իր գործած մեղքերեն: Ասիկա կը նշանակե թե երբ անհատ մը կը հարուցվի, ան պիտի դատվի Դատաստանի օրվան ընթացքին իր ըրած բաներուն հիման վրա և ոչ թե՝ մեռնելե առաջ: Դատաստանի օրը հետևաբար, 24 ժամվան բառացի օր մը չէ… Դատաստանի օրը 1000 տարի երկարություն պիտի ունենա» («Դուք կրնաք հավիտյան ապրել երկրային դրախտի մը մեջ», 1993թ. , էջ 175, 176):

*Այսպիսով, եհովականները, փրկվելու համար Քրիստոսի արյունը անբավարար համարելով, հայտարարում են, թե բոլոր մարդիկ մեկ անգամ ևս պետք է կյանք ստանան և հազար տարվա իրենց գործերով Եհովայի առջև արդարանալու երկրորդ հնարավորությունն ունենան: Այս բացահայտ խաբեությունը գալիս է «Եհովայի վկաներ» կազմակերպության հիմնադիր Չ. Ռասելից, որ ժամանակին քարոզում էր.* «Սիրելինե՛ր, մի վախեցեք և ոչ էլ զարհուրեցեք, մի՛ հավատացեք այն քարոզություններին, որ ձեր ականջներին կհասնեն, թե՝ «ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկության օրը», այլևս մտահոգվելու պատճառ չունեք, քանի որ տակավին ամբողջ հազարամյան ձեր առջև ունեք»: *Մեկ այլ գրքույկում եհովական «վարդապետները» դատաստանի համար հարություն առածների և դատաստանի օրվա մասին գրում են.* «...անիկա ամենեն բերկրալի ժամանակը պիտի ըլլայ: Քանի որ այս հարուցանողները իրենց անցյալի սխալ արարքներուն համաձայն պիտի չդատվին... Ամեն ջանք պիտի թափվի իրենց օգնելու Աստծո հետ իրենց հաշտությունը ամբողջացնելու ճամբուն մեջ: Որևէ ժամանակի դաստիարակչական մեծագույն հայտագիրը առաջ պիտի տարվի Թագավորության կազմակերպության ներքև: «Գիրքեր» պիտի բացվին: Անոնք պիտի ըլլան հրատարակված խրատներ, օգնելու համար հարուցվողներուն որ հավիտենական կյանքի արժանի գործեր ընեն» («Քու Թագավորությունդ գա», 1984թ., էջ 179, 180):

*Երկրորդ անգամ կյանք ստանալու և Հազարամյայում Աստծու առջև արդարանալու հնարավորությունը բացառվում է ոչ միայն սուրբգրային վերը հիշատակված վկայություններով, այլ հակաաստվածաշնչյան է նաև հետևյալ առումներով.*

*1. Փրկվելու և Աստծո արքայությունը ժառանգելու համար մեզ մի կյանք է տրվում.* ***«Եվ ինչպես որ մարդկանց համար սահմանված է մե՛կ անգամ մեռնել և այնուհետև՝ դատաստան. նույնպես և Քրիստոսը մե՛կ անգամ որպես***



***պատարագ մատուցվեց՝ շատերի մեղքերը վերցնելու համար»*** *(Եբր. 9.27,28):* ***«Քանզի եթե կամավոր կերպով ենք մեղանչում ճշմարտությունն իմանալուց և ընդունելուց հետո, ուրեմն մեղքերի քավության համար այլևս ուրիշ զոհ չի մնում, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղությունը, որ լափելու է հակառակորդներին»*** *(Եբր.10.26,27):* ***«Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկության օրը»*** *(Բ Կորնթ. 6.2):*

*2. Ով ասում է, թե մարդը վերջնականորեն կարող է փրկվել միայն օրենքի գործերով, ապա անարգում է Աստծու շնորհը, Քրիստոսի արյունը: Այս մասին Պողոս առաքյալը գրում է.* ***«Եվ ես Աստծո շնորհը չեմ անարգում, քանի որ, եթե արդարությունը օրենքից է, ապա Քրիստոս ի զուր մեռավ»*** *(Գաղատ. 2.21):*

*3. Աստվածաշնչում ոչ մի տեղ գրված չէ, թե Հազարամյային ամբարիշտները «կյանքի հարություն» պետք է ունենան: Հազարամյայի հարության մասին միայն Հայտնության 20-րդ գլխում է վկայված, ուր նշված է, որ Հազարամյային Աստծու խոսքի համար չարչարվածները միայն պետք է հարություն առնեն (Հայտ. 20.4,5): Բացի այդ էլ կյանքի համար հարություն առած մեռելները, ըստ Աստծո խոսքի (Ա Կորնթ. 15.42, 43), պետք է լինեն անապականացու և չպետք է Աստծու առաջ փորձվեն:*

## Գլուխ 6
## ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺԱՆՎԱ՞Ծ

*Եհովայի վկաները հավատում են, թե Աստծու երկնային արքայությունը պետք է ժառանգեն 144.000 ընտրյալները (փոքր հոտը): Նրանք պետք է Քրիստոսի հետ թագավորեն երկնքում, իսկ մեծամասնության համար փրկությունը նշանակում է հավիտենական կյանք երկրային դրախտում:*

*Եհովական վարդապետները հավիտենական կյանքը ժառանգողներին երկու մասի են բաժանում, փորձելով հիմ-*

նավորել դա երկու հիմնական հանգամանքով, այն է.

1. Սուրբ գրքում նշված է, որ Աստծու ընտրյալները հավիտյանս պետք է բնակվեն թե՛ երկնային արքայությունում և թե՛ Տիրոջ երկրում, որոնք իբր թե տարբեր հասկացություններ են:

2. Հայտնության գրքում հիշատակվում են 144.000 ընտրյալները, որոնք Աստծու մոտ ավելի բարձր դիրք ունեն՝ մյուս փրկվողների համեմատ: 144.000-ը այն «փոքր հոտն» է, որի համար Հիսուսն ասաց. **«Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, տալ ձեզ արքայությունը»** (Ղուկ. 12.32):

Պատասխանելով եհովականների հարցադրումներին, առաջին հարցի մասին նշենք, որ Սուրբ Գրքում Աստված ամենուր Իրեն հավատարիմ ժողովրդին խոստանում է ժառանգություն տալ հավիտենական թագավորությունը: Ինչպես Տիրոջ խոստումն է մեկ, այնպես էլ մեկ է խոստացված թագավորությունը, չնայած Աստվածաշնչում այն տարբեր անուններով է կոչվում: Հին Կտակարանի մարգարեություններում այն անվանվում է Տիրոջ երկիր, Իսրայել, Հուդա, Սիոն, Երուսաղեմ: Եվ չնայած այդ անունները բնույթով երկրային են, սակայն դրանով ակնկալվում է Քրիստոսի միևնույն երկնային արքայությունը: Այսպես՝ Երեմիայի մարգարեությունում գրված է. **«Ահա օրեր են գալու, ասում է Տերը, որ ես Դավթի համար ծնունդ եմ տալու մի արդար շառավիղի, որ թագավորելու է որպես թագավոր, նա իրավունք ու արդարություն է պաշտպանելու երկրի վրա: Նրա ժամանակ փրկվելու է Հուդայի երկիրը, Իսրայելը հույսով է ապրելու»** (Երեմ. 23.5,6): Անշուշտ, Դավթի արդարության Շառավիղը Քրիստոսն է, և չնայած գիտենք, որ Նա երկնային արքայությամբ պետք է գա, սակայն մարգարեությունում միաժամանակ նշված է, որ Տէրը երկրի վրա պետք է թագավորի:

Այսպիսով, Տիրոջ հավիտենական թագավորությունը չնայած մեկ է, սակայն Սուրբ Գրքում այն տարբեր անուններով է հիշատակվում: Սաղմոսներում կարդում ենք.



**«Սպասի՛ր Տիրոջն ու պահի՛ր նրա ճանապարհները, նա քեզ կբարձրացնի՝ երկիրը ժառանգելու»** (Սաղմ. 36.34): **«Արդարները երկիրը կժառանգեն և հավիտյանս կբնակվեն նրանում»** (Սաղմ. 36.29): Բայց միաժամանակ Հիսուս արդարների համար պատգամում է, թե նրանք իր երկնային թագավորությունը պետք է ժառանգեն: Լեռան քարոզում տեսնում ենք, որ Հիսուսը «Տիրոջ երկիր» և «երկնքի թագավորություն» հասկացություններին նույն իմաստն է տալիս. **«Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»** (Մատթ. 5.3): **«Երանի՜ հեզերին, որովհետև նրանք պիտի ժառանգեն երկիրը»** (Մատթ. 5.5):

«Եհովայի վկաները» պնդում են, թե երկնքում թագավորող 144000 հոգուց բաղկացած «փոքր հոտը» Քրիստոսի հարսն է՝ երկնային Երուսաղեմը: Բայց վերջինիս մասին մեկ այլ տեղ ասվում է, թե այն երկնքից պետք է իջած լինի. **«...և նրա վրա պիտի գրեմ իմ Աստծո քաղաքի անունը, Նոր Երուսաղեմի, որ իջնելու է երկնքից, իմ Աստծուց»** (Հայտ. 3.12): Իսկ մեկ այլ տեղ Հայտնությունում Աստծո ընտրյալ սրբերի մասին գրված է. **«Եվ նրանց թագավորներ և քահանաներ դարձրիր մեր Աստծուն, որպեսզի թագավորեն երկրի վրա»** (Հայտ. 5.10): Եվ չպետք է զարմանանք, եթե Աստված երկնային արքայությունը հաստատի նորոգված երկրի վրա: Ամեն դեպքում, աշխարհի սկզբից պատրաստված Աստծու արքայությունը, որը տարբեր անուններով է հիշատակվում, ըստ էության, մեկն է:

Երկնքում թագավորող «փոքր հոտի» մասին եհովականները ավելացնում են. «Ավելի քան 1900 տարիներու ընթացքին, Քրիստոսի հետ իշխանակից եղող 144.000 քրիստոնյաները հավաքվեցան «պզտիկ հոտ»ին մէջ: Հիմա անոնցմե շատ քիչեր տակավին երկրի վրա են: Մեծամասնությունը արդեն երկնքի մէջ Քրիստոսի հետ կթագավորեն» («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մէջ», 1993թ., էջ 163): «Երկնային թագավորության մէջ Քրիստոսի հետ եղող 144.000 ն ալ պետք է մեռնին իրենց

վարձատրությունը ստանալու առաջ» («Միացած միակ ճշմարիտ Աստուծո պաշտամունքին մէջ», 1988թ. , էջ 103): *Այս մեջբերումները չեն համապատասխանում ճշմարտությանը հետևյալ պատճառներով.*

*1. Եթե Եհովայի վկաները պնդում են, որ երկնային արքայությունը պետք է ժառանգեն վերջին 1900 տարվա՝ Հիսուսից հետո ապրած, 144.000 ընտրյալները, ապա Հիսուսը պարզորոշ ասում է, որ հինկտակարանյան ընտրյալներն էլ այդ թագավորությունում պետք է լինեն.* ***«...արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ»*** *(Մատթ. 8.11):*

*2. Հակառակ եհովականների ասածի՝ Աստվածաշնչում նշված է, որ 144.000 -ը պետք է կենդանի լինեն վերջին օրերում և Տիրոջ բարկության մեծ օրից առաջ երկրի վրա գտնվեն.* ***«Եվ ասում էր. վնաս մի՛ տվեք երկրին. ո՛չ ծովին, ո՛չ ծառերին. սպասեցե՛ք մինչև որ կնիք դնեմ իմ Աստծո ծառաների վրա: Եվ լսեցի, որ կնքվածների թիվ 144.000 է՝ իսրայելցիների բոլոր ցեղերից կնքված»*** *(Հայտ. 7.24):*

*3. Այն, թե 144.000ի մեծ մասը, արդեն իսկ հարություն առած, թագավորում է երկնքում, հակառակ է Պողոս առաքյալի այն խոսքին, թե Քրիստոսի գալստյա՛նը Իր ընտրյալները պետք է հարություն առնեն.* ***«Որովհետև Տերն ինքը, ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածներն առաջինը հարություն պիտի առնեն»*** *(Ա Թես. 4.15):*

*Խոսելով այն մասին, թե երկնքի թագավորությունում լինելը շատ քչերի մենաշնորհն է, եհովականները գրում են.* «Ասիկա չի նշանակեր, թե ամենքս ալ կրնանք ակնկալել Հիսուսի հետ այդ թագավորության մեջ ըլլալ, քանի որ այդ պատեհությունը վերապահված է միայն իր աշակերտներու «պզտիկ հոտ» ին: Նոյնիսկ Դավիթ թագավոր այդպիսի հույս մը չուներ: Մեզի ըսված է. **«Դավիթ երկինք չելավ»** (Գործք Բ 34), ոչ իսկ Հովհաննես Մկրտիչը և անցյալի հավատարիմ այրերը և կիները երկինքի թագավորությունը



պիտի մտնեն» Մատթ. ԺԱ 11 («Քո թագավորությունը գա», 1984թ. , էջ 55): *Հովհաննես Մկրտիչը՝ Քրիստոսի առաջին գալստյան ճանապարհը հարթողը, մարդկանց քարոզում էր.* ***«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի թագավորությունը մոտեցել է»*** *(Մատթ. 3.2): Ըստ եհովականների, ստացվում է, որ մարգարեն այն էր պատգամում ուրիշներին, ինչին ինքն իսկ հասնել չէր կարող:*

*Իսկ երկրային դրախտը ժառանգողների համար, որոնք «փոքր հոտից» դուրս են, Եհովայի վկաները մեջբերում են Հիսուսի հետևյալ խոսքը.* ***«Ես ունեմ նաև այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն. Նրանց եվս պէտք է այստեղ բերեմ. և իմ ձայնը պիտի լսեն, և պիտի լինի մի հոտ և մի հովիվ»*** *(Հովհ. 10.16): Սակայն Հիսուսն այս խոսքերով ոչ թե ստորաբաժանումներ էր կատարում Իր Եկեղեցում, այլ դրանք ուղղված էին Հրեաստանից դուրս եղած այն հեթանոսներին, որոնք Ավետարանի խոսքը լսելով, Հիսուսին պետք է գային:*

*Նկատենք, որ Ավետարանը Աստծու երկնային արքայության բարի լուրն է ավետում և բոլորիս միանշանակ պատգամում է, որ ձգտելով կատարելության, մեր հայացքները միայն ուղղենք դեպի այդ արքայությունը: Հակառակ սրա, եհովական վարդապետները քարոզում են, թե երկնային արքայության 144.000 տեղերը գրեթե ամբողջությամբ «զբաղեցված» են և իրենց 10 միլիոնից ավելի հետևորդներին կոչում են համեստորեն երկրային դրախտում տեղ զբաղեցնել:*

## Գլուխ 7
## ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԸ

*Եհովայի վկաները, հավիտենական կյանքի ժառանգողներին երկու մասի բաժանելով, դրան համապատասխան, հարություն առածների մարմիններն էլ երկու տեսակ են պատկերացնում: Նրանք ասում են, թե երկնքում թագավորողները ունեն հոգևոր՝ մեզ համար անտեսանելի, մարմին, իսկ երկրի հավիտենական բնակիչները պետք է*

հարություն առնեն ֆիզիկական մարմնով:

Այս վարդապետությունը ևս Աստծու խոսքին համապատասխան չէ: Սուրբ Գրքում ոչ մի տեղ հարուցյալ մարմինների նման զանազանության մասին խոսք չի ասվում: Ըստ էության, եհովականները հոգևոր մարմինը նույնացնում են անտեսանելի հոգու հետ, որը թյուր ընկալում է: Հարության խորհուրդը հենց անտեսանելիի՝ տեսանելի, անշոշափելիի շոշափելի դառնալն է: Եվ քանի որ այս մարմնով հավիտենապես չենք կարող ապրել, այդ իսկ պատճառով Աստված Իր ընտրյալներին հավիտենական, անապական մարմնով պետք է հարուցանի: Ամեն դեպքում, հարուցյալ մարմինները բոլորիս համար տեսանելի պետք է լինեն:

Հարություն առածների մարմնի մասին Պողոս առաքյալն ասում է. **«Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմանվում է ապականությունով և հարություն է առնում առանց ապականության. սերմանվում է անարգությամբ և հարություն է առնում փառքով. սերմանվում է տկարությամբ և հարություն է առնում զորությամբ. սերմանվում է շնչավոր մարմին և հարություն է առնում հոգևոր մարմին. եթե կա շնչավոր մարմին, կա և հոգևոր մարմին»** (Ա Կորնթ. 15.4244): Հակառակ Եհովայի վկաների, ինչպես տեսնում ենք, Պողոս առաքյալը խոսում է հարության մեկ կերպի, մեկ էության մասին:

Պողոսը մեկ այլ տեղ հայտնում է, թե հարությունից հետո յուրաքանչյուր ոք (այդ թվում և ինքը) հավիտենականությունում մարմնով պետք է իր վարձքը ստանա. **«Քանզի մենք բոլորս Քրիստոսի ատյանի առաջ պիտի ներկայանանք, որպեսզի յուրաքանչյուրն ստանա, ինչ որ արել է ավելի առաջ իր մարմնով՝ թե՛ բարի և թե՛ չար»** (Բ Կորնթ. 5.10):

Եհովականները պնդում են, թե 144.000-ի մեծամասնությունը, որոնք անտեսանելի կերպով երկնքում թագավորում են, արդեն հարություն են առել: Սակայն նախորդ գլխում մեջբերեցինք Պողոս առաքյալի այն խոսքը, որ հարությունը պետք է լինի այն օրը, երբ Քրիստոսը



երկնքով հայտնվի: Հիսուսը ևս արդարների հարության ժամանակի մասին ասում է, որ այն վերջին օրը պետք է լինի. **«Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը հավիտենական կյանք ունի. և ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ»** (Հովհ. 6.55):

Մեկ այլ դեպքում, երբ սադուկեցիները Հիսուսին հարցնում են, որ եթե մի կին յոթ ամուսին է ունեցել, և բոլորն էլ մահացել են, ապա հարության ժամանակ որի՞ կինը նա կլինի, Հիսուսը պատասխանում է, թե՝ **«Հարության ժամանակ ո՛չ կին են առնում և ո՛չ էլ մարդու գնում»** (Մատթ. 22.30): Ինչպես տեսնում ենք, Հիսուսը այս հարցին ոչ թե երկու տարբերակով է պատասխանում, այլ մեկ, որ նշանակում է, թե հարության կերպը մեկ է լինելու: Ի դեպ, Եհովայի վկաները, երկրային դրախտը ժառանգող հարություն առածներին իրենց հրատարակած գրքերում և ամսագրերում պատկերում են որպես կին և տղամարդ ամուսիններ, որը հակառակ է Հիսուսի վերոհիշյալ խոսքին:

## Հիսուսի հարությունը

Քանի որ Եհովայի վկաները համոզված են, թե Հիսուսը երկնքում անտեսանելիորեն թագավորում է 144.000-ի հետ, ապա նրանք հայտարարում են, թե Հիսուսը Իր խաչելությունից հետո ոչ թե մարմնով է հարություն առել, այլ ոգեղեն անտեսանելի մարմնով, և որպեսզի աշակերտները Իրեն ճանաչեին, Հիսուսը ստիպված էր Իր նախկին կերպարանքով աշակերտներին հայտնվել: Հիսուսի մարմնի մասին նրանք տարբեր վարկածներ են առաջ քաշում, ամեն դեպքում նշելով, որ այն անկենդան է մնացել:

Սրան հակառակ, երբ Հիսուսը հրեաներին ասաց, թե քանդված տաճարը երեք օրում էլ կկանգնեցնի, ապա ինչպես Հովհաննես ավետարանիչն է նշում՝ **«Նա իր մարմնի տաճարի մասին էր խոսում: Իսկ երբ մեռելներից հարություն առավ, նրա աշակերտները հիշեցին, թե այդ է, որ ասել էր»** (Հովհ. 2.21,22): Եթե Հիսուսը Իր խաչյալ

մարմնով չպետք է հարություն առներ, ապա առաքյալը իր խոսքում թերևս չօգտագործեր **«մարմնի տաճար»** արտահայտությունը: Պողոս առաքյալը Հիսուսի մասին ասում է, որ Նա, Դավթի համեմատ, ապականություն չտեսավ, նկատի ունենալով, անշուշտ, նրանց մարմինները. **«Սակայն Դավիթը իր սերնդի ժամանակ ծառայեց և Աստծո կամքով վախճանվեց... և նրա մարմինը ապականություն տեսավ: Բայց Հիսուս, որին Աստված հարություն տվեց, ապականություն չտեսավ»** (Գործք 13.37):

Այսպիսով, Հիսուսը մարդկային տկար մարմինը ոչ թե կորցրեց, ինչպես եհովականներն են ասում, այլ նորոգությամբ՝ երկնային մարմնով եղավ: Հիսուսի պես, Նրա գալստյանը կենդանի եղող հավատացյալները իրենց մարմինները ոչ թե պետք է կորցնեն, այլ, նորոգվելով, կրեն Երկնավորի (Քրիստոսի) պատկերը, որով և մտնելու են Աստծու արքայությունը: Այս մասին Պողոս առաքյալը գրում է. **«Եվ ինչպես որ կրեցինք հողեղենի պատկերը, նույնպես և պիտի կրենք երկնավորի պատկերը: Բայց այս եմ ասում, եղբայրնե՛ր, որ մարմին և արյուն չեն կարող Աստծո արքայությունը ժառանգել. ոչ էլ ապականությունը անապականություն է ժառանգում: Արդ, մի խորհուրդ եմ հայտնում ձեզ. ոչ բոլորս պիտի ննջենք, բայց բոլորս պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում վերջին փողի ժամանակ»** (Ա Կորնթ. 15.49-52):

## Գլուխ 8
## ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եհովայի վկաները, հակառակ ավանդական քրիստոնեական մոտեցման, պնդում են, որ մարդը հոգի չունի. «Մարդ ի՛նք հոգի մըն է: Ուստի, կակնկալե՛նք որ երբ որ մարդը մեռնի, իր հոգին ալ կը մեռնի: Աստվածաշունչը բնավ չըսե՛ր թե հոգին անմահ է կամ ան չի կրնար մեռնիլ... Մահվանե ետք հոգիին վերապրումը սուտ մըն է որ բանսարկուլյով սկսավ» («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային



դրախտի մը մեջ», 1993թ., էջ 78, 79, 89): «Անոնք որոնք ավանդական կրոնքներուն կառչած են, ըլլա քրիստոնեա աշխարհին մեջ կամ դուրսը, կը խորհին, որ իրենք անմահ հոգի մը ունին, և հետևաբար հարությունը անպետ կը դառնա» («Միացած՝ միակ ճշմարիտ Աստուծո պաշտամունքին մեջ», 1988թ., էջ 71):

Այսպիսով, եհովականները քարոզում են, թե մարդու մահից հետո նրանից ոչինչ չի մնում, և մարդու հարությունն էլ, ըստ էության, պետք է ոչնչից լինի: Հակառակ դրա, քրիստոնյա աշխարհը միշտ ընդունել է հոգու գոյությունը, որը մարդու մարմնավոր մահից հետո մարմնից անկախ գոյություն ունի. այն տվյալ անձի ինքնության կրողն է և դատաստանի օրը հարության հավիտենական մարմինը պետք է հագնի: Սուրբ Գրքում այս ճշմարտությունը հաստատող վկայությունները բազմաթիվ են:

Մարդու հոգու գոյության հարցով դեռևս Հիսուսի ժամանակներում վիճում էին սադուկեցիները և **փարիսեցիները՝ «որովհետև սադուկեցիներն ասում էին՝ հարություն չկա, ո՛չ էլ հրեշտակ և ո՛չ հոգի. իսկ փարիսեցիները ընդունում էին երկուսն էլ»** (Գործք 23.8): Անշուշտ, հարությունն ընդունող փարիսեցիները, որ դավանական հարցերում սադուկեցիներից շատ ավելի ճիշտ էին կողմնորոշվում, այս հարցում ևս անսխալ էին:

Սուրբ Գիրքը վկայում է, որ աստվածաշնչյան շատ հերոսներ՝ Աբրահամից սկսած, իրենց հոգիները ավանդել են Աստծուն: Իսկ Ստեփանոսը իր մահվան ժամանակ **ասաց. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին»** (Գործք 7.58): Մարդու մահից հետո, նրա մահկանացու մարմնից դուրս, հոգու չգոյության դեպքում այդ խոսքերը իմաստազուրկ կլինեին:

Հիսուսի կողմից Հայրոսի մեռած աղջկան կենդանացնելու վերաբերյալ Ավետարանն ասում **է. «Նրա հոգին վերադարձավ, և մանուկը իսկույն կանգնեց»**: Եթե, ըստ եհովականների, ընդունենք, թե հոգին նույնն է, ինչ մարմինը, ապա «հոգին վերադարձավ» արտահայտությունը նույն

կերպ անհասկանալի կլիներ:

Թագավորություններ 1-ին գրքում կարդում ենք, թե ինչպես Սամուելը իր մահից հետո հոգով Սավուղին հայտնվեց և ասաց, որ Իսրայելի թագավորությունը նրա ձեռքից Դավթին պետք է հանձնվի (Ա Թագ. 29.14-20):

Խաչելությունից հետո Հիսուսը, մինչ մարմնով հարություն առնելը, հոգով դժոխքում մեռելներին էս քարոզեց. **«Նա թեպետև մեռավ մարմնով, բայց կենդանի եղավ հոգով, որով և գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին, երբ Աստծո համբերատարությունը երկարաձգվում էր նրանց համար Նոյի օրերում»** (Ա Պետ. 3.1820). **«...քանի որ սրա համար իսկ քարոզվեց Ավետարանը նաև՛ մեռելներին»** (Ա Պետ. 4.6): Արդ, եթե Նոյի օրերի մեռելները Հիսուսի ժամանակ հոգով կենդանի չէին, ինչպե՞ս կարող էր Հիսուսը նրանց ավետարանել:

Դրա պես, Հիսուսից 1500 տարի առաջ մարմնով մահացած Մովսեսը Հիսուսի այլակերպության ժամանակ ինչպե՞ս կարող էր հայտնվել և զրուցել Նրա հետ (Մատթ. 17.3), եթե հոգով կենդանի չլիներ:

Եհովայի վկաների այն դիրքորոշումը, թե Աստվածաշնչում հիշատակվող հոգին հենց մարդն է՝ իր մարմնով, հերքվում է նաև սուրբգրային այն վկայություններով, որոնցում «մարմինն» ու «հոգին» համատեղ են հիշատակվում, շատ անգամ էլ շեշտվում են նրանց տարբեր բնությունները: Մեջբերենք դրանցից մի քանիսը. **«Եվ մի՛ վախեցեք նրանից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը»** (Մատթ. 10.28): **«Հոգիս հոժար է, բայց մարմինս՝ տկար»** (Մատթ. 26.41): **«Ո՛վ Աստուած, հոգիների և բոլոր մարմինների Աստված»** (Թվեր 16.22): **«Մարմինը հոգուն հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակ»** (Գաղատ. 5.17): **«Եվ ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը անարատ պահվի մինչև մեր Տեր**



**Հիսուս Քրիստոսի գալուստը»** (Ա Թես. 5.23): **«Մարմինն առանց հոգու մեռած է»** (Հակոբ. 2.26): Հայտնության գրքում էլ հանդիպում ենք **«մարդկանց մարմիններին և հոգիներին»** (Հայտ. 18.13) արտահայտությանը:

## Գլուխ 9
## ԽԱՉԻ ՄԱՍԻՆ

«Քրիստոսի խաչ», «Քրիստոսի խաչելություն» արտահայտությունների փոխարեն Եհովայի վկաները Նոր Կտակարանի իրենց թարգմանություններում օգտագործում են «Քրիստոսի չարչարանքների ցից», «Քրիստոսի ցցահարում» ձևերը, այսինքն՝ նրանք գտնում են, որ Հիսուսը չարչարվել և մահացել է ոչ թե խաչի վրա, այլ ցցի: Բացի այդ, եհովականները, քրիստոնյաներին քննադատելով, ասում են. «Ինչպե՞ս կարելի է պաշտել մի գործիք, որով Քրիստոսին են սպանել»: Խաչի հանդեպ նման հակառակությունը գալիս է նրանից, որ Եհովայի վկաների համար ընկալելի չէ խաչի վրա կատարված փրկագործության խորհուրդը: Եթե վերջինիս նրանք հասու լինեին, ապա «դատապարտության գործիքի» շուրջ վիճաբանություններ չէին ստեղծի:

Խաչը մեզ համար նախ այն է, որ Քրիստոս դրանով մեզ հաշտեցրեց Աստծու հետ: Պողոս առաքյալը այդ մասին գրում է՝ **«իր խաչով հաշտեցնի երկուսին մեկ մարմնի մեջ Աստծո հետ»** (Եփես. 2.16): **«Եվ Նրանով հաշտեցնել ամեն ինչ իր հետ՝ խաղաղություն անելով խաչի վրայ թափված իր արյամբ և՛ երկրի վրա, և՛ երկնքում եղածների համար»** (Կողոս. 1.20):

Այսպիսով, Քրիստոսի խաչը, որ չարչարանքի և մահվան գործիք էր, Փրկչի հարությամբ, դարձավ փրկության և հավիտենական կյանքի խորհրդանիշը: Իսկ մենք, եթե կամենում ենք Քրիստոսին կերպարանակից և փառակից լինել, մեր անձը ուրանալով, Նրա խաչի ճանապարհով պետք է ընթանանք, ինչպես որ Փրկիչն է մեզ պատգամել. **«Եվ ով**

**իր խաչը չի վերցնում ու իմ հետևից չի գալիս, նա ինձ արժանի չէ»** (Մատթ. 10.37): Մեկ ուրիշ դեպքում էլ, մեծահարուստի այն հարցին, թե ինքը ինչ պետք է անի, որ հավիտենական կյանքը ժառանգի, Հիսուս պատասխանում է, որ հարստությունը բաժանի աղքատներին և հետո ավելացնում է՝ **«վերցրո՛ւ խաչդ և արի՛ իմ ետևից»** (Մարկ. 10.21):

Պողոս առաքյալը՝ Քրիստոսի այս պատգամը կյանքի կոչողներից մեկը, նույնի մասին ավելացնում է. **«Ես Քրիստոսի հետ խաչված եմ»** (Գաղ. 2.20). **«Բայց նրանք, որ քրիստոսեաններ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով և ցանկություններով հանդերձ»** (Գաղ. 5.24): Իսկ խաչի հակառակորդների մասին առաքյալը նշում է. **«...որ Քրիստոսի խաչի թշնամիներն են, որոնց վերջը կորուստ է»** (Փիլիպ. 3.18,19). **«...Նրանք, որ ցանկանում են ըստ մարմնի լավ մարդ երևալ, ստիպում են ձեզ, որ թլփատվեք: Միայն թե Քրիստոսի խաչի հետևից չգնան»** (Գաղ. 6.12): Հետևապես, **«Քրիստոսի խաչ»** ասելով, հասկանում ենք ոչ միայն դատապարտության գործիքը, այլ այն ամենը, ինչ մեզ Քրիստոսով Աստծուն է մոտեցնում: Ուրեմն և, պետք է հպարտանանք այդ փրկարար խաչով, ինչպես Պողոս առաքյալն է ասում. **«Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի»** (Գաղ. 6.14):

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Հիսուսը ցցի՞, թե՞ խաչի վրա է տառապել և մահացել, ապա վերջինիս օգտին է խոսում նաև պատմությունը: Այդ առումով մեզ են հասել խաչի հետ կապված բազում զարմանահրաշ ավանդապատումներ: Հիշատակենք երեք նշանակալի իրադարձություն, որոնք Հայ Առաքելական եկեղեցին հիշատակում է Խաչի տոների թվում:

Երբ 326թ. Բյուզանդիայի կայսր Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինեն, Երուսաղեմ է գալիս, սկսում է Հիսուսի խաչափայտը որոնել: Նա հարցաքննում է հրեաներին՝ տեղեկանալու համար այդ մասին իրենց հայրերից հասած



ավանդությանը: Նրանք ս. Ստեփանոս Նախավկայի ցեղից Հուդային, որպես նախկինում տեղի ունեցած դեպքերին առավել քաջատեղյակի, ներկայացնում են թագուհուն: Հուդան Գողգոթայի արևելյան կողմում մի վայր է ցուցանում, որտեղ և թագուհին փորել է հրամայում: Սակայն նույն տեղում երեք խաչափայտ է գտնվում: Տերունական խաչափայտը ճանաչելու համար երեք խաչերի վրա դրվում է մեռյալ մանուկի դիակը: Վերջինս, երբ Հիսուսի խաչափայտին է դիպչում, անմիջապես կենդանանում է:

Մյուս նշանակալի դեպքը 352թ. մայիսի 7-ին, ի տես հազարավոր երուսաղեմցիների, խաչի նշանի երևումն էր Երուսաղեմի երկնքում: Այն այնքան պայծառ էր, որ իր ճառագայթներով արևի լուսավորությունը անձացրեց:

Հիշատակման է արժան նաև Վարագա խաչի պատմությունը... Հայաստան եղած ժամանակ Հռիփսիմեն իր մոտ եղած խաչափայտի մասունքը թողել էր Վարագ լեռան գագաթին: Նույն տեղում 653թ., 12 օր շարունակ, 12 սյունանի լուսավոր տաճար է երևում, որի մեջ, էլ ավելի լուսեղեն կերպով, խաչ է երևում: Աստվածային այս հրաշքին ականատես են լինում շատ-շատերը, այդ թվում Հայոց Ներսես կաթողիկոսը, որն էլ Հայ եկեղեցում այդ դեպքը հիշատակող տարեկան տոն է սահմանում:

## Գլուխ 10
# ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՂԱՎԱՂՈՒՄԸ «ՎԿԱՆԵՐԻ» ՄՈՏ ԵՎ ԱՅԼ ՇԵՂՈՒՄՆԵՐ

### Հաղորդության խորհուրդը «Եհովայի վկաներ» կազմակերպությունում

Եհովայի վկաները հայտարարում են, թե միայն 144.000 ընտրյալները կարող են գինով և հացով Քրիստոսի մարմնին հաղորդվել: Այդ պատճառով Հիշատակի երեկոյին ներկա գտնվողները ոչ թե ճաշակում են Քրիստոսի մարմինը խորհրդանշող հացն ու գինին, այլ այն փոխանցում են մեկը մյուսին, որն, ի վերջո, պետք է ընդունեն 5000 ընտրյալ եհովականներ՝ 144.000-ի կենդանի մնացորդը: Այս մասին նրանք գրում են. «Եհովայի վկաները ամեն տարի մասնավոր ժողով մը կունենան, Հիսուսի մահվան տարելիցին: Երբ առաջին անգամ իր հիշատակատոնին կարգադրությունը ըրավ, Հիսուս ըսավ. «Ասիկա ըրեք հիշելու համար»: Պարզ արարողությամբ մը, Հիսուս գինի և անթթխմոր հաց ներկայացուց, մարդկության համար զոհագործելու վրա եղող իր կյանքին որպես խորհրդանիշեր: Ուստի, տարեկան Քրիստոսի Հիշատակատոնի ընթրիքին, իր 144.000 օծյալ հետևորդներուն մնացորդը իրենց երկնային հոյսը կը դավանին, հացին և գինիին մասնակցելով: Միլիոնավոր ուրիշներ, որոնք աշխարհի չորս կողմը այդ Հիշատակատոնին ներկա կըլլա՛ն Թագավորության Սրահներուն մեջ, ուրախ հանդիսատեսներ են» («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մեջ», 1993թ. , էջ 201):

Այս մոտեցումները ճշմարտությանը դեմ են, քանի որ, նախ՝ Ավետարանում ոչ մի տեղ չի հիշատակվում, թե եկեղեցում ընտրյալները միայն պետք է հաղորդվեն: Մյուս դեպքերում էլ, անհասկանալի է, թե եհովականները իրենց միջից ինչպես են առանձնացնում 144.000-ի մնացորդ՝ 5.000 ընտրյալներին: Չէ՞ որ մարդուն ոչ թե մարդ կարող



է գնահատել, այլ Աստված:

Եհովայի վկաները Հիշատակի երեկոներով հակառակվում են նաև իրենք իրենց: Պողոս առաքյալն ասում է. **«Քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեցեք՝ մինչև որ նա գա»** (Ա Կորնթ. 11.26): Եվ քանի որ Եհովայի վկաները հայտարարում են, թե Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի է ունեցել 1914 թվականին, ապա այդ ժամանակից հետո անհասկանալի են դառնում եհովականների կողմից կազմակերպվող «Քրիստոսի Հիշատակատոնի ընթրիքները» և դրանցում հաց ու գինու գործածումը:

### Թարգմանական աղավաղումներ

Եհովայի վկաները իրենց «հավատամքի» դրույթները հիմնավորելու համար ստիպված են նաև թարգմանական աղավաղումներ կատարել: Աստվածաշնչի «սրբագրումներից» հիշատակենք միայն մեկը՝ Նոր Կտարականում 237 անգամ հանդիպող «Տեր» բառը (հունարեն՝ «Կիրիոս») իրենց թարգմանություններում բրուկլինյան քարոզիչները փոխարինել են «Եհովայով»: Փաստացի հիմք չունենալով նման մոտեցման համար, նրանք այն ենթադրությունն են անում, թե Նոր Կտակարանի հնագույն ձեռագրերում, ի տարբերություն բնագիր տեքստերի, Եհովայի անունը միտումնավոր չի հիշակակվել: Այսպիսով, եհովական առաջնորդները Տիրոջ խոսքը աղավաղողներից են, որոնց համար Հիսուսն ասում է. **«Եթե մեկը բան ավելացնի սրա վրա, Աստված էլ նրա վրա պիտի ավելացնի այս գրքում գրված յոթը պատուհասները»** (Հայտ. 22.18):

### Սուրբ Գրքի մարգարեությունների սխալ մեկնություններ

Ամբողջությամբ անհիմն և անտրամաբանական են «վկաների»՝ Աստվածաշնչի մարգարեությունների մեկնությունները: Այսպես՝ Հայտնությունում հիշատակվող «կարմիր գազանը» վերջին ժամանակներում ի հայտ եկող աստ-

վաճամերժ Թագավորը և Թագավորությունն է, որ պետք է Աստծու եկեղեցին հալածի և հավատացյալներին մահվան դատապարտի, որին և անհավատները պետք է երկրպագեն (Հայտնություն, գլուխ 13): Իսկ Եհովայի վկաները «գազանի» մասին հայտարարում են, որ այն ոչ այլ ինչ է, եթե ոչ Միավորված Ազգերի Կազմակերպությունը՝ ՄԱԿ-ը: Այդ մասին նրանք գրում են. «Նաթան Հ. Նոր հայտնաբերեց «վայրի գազանը որ... էր», 1920-ին մէջտեղ եկող Ազգերի Դաշնակցութիւնը... Աստվածաշնչի մարգարեութեան առ ի կատարում, այդ «գազանը» վերակենդանացավ 1945-ին որպէս Միացյալ ազգեր» («Քու Թագավորութիւնդ գա», 1984թ., էջ 166): Այս դատողությունն անհիմն է նրանով, որ ՄԱԿ-ը չնայած աշխարհիկ կազմակերպություն է, սակայն ոչ թե քրիստոնյաներին հալածող է, այլ պաշտպան է մարդու ազատությունների, այդ թվում կրոնական կազմակերպությունների և եկեղեցիների ազատ գործունեության:

## Գլուխ 11
## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եհովայի վկաները, չընդունելով «Հայրենիք» հասկացությունը և մերժելով բոլոր պետական կառույցները, դեմ են նաև բանակին և զինվորական ծառայությանը: Անշուշտ, եհովականները ճիշտ են այն հարցում, որ պատմական բոլոր դարաշրջանում երկրագընդի վրա Սատանան զինվորականների միջոցով մեծագույն չարագործություններ է կատարել: Սակայն մեկ այլ բան է, երբ չար մտադրությամբ, նախահարձակ լինելով, զենքով սպանություն են գործում և ուրիշի ունեցվածքին տիրում ու բոլորովին այլ բան, երբ մարդ այդ ամենից պաշտպանվելու համար է զենք վերցնում: Նույնն է պարագան նաև ազգերի և պետությունների համար: Հետևապես, ճշմարիտ չէ միանշանակորեն հակառակվել զինվորական ծառայությանը: Պատկերացնենք, որ եթե հայ ժողովուրդը հնուց առաջնորդվեր



Եհովայի վկաների պատգամներով և զենք չվերցներ՝ իր Հայրենիքը պաշտպանելու, ապա հարևան անհավատ, բարբարոս ժողովուրդների ասպատակությունների հետևանքով վաղուց արդեն մեր տարածքում հայկական և քրիստոնեական հիշեցնող ոչինչ պահպանված չէր լինի: Այդ ամենին հակառակ՝ պատմությունը վկայում է, որ հայերը ջերմեռանդորեն իրենց Հայրենիքը պաշտպանել են հատկապես այն ժամանակ, երբ այդ պատերազմը մղվել է նաև հանուն քրիստոնեական հավատքի պահպանության:

Դեռ նոր էր Հայոց պետությունը դարձել քրիստոնեական, երբ ստիպված էր իր հավատքը պաշտպանել հզոր հռոմեական կայսրությունից: 311թ. Հռոմի Մաքսիմինոս Դաժ կայսրը հարձակվում է Հայաստանի վրա, չնայած, որ մինչ այդ Հռոմը Հայաստանի հետ գտնվում էր բարեկամական հարաբերությունների մեջ և քաղաքական պատճառ չկար իրար հետ թշնամանալու: Հայտնի պատմագիր Եվսեբիոս Կեսարացին, հիշատակելով Հռոմի կայսրին, այդ դեպքերի կապակցությամբ գրում է. **«Պատերազմ հայտարարեց արմեններին, այն մարդկանց, որոնք ի սկզբանե բարեկամ և նիզակակից էին հռոմեացիներին: Եվ որովհետև նրանք քրիստոնյա էին և ջերմեռանդորեն պաշտում էին Աստծուն, ուստի աստվածատյացը ջանաց նրանց բռնությամբ ստիպել, որ դառնան կուռքերի և դևերի պաշտամունքին... Արդ՝ նա հենց ինքն իր բանակի հետ, արմենների դեմ պատերազմելիս ջախջախվեց»:**

Իսկ դրանից ավելի ուշ՝ 451թ. , երբ հայ ժողովուրդը զենք վերցրեց պաշտպանվելու իրեն մազդեական կրոնը պարտադրող Պարսկաստանից, Հայոց բանակի սպարապետ Վարդան Մամիկոնյանը Ավարայրի ճակատամարտից առաջ, դիմելով իր զինակիցներին, ասում էր. **«Նա, ով կարծում էր, թե մենք քրիստոնեությունը իբրև զգեստ ունենք հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպես մարմնի գույնը, գուցե այլևս չկարողանա էլ մինչև վերջը... Եվ մենք էլ, թեպետ մարմնով երկրի վրա ենք, բայց հավատով երկնքում ենք հաստատված, որտեղ ոչ ոք չի կարող**

**Հասնել Քրիստոսի անձեռագործ շինվածքին»** *(Եղիշե, «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլ. 5)*: Վարդան Մամիկոնյանը և 1035 մյուս հայորդիները, հրաժարվելով երկրային կյանքից, նահատակվեցին հանուն Հիսուսի և հանուն հայրենիքի, նահատակվեցին, որպեսզի Հայոց հողում անխախտ մնան քրիստոնեության հիմքերը: Նահատակ հայորդիների մասին ակամա հիշում ենք Հիսուսի այն խոսքը, թե՝ **«ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տա իր բարեկամների համար»** (Հովհ. 15.13): Արդ, մենք էլ մեր հայրենիքը պետք է դիտենք որպես մեր մեծ ընտանիքը: Ինչպես որ ամեն հավատացյալ իր ընտանիքի հոգսն է կիսում, նմանապես բարին այն կլիներ, որ հավատացյալը ոչ թե իր հայրենի երկրից ձեռք քաշեր, այլ այն ավելի աստվածահաճո տեսնելու ձգտումն ունենար: Եվ եթե Եհովայի վկան քարոզում է, թե պետք չէ հայրենիքի սահմանները պաշտպանել, ապա դա նույնն է, թե նա առավոտյան աշխատանքի գնալիս իր բնակարանի դուռը չկողպեր կամ թե՝ իր ընտանիքի վրա զինված հարձակման դեպքում իր կնոջը և երեխաներին չպաշտպաներ:

Ավանդությունը նույնիսկ վկայում է, որ եղել են զորավարներ և զինվորականներ, որոնք իրենց աստվածապաշտությամբ արժանացել են Աստծու մեծ օրհնությանը և օծությանը: Եկեղեցում ավելի շատ հիշատակվում է սբ. Սարգիս և սբ. Գևորգ զորավարների անունները. նրանցով Աստծու փառքը հայտնվեց բազում հեթանոսների, և նրանք, ի վերջո, Տիրոջ անվան համար նահատակության արժանացան:

Անդրադառնալով սուրբգրային վկայություններին, տեսնում ենք, որ երբ Աստված իսրայելցիներին բազում հրաշքներով, նրանց առջևից պատերազմելով, անապատով առաջնորդում էր դեպի Ավետյաց երկիր, նույնիսկ այդ ժամանակ Ամենակալը Մովսեսին ասաց.

**«Դու և Ահարոնը հաշվառման կենթարկեք քսան տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող արական սեռի բոլոր մարդկանց, որոնք կարող են զենք վերցնել**



**Իսրայելի բանակի համար»** (Թվեր 1.3):

Նոր Կտակարանի այն մասում, որտեղ նշված է Հովհաննես Մկրտչի ապաշխարության քարոզի և նրանով կատարվող մկրտության մասին, կարդում ենք. **«Զինվորները նույնպէս հարցնում էին նրան. Իսկ մենք ի՞նչ անենք: Նա ասաց նրանց. Ոչ ոքի մի՛ նեղեք, ոչ ոքի մի՛ զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի»** (Ղուկ. 3.14): Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Մկրտիչը զինվորներին չի ասում, թե իրենց փրկության համար նրանք պետք է զինվորական ծառայությունից հրաժարվեն:

Մեկ պարագայում Հիսուսն աշակերտներին պատվիրում է, որ իրենց հետ սուր վերցնեն (Ղուկ. 22.36): Իսկ Կափառնայում իրեն հանդիպած հարյուրապետի հավատքի մասին Հիսուսն ասում է. **«Ճշմարիտ եմ ասում ձեզ, Իսրայելի մէջ իսկ այսպիսի հավատ չգտա երբեք»** (Մատթ. 8.10): Իսկ Գործք առաքելոցում Կոռնելիոս զորապետն է որպես Աստծուն հաճելի անձնավորություն ներկայացվում. **«Կեսարիայում Կոռնելիոս անունով մի մարդ կար, մի հարյուրապետ Իտալական կոչվող գնդից. նա իր ընտանիքով բարեպաշտ և աստվածավախ լինելով՝ շատ ողորմություններ էր անում ժողովրդի մեջ և միշտ Աստծուն աղոթք էր անում»** (Գործք 10. 1,2):

Պողոս առաքյալն էլ, խոսելով աստվածահաճո մարդկանց՝ հավատով Տիրոջից ստացած օրհնությունների մասին, նշում է, որ նրանցից շատերը, քաջաբար պատերազմելով, թշնամու բանակներին հաղթեցին. **«Եվ արդ, էլ ի՞նչ ասեմ, քանի որ ժամանակը բավական չէր լինի պատմելու Գեդեոնի, Բարակի, Սամսոնի, Հեփթայեի, Դավթի և Սամուելի ու մյուս մարգարեների մասին, որոնք հավատով պարտության մատնեցին թագավորություններ... կտրիճներ եղան պատերազմի մեջ, հաղթեցին օտար բանակների»** (Եբր. 11.32,34):

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
# «ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Գլուխ 1
## «ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԳԱՐԵ՞

*Չնայած Եհովայի վկաները չեն ասում, թե իրենց շարքերում մարգարեներ կան, սակայն հայտարարում են, որ ամբողջ կազմակերպությանը մարգարեության շնորհ է տրված: Պատմական զուգահեռներ անցկացնելով, նրանք այդ մասին գրում են. «Այդ «մարգարեն» եղել է ոչ թե մեկ մարդ, այլ ամբողջը՝ կազմված տղամարդկանցից և կանանցից. դա Քրիստոսին հետևող մի փոքր խումբ էր... Այսօր նրանք հայտնի են քրիստոնեական Եհովայի վկաներ անունով» («Դիտարան», 1 ապրիլի 1971թ., էջ 197):*

*Մեկ այլ տեղ բրուկլինյան քարոզիչները նշում են, թե իրենց կազմակերպությունը Հայտնության 11-րդ գլխում հիշատակված* «երկու վկաներն» *են, որոնք վերջին ժամանակներում պետք է մարգարեանան* («Քու թագավորությունը գա», էջ 144,145): *Եհովականները նաև ավելացնում են, որ իրենց կազմակերպությունը, մասնավորապես «Դիտարան» ամսագիրը, այն խոսափողն է, որով Աստված խոսում է մարդկության հետ.* «Սա միակ ուղին է, որի միջոցով Աստված տալիս է Իր ճշմարտությունը երկրի վրա ապրող մարդկանց» («Դիտարան», 1 մայիսի 1964թ.): «Այսօր Սուրբ Գրքի հեղինակը Իր մարգարեությունները մեկնում և բացատրում է «Դիտարանի» էջերում» («Դիտարան», 1943թ., ապրիլ, էջ 127): *Այս խոսքերով ստացվում է, որ «Դիտարանի» խմբագիրը հենց ինքը՝ Աստվածն է: Սակայն իրականությունն այս խոսքերին հակառակ է: «Դիտարանում» և ոչ մի այլ եհովական հրատարակությունում չենք*



*կարող հանդիպել գեթ մեկ «մարգարեական կանխատեսում», որն իրականացած լինի:*

*Եհովայի վկաների «մարգարեական շնորհները» ի հայտ են գալիս կազմակերպության հիմնադիր Չ. Ռասելից: Վերջինս իր քարոզներում անընդհատ շեշտում էր, թե 1914 թվականը աշխարհի թագավորությունների վախճանի տարին է, որոնց փլատակների վրա պետք է հաստատվի Տիրոջ Հազարամյա Թագավորությունը: Ներկայացնենք այդ կանխատեսումներից մի քանիսը.* «Անհավատների ժամանակների մասին՝ Աստվածաշնչի տվյալների հիման վրա, մենք ապացուցված ճշմարտություն ենք համարում, որ այս աշխարհի թագավորությունների վերջը և Աստծո թագավորության լիակատար հաստատումը պետք է ավարտվի 1914թ. վերջում («Ժամանակը մոտ է», 1908թ. էջ 99): «Ամենակալ Աստծու պատերազմը կավարտվի 1914թ.՝ ներկայիս երկրային կառավարությունների լիակատար տապալմամբ» (նույն տեղում, էջ 101): «Մենք համոզված ենք, որ դրանք ոչ թե մեր, այլ Աստծու կողմից նշանակված թվականներն են: Հիշիր, որ 1914թ. վերջը ոչ թե սկիզբը, այլ ավարտն է տանջանքների ժամանակաշրջանի» («Դիտարան», 15 հուլիսի 1894թ., էջ 226): *Երբ 1914թ. այս «մարգարեությունները» չիրականացան, Ռասելը* «հեթանոսների ժամանակների վերջը» *տեղափոխեց 1915 թվական, սակայն դա ևս հուսախաբության տարի եղավ նրան հավատացողների համար:*

*Ռասելից հետո Եհովայի վկաների հաջորդ նախագահ Ժ. Ռուտերֆորդը (վերջինս* «Ինչո՞ւ ծառայել Եհովային» գրքում հայտարարում է, թե ինքը «Եհովայի խոսափողն է ներկա դարաշրջանում») *իր հերթին ևս «հաշվարկեց» երկրի վրա Աստծու արքայության հաստատման տարեթիվը: Վկայակոչելով Մովսեսի օրենքով մտցված տարեթվային փուլերը, նա գրում է.* «Այդ հոբելյարների պարզ հաշվարկը մեզ բերում է հետևյալ կարևոր եզրահանգման. 70 հոբելյարները, յուրաքանչյուրը՝ 50 տարի պարբերականությամբ, կազմում է 3500 տարի: Այդ ժամանակաշրջանը, սկսելով մ. թ. ա. 1575թ. , ավարտվում է 1925թ.» *(Ժ. Ռուտեր-*

ֆորդ. «Ներկայումս ապրողներից միլիոնավորները երբեք չեն մահանա», 1920թ., էջ 89): *Իսկ ի՞նչ պետք է տեղի ունենա այդ ժամանակ... Ռուտերֆորդը անվարան պնդում է.* «Մենք կարող ենք վստահորեն ասել, որ 1925թ. պետք է նշի Աբրահամի, Իսահակի, Հակոբի և անցյալի այլ մարգարեների վերադարձը... 1925թ. աշնանը Իսրայելի այդ հավատարիմ որդիները հարություն կառնեն մեռելներից և կվերականգնվեն կատարյալ մարդկային կյանքի համար... մենք պետք է գանք կասկած չհարուցող այն եզրակացության, որ ներկայումս ապրողներից միլիոնավորները երբեք չեն մահանա» (նույն տեղում, էջ 89, 90, 97): *Երբ Ռուտերֆորդի այս կանխատեսումները չիրականացան, մեծ թվով եհովականներ հեռացան կազմակերպությունից:*

*Որոշ դադարից հետո Ժ. Ռուտերֆորդը սկսում է նոր կանխատեսումներ կատարել: 1933թ. նա հայտարարում է, որ աշխարհը գտնվում է արմագեդոնյան պատերազմի նախաշեմին.* «Համաշխարհային պատերազմը, անկասկած, կսկսվի և այն էլ՝ մոտ ժամանակներում: Ոչ մի ուժ չի կասեցնի այն: Ամենակարող Աստվածը հաստատել է, որ այն լինի, որպեսզի աշխարհը չարից ազատի» *(Ժ. Ռուտերֆորդ* «Համաշխարհային պատերազմը մոտ է», *1933թ. , էջ 25): Այն հարցին, թե ի՞նչ պետք է տեղի ունենա այդ պատերազմից հետո, Ռուտերֆորդը պարզաբանում է. «Մարդիկ, որոնք կանցնեն այդ համաշխարհային պատերազմի միջով, կլինեն առաջինները, որոնք երկրի վրա կօգտվեն հավիտենական կյանքի բարիքներից» (Նույն տեղում, էջ 36): Իր ամենավերջին գրքերից մեկում Ռուտերֆորդը հարության ժամանակների մասին նշում է.* «Հինկտակարանային սրբերի հարությանը այժմ կարելի է սպասել ամեն օր... Եվ նրանց սպասումով՝ 1930թ. Սան Դիեգոյում կառուցվել է տուն, որը կոչվել է «Beth-Sarim»: Այն կդառնա իշխանների հանգրվանը՝ նրանց վերադարձից հետո» («Նոր աշխարհ», 1942թ. , էջ 104):

*Բրուկլինյան «պայծառատեսները» երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից նորից սկսեցին ահազանգել Արմագեդոնի մոտալուտ լինելու մասին.* «1939 թվականին սկսված այս պատերազմում բոլոր դիվային ոգիները հակառակվում են թեոկրատիային: Այդ պատճառով երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը կլինի այլ կերպ, ինչ սպասում են ժողովուրդները, այն պետք է վերջանա Արմագեդոնով» («Դանիելի մարգարեությունների մեկնություններ», 1941թ. , մաս 2, էջ 1): *Մեկ այլ տեղ նշվում է, որ այդ պատերազմը պետք է վերջանա հօգուտ Եհովայի, Որը Արմագեդոնում* «Ինքը պետք է ոչնչացնի Հիտլերին և նրա կաթոլիկ «պոռնիկին» (նույն տեղում, մաս 4, էջ 6, 7):

*Արմագեդոնի ժամկետը այնուհետև տեղափոխվեց 1975թ.* «Ծնշման, մեղքի հիվանդության և մահվան իշխանության վեց հազարամյակի ավարտից հետո մարդկությունը կմխիթարվի հանգստով... Այսպիսով, ո՞ր թվականին կվերջանա մարդկության գոյատևման 6 հազարամյակը. այն կավարտվի 1975թ.» («Արթնացե՛ք», 1967թ. , հունիս, էջ 8): «1975թ. աշնանը արմագեդոնյան պատերազմը կավարտվի և կհաստատվի երկար ժամանակ սպասված Քրիստոսի Հազարամյա թագավորությունը... Մեր ժամանակագրությունը, որը հիմնված է մանրազնին ուսումնասիրությունների վրա, համարվում է ստույգ... շեղումը կարող է լինել մի քանի շաբաթվա կամ ամիսների, բայց ոչ տարիների» («Ինչո՞ւ ենք սպասում 1975 թվականին», 1968թ., էջ 6, 8): «Պատկերացրեք միայն, եղբայրնե՛ր, մինչև երկրի վրա մարդու գոյատևման 6000 տարին մեզ մնացել է ընդամենը 90 ամիս» («Արքայության կառավարությունը», 1968թ., էջ 4): «70ական թվականների կեսերին աշխարհում տեղի կունենան արմատական փոփոխություններ, որոնց մենք անհամբեր սպասում ենք» («Դիտարան», 1970թ., հոկտեմբեր, էջ 174):

*1975 թվականին, երբ շատ եհովականներ ծանր հուսախաբություն ապրեցին, բրուկլինյան առաջնորդները սկսեցին նոր մոտեցումներ դրսևորել՝ մասնավորապես պնդել, թե մարդկության 6000 տարին դեռ չի վերջացել, այդ նպատակով օգտագործվեց արարչագործության այն պահը, երբ*

*Աստծու խոսքն ասում է, որ Ադամն ու Եվան միաժամանակ չեն ստեղծվել.* «Որքա՞ն ժամանակ է անցել տղամարդու արարումից մինչև կնոջ արարումը: Աստվածաշունչը այդ մասին ոչինչ չի ասում... Այսպիսով, ի՞նչ է դա նշանակում, պարզապես այն, որ մենք չենք կարող ասել, թե այն կարճ ժամանակ է եղել... Ամեն դեպքում մեզ անհրաժեշտ է այդ ժամանակահատվածը հանել այն ժամանակից, երբ Ադամն էր ստեղծվել» («Դիտարան», 1977թ., օգոստոս, էջ 118, 119): *Իսկ դրանից տասը տարի առաջ իրենց Եհովայի խոսնակներ համարողները հակառակն էին պնդում.* «Ադամը ստեղծվել է մ. թ. ա. 4026 թվականի աշնանը, նույն տարում է ստեղծվել նաև Եվան: Այդ ժամանակ էլ սկսվեց յոթներորդ օրը, որում Աստված հանգստացավ: Հետևաբար, ո՞ր տարեթիվն է մարդկության գոյատևման 6000 տարին և աստվածային հանգստի 6000 տարին վերջանում. դրանք ավարտվում են 1975 թվականին» («Արթնացե՛ք», 1967թ. , հունվար, էջ 14):

*Այս մեջբերումների դիտարկումով ակնհայտ է դառնում, որ եհովական «մարգարեները» դասվում են վերջին ժամանակների այն մոլորեցնողների շարքին, որոնց մասին Հիսուսն ասում է.* ***«Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն»*** *(Մատթ. 24.11): Եհովայի անունից սուտ մարգարեություններ կատարողների մասին Աստծու օրենքն ասում է.* ***«Իսկ եթէ մարգարէն հանդգնի իմ անունից ասել այնպիսի բաներ, որ ես չեմ հրամայել ասել, կամ եթե խոսի օտար աստվածների անունից, ապա այդ մարգարեն պետք է մեռնի: Եթէ ձեր մտքում ասեք՝ «ինչպե՞ս իմանանք, թե Տերը չի ասել այդ խոսքերը», ապա իմացե՛ք. եթե Տիրոջ անունից մարգարեի ասածը չի կատարվում, չի լինում, ապա դա Տիրոջ ասած խոսքը չէ»*** *(Երկ. Օրէնք 18.20-22):*

*Միթե՞ այսքան վկայությունները, քե՛զ, ով Եհովայի վկա, չեն համոզում, որ կազմակերպությունը, որի անունը կրում ես, Աստծու խոսքին հակառակ է:*



## Գլուխ 2

## ԱՌԱՋՆՈՐԴՎԵՆՔ «ԴԻՏԱՐԱՆՈ՞Վ», ԹԵ՞ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՎ

*Եհովայի վկաները համոզված հայտարարում են, որ մարդիկ, առանց իրենց մեկնությունների, չեն կարող Աստվածաշունչը հասկանալ, և իբր թե հոգևոր կերակուր ժամանակին հոտին կարող է տալ միայն մարդկանց մի խումբ, որոնք և բրուքլինյան քարոզիչներն են: Այս մոտեցումը գալիս է կազմակերպության հիմնադիր Չ. Ռասելից, որը դեռ 1910թ.-ին գրում էր, թե առանց իր աշխատություններին ծանոթանալու, մարդիկ, լոկ Աստվածաշունչը կարդալով, չեն կարող լույսի մեջ քայլել, այլ* «կնկնեն խավարը», *նաև ավելացնում է.* «Մենք գտնում ենք, որ, անմիջապես Աստվածաշունչն ուսումնասիրելով, մարդիկ անկարող կլինեն տեսնելու աստվածային ծրագրերը» («Դիտարան», 15 սեպտեմբերի 1910թ. , էջ 298): *Նույնը հայտարարում էին նաև նրա հետևորդները.* «Նրանք, ովքեր ճշմարտությանը հասու են դարձել, շրջանցելով եղբայր Ռասելին ու նրա գրությունները, Տիրոջ կողմից համարվել են խաբեբաներ» («Դիտարան», 15 սեպտեմբերի 1922թ. , էջ 279): Հետագայում այս մոտեցումը ընդհանրացրին ամբողջ կազմակերպության համար. «Եհովան Աստվածաշնչի ըմբռնումը կախվածության մեջ է դրել իր կազմակերպության հետ միավորումից» («Դիտարան», 1 հոկտեմբերի 1961թ.): «Աստվածաշունչը ըմբռնելի է միայն այդ կազմակերպության միջոցով: Այն անհնար է հասկանալ առանց այդ անտեսանելի կապի» («Դիտարան», 1994թ. , հոկտեմբեր):

*Եհովական առաջնորդները շատ լավ հասկանում են, որ մարդիկ, ինքնուրույնաբար Աստվածաշունչն ուսումնասիրելով, կգան այն ճշմարտությունների ընդունմանը, որոնք դարերի ընթացքում դավանել են քրիստոնեական եկեղեցիները, այդ իսկ պատճառով կանխապես մարդկանց զգուշացնում են.* «Բավական է, որ դուք Աստվածաշունչը կարդաք տանը՝ միայնակ կամ խմբովին: Սակայն որքան էլ որ դա

տարօրինակ է, հենց այդպիսի ընթերցանությունն է մարդկանց բերում այն բանին, որ նրանք ընդունում են շեղված դրույթներ, որոնք հազարամյակներով քարոզվել են քրիստոնեական կրոնավորների միջոցով» («Դիտարան», 15 օգոստոսի 1981թ., էջ 28, 29):

*Այսպիսով, Եհովայի վկաների համոզմամբ, ոչ թե Աստվածաշունչն է փրկության ուսմունքը տարածում, այլ իրենց մեկնությունները: Անշուշտ, այդ հայտարարությունները եհովականների հերթական խաբեություններից են: Եթե մինչև Չ. Ռասելը ոչ ոք Աստվածաշունչը չի հասկացել, և քրիստոնյա եկեղեցիները՝ իրենց հավատացյալներով, 19 դար եղել են մոլորյալներ, ապա, ըստ դրա, ստացվում է, որ Քրիստոսը աշխարհ եկավ, որպեսզի Ավետարանով իր խոսքն ունկնդրողների գերակշիռ մասին մոլորեցնի: Սակայն մեր Տերը սիրո Աստվածը չէր լինի, եթե Իր պատգամն այնքան դժվարըմբռնելի ներկայացներ, որ մի քանի «գիտուններ» միայն, 19-րդ դարի վերջերից սկսած, հասկանային այն և փրկվեին: Եվ Աստված մեզնից ոչ թե մտքի ճկունություն է պահանջում, այլ նախ և առաջ հոգու մաքրություն և սրբություն, ի վերջո՝ մանկական միամտություն: Այդ պատճառով է, որ Հիսուսն ասում է, թե Աստծու արքայությունը ոչ թե իմաստուններինն է, այլ՝ մանուկներինը: Եվ թեև Սուրբ Գրքում առկա են որոշ դժվարըմբռնելի պահեր, սակայն հիմնական հավատալիքները, որոնք վերաբերում են մարդու փրկությանը և հավիտենական կյանքի ժառանգմանը, անկեղծ սրտով, հավատքով և աղոթքով կարդալիս՝ Սուրբ Հոգով ճանաչվում են: Պետրոս առաքյալը Սուրբ Գրքի և այն թյուր մեկնողների մասին նշում է. **«...դրանց մեջ կան ինչ ինչ դժվարիմաց բաներ, որ անուսները և տատանվողները ծուռ են մեկնում. նրանք այդպէս են մեկնում նաև բոլոր Գրվածքները՝ իրենց անձերի կորստյան համար»** (Բ Պետ. 3.16):*

*Ըստ էության, «Դիտարանով» բրուկլինյան քարոզիչները Բանսարկուի ներշնչանքով նոր ավետարան և նոր Քրիստոս են մարդկությանը քարոզում, իրենց «իմաստությամբ» փորձում մտքով շատերին շեղել Քրիստոսի հա-*



*վատքից: Այդ մասին Պողոս առաքյալը ժամանակին զգուշացրել է. **«Բայց երկյուղ եմ կրում, թե մի գուցե, ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, ձեր միտքը ապականվի ու շեղվի Քրիստոսի հանդեպ ձեր ունեցած պարզամտությունից: Որովհետև եթե որևէ մեկը գա ու քարոզի մի ուրիշ Քրիստոս, որին մենք չքարոզեցինք, կամ առնեք ուրիշ հոգի, որը չառաք մեզնից, կամ ուրիշ ավետարան, որը չընդունեցիք մեզնից,** շատ լավ պիտի **անսայիք նրան»** (Բ Կորնթ. 11.3,4):*

*Ուրեմն, մենք մեր ուշադրությունը չպետք է շեղենք Քրիտոսի Ավետարանից դեպի մարդաստեղծ մի ուղեցույց, որն, ըստ էության, հավակնում է «նոր ավետարան» կոչվել: Այդ մոլորության մասին առաքյալը վերստին նախազգուշացնում է. **«Զարմանում եմ, որ այդպէս շուտ լքում էք նրան, ով Քրիստոսի շնորհով կանչեց ձեզ և դառնում եք դեպի ուրիշ ավետարան. բայց ուրիշ ավետարան չկա. կան ոմանք, որ խռովություն են սերմանում ձեր մեջ և ուզում են շուռ տալ Քրիստոսի ավետարանը: Բայց եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովյա՜լ լինի»** (Գաղատ. 1. 68): Եթե եհովականները նշում են, թե առանց իրենց մեկնությունների ու ուսուցումների ոչ ոք չի կարող Աստվածաշունչն ըմբռնել, ապա Հովհաննես ավետարանիչը հակառակն է փաստում, ընդգծելով, որ այդ կոչումը Սուրբ Հոգուն է վերապահված. **«Այս բանը գրեցի ձեզ, որպեսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: Եվ այն օծումը, որը դուք ընդունեցիք նրանից, թող բնակվի ձեր մեջ. և կարիք չկա, որ մէկը ձեզ ուսուցանի: Այլ եղե՛ք այնպէս, ինչպես որ նրա օծումը ուսուցանում է ձեզ ամեն ինչի մասին, որ ճշմարիտ է»** (Ա Հովհ 2.26, 27): Ավետարանիչը այս խոսքերին նաև ավելացնում է. **«Ամեն ոք, ով չի մնում Քրիստոսի վարդապետության մեջ, չի ճանաչում Աստծուն: Ով մնում է վարդապետության մեջ, նա ընդունում է և՛ Որդուն, և՛ Հորը: Եթե մեկը ձեզ մոտ գա և այս վարդապետությունը չունենա, նրան տուն մի՛ ընդունեք և նրան մի՛ ողջունեք: Ով այդպիսի մեկին ասի՝ ողջո՜ւյն, մաս-***

***նակից կլինի** նրա **չար գործերին»*** *(Բ Հովհ. 9.11): Հովհաննես առաքյալը, **«Որդու»** անունը **«Հորից»** առաջ դնելով, նկատի ուներ, որ պետք է հայտնվեն ուսմունքներ, որոնք Որդու Աստվածությունը պետք է մերժեն: Այս խոսքերը չեն կարող առավելապես չվերաբերել Եհովայի վկաներին, որոնք տնից տուն անցնելով են հիմնականում իրենց մոլորեցնող վարդապետությունը տարածում:*

## Գլուխ 3
## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՆԴԴԵՄ ԵԿԵՂԵՑՈՒ

*Եհովայի վկաները իրենց համարում են երկրի վրա Աստծու միակ կազմակերպությունը, իսկ դրանից դուրս ամեն ինչ, այդ թվում և Երրորդությունը դավանող քրիստոնեական եկեղեցիները, դասում են սատանայական հաստատությունների շարքում: Այդ մասին նրանք գրում են.* «Ինչպիսի՞ կազմակերպություններ կարող են գոյություն ունենալ ճշմարիտ քրիստոնեական ժողովից դուրս, միայն՝ սատանայի կազմակերպությունները» (*«Դիտարան»*, 1 մարտի 1979թ. , էջ 24): «Երրորդությանը հավատացողները չեն պահում Աստծո ճանաչողությունը» (Հռոմ. 1:28): Այդ համարը նաև ասում է. ***«Աստված նրանց մատնեց անարգ մտքերի, որ գործեն անվայել բաներ»:*** 29-31րդ համարներում թվարկվում են այդ անվայել բաներից մի քանիսը՝ սպանություն, կռվազանություն, ուխտադրուժ, անգութ, անողորմ լինելը: Հենց այդ ամենով էլ աչքի ընկան Երրորդություն ընդունող կրոնները» («Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», 1995թ., էջ 30):

*Ինչպես տեսնում ենք, եհովականները ներկայիս աշխարհի հոգեզուրկ վիճակը նենգափոխում են Երրորդության ուսմունքի սխալականության: Մեկ այլ տեղ նրանք այս մասին գրում են.* «Կոստանդին այսպիսի սուտ կրոնքը ներմուծեց Քրիստոնեական վարդապետության մեջ, երբ Հռոմեական կաթոլիկ կրոնքին հիմը դրավ: Ասիկա, իր կարգին, բողոքականության շատ մը վարդապետություններուն աղբյուրը եղավ... Կեղծ Քրիստոսները և ոչ քրիստոնյա կրոնքներն միասնաբար կը կազմեն սուտ կրոնքի համաշխարհային կայսրությունը: Անիկա կեղծ թագավորություն մըն է, որուն ակնարկեց Հովհաննես առաքյալ՝ որպես «մեծն Բաբելոն» (Քու թագավորությունը գա», 1984թ., էջ 95):

*Իսկ թե ինչպես է Աստծո եկեղեցին ի հայտ եկել, այս մասին բրուկլինյան քարոզիչները գրում են.* «1870-ական թվականներուն, Չարլզ Թ. Ռասըլ, ԱՄՆի Փենսիլվանիո Փիթցպըրկի մեջ, նվիրված Քրիստոնեաներու խումբ մը կազմակերպեց: Անոնք շուտով անդրադարձան որ Քրիստոնեա աշխարհի կրոնքները Բաբելոնական վարդապետություններուն և արարողություններուն և հոգիի անմահության Պղատոնական ուսուցումին վրա հիմնված են և ոչ թե Աստծո Խոսքին վրա: Սուտ կրոնքը մեկդի նետելով, այս պզտիկ խումբը Հիսուսի փրկանքին, հարության և տառապող մարդկության միակ հույսը կազմող Աստոծո թագավորության Աստվածաշնչի ուսուցումներուն վստահելի ջատագովները եղան» («Քու թագավորությունը գա», 1984թ., էջ 143):

*Այսպիսով, Եհովայի վկաները, մերժելով քրիստոնեական եկեղեցիները, միայն իրենց են տեսնում Աստծո հոտի մեջ.* «Աստվածաշունչը կըսե, որ իրապես միայն «մեկ հավատք» կա: Ուստի, այսօր որո՞նք են որ ճշմարիտ երկրպագուներու մարմին մը կը կազմեն: Չենք վարանիր ըսելու, որ անոնք Եհովայի Վկաներն են. («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մեջ», 1993թ., էջ 190):

*Եհովականների այս հավակնությունները և նրանց կողմից Եկեղեցուն ուղղված քննադատությունները անհիմն են ոչ միայն վերոնշյալ դավանական շեղումներով, այլև հակաաստվածաշնչյան է հետևյալ առումներով.*

*1. Եհովայի վկաները, անշուշտ, ճիշտ են այն հարցում, թե Աստծու հոտը՝ Եկեղեցին, մեկ է, սակայն Սուրբ Գրքում ոչ մի տեղ չի ակնարկվում, թե այն վերջին ժամանակներում պետք է ի հայտ գա (հանձինս 19-րդ դարի վերջում հիմնված «Եհովայի վկաներ» կազմակերպության): Հակառակ դրա, Հիսուս նշել է, որ Իր համբարձումից հետո՝*

մինչև աշխարհի վախճանը, Նա միշտ Իր ժողովրդի հետ պետք է լինի, և Իր հիմնած Եկեղեցին անսասան պիտի մնա. **«...այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն»** (Մատթ. 16.18). **«...ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»** (Մատթ. 28.20): Նույնը ենթադրվում է նաև Պողոս առաքյալի հետևյալ **խոսքերով. «...Նրան փա՛ռք եկեղեցում Քրիստոս Հիսուսով, բոլոր ժամանակներում, հավիտյանս հավիտենից»** (Եփես. 3.21):

Իսկ ինչ վերաբերում է այն պնդմանը, թե վերջին ժամանակներում է, որ պետք է Աստծու ճշմարիտ հոտը կազմվի, ապա այս մասին Սուրբ Գիրքը դարձյալ հակառակն է վկայում: Հիսուսը նախ ասում է. **«...երբ մարդու Որդին գա, արդյոք հավատք կգտնի՞ երկրի** վրա» (Ղուկ. 18.8): Իսկ Պողոս առաքյալն ավելացնում է. **«Եվ Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատից և իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների և դևերի վարդապետությունների վրա»** (Ա Տիմ. 4.1):

2. Այն, որ քրիստոնյա կոչվող ազգերը, և որոշ դեպքերում էլ քրիստոնյա եկեղեցիները, հետամուտ չեն եղել ավետարանական պատգամներին, դրանից չի հետևում, որ քրիստոնեական եկեղեցիների վարդապետությունը սխալ է, ինչը որ անհիմն կերպով փորձում են ներկայացնել Եհովայի վկաները: Մինչդեռ Աստծու խոսքով կանխապես վկայվել էր, թե եկեղեցիներում շեղումներ և անկանոնություններ պետք է լինեն, ինչպես որ Հիսուսն է Հայտնության Փոքր Ասիայի եկեղեցիների (որոնք գալիք ժամանակներում քրիստոնեական եկեղեցիների խորհրդապատկերն են) մասին հայտնում, օրինակ՝ Եփեսոսի եկեղեցուն Նա ասում է, թե **«Թողեցիր քո առաջին սերը... ապաշխարի՛ր և քո նախկին գործերն արա»** (Հայտ. 2.4,5), իսկ Լավոդիկեի եկեղեցուն զգուշացնում է. **«Գիտեմ քո գործերը, դու, որ ո՛չ սառն ես և ո՛չ տաք»** (Հայտ. 3.15): Սրանով հանդերձ, Երրորդությունը դավանող քրիստոնեական եկե-



ղեցիները իրենց մեջ ունեցել են բազում սրբակյաց և նահատակ հավատացյալներ:

Այս վիճակներին հակառակ, եհովականները պնդում են, թե իրենք երկրի վրա Տիրոջ միակ կազմակերպությունն են, որը Աստծու առաջ ի սկզբանե անսխալ և անարատ է կանգնած:

Այսպիսով, եթե Աստծու խոսքն ասում է, թե քրիստոնյաները Հիսուսով վերստին ծնվածներն են Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցում, ապա այդ առումով Եհովայի վկաները հայտարարում են, թե իրենց մեջ լինելով է, որ միայն կարելի է վերստին ծնվել, Աստծու հոտի մեջ լինել և փրկվել, քանզի իրենցից դուրս ամենուր խավար է, ուր Սատանան է բացահայտ իշխում:

Բոլոր այս վկայությունները չեն կարող չհամոզել, որ ԱՄՆ-ում ծնունդ առած այս կազմակերպությունը Աստծու եկեղեցու դեմ գործող, նրան հայհոյող հաստատություն է. դա նաև Աստվածանարգություն է, քանզի, ըստ Տերունական խոսքի, Քրիստոսի Եկեղեցին Իր իսկ մարմինն է:

## Գլուխ 4
## ՀԱՎԱՏԱՆՔ ԵՎ ՀՆԱԶԱՆԴՎԵՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱ՞ՆԸ, ԹԵ՞ ԱՍՏԾՈՒՆ

Եհովայի վկաների մոտ հավատաքն առ Աստված հավասարազոր է կազմակերպության հանդեպ եղած հավատքին: Իրենց «աստվածպետական» կազմակերպությանը նրանք վստահում են այնքան, որքան՝ Աստծուն: Եհովայի վկան գտնում է, որ ինքը հոգևոր հաղորդություն կարող է ունենալ Աստծու հետ, եթե առնչվի նրա «տեսանելի կազմակերպության» հետ, և եթե «վկան» չսիրի և չենթարկվի կազմակերպությանը, ապա Աստծու սերը չի կարող վայելել: Այդ մասին նրանք հայտարարում են. «Մենք չենք կարող Աստծուն սիրել, եթե մերժում ենք Նրա խոսքը և այն խողովակը, որի միջոցով Նա խոսում է մեզ հետ... Ով ճանաչում է Եհովայի աստվածպետական տեսանելի կազմակեր-

պությունը, պետք է ընդունի «Հավատարիմ և իմաստուն ծառայի» դիրքը և ենթարկվի նրան... Մի՛ դանդաղեք, միացե՛ք Եհովայի կազմակերպությանը... որով և ընդունեցե՛ք նրա բոլոր գործողությունները: Դա կյանքում ամենագլխավորն է» («Դիտարան», 1 հոկտեմբերի 1967թ.):

*Մեկ այլ տեղ եհովականները, նշելով, որ իրենց կազմակերպությունը Աստծու մարգարեն է, այս մասին ավելացնում են.* «Աստված լույս է ուղարկում միայն իր կազմակերպության միջոցով, այդ պատճառով ինչ որ ասում է այդ մարգարեն, համարվում է մոր պատգամը: Եթե մենք քայլում ենք ճշմարտության լույսի մեջ, ապա պետք է ընդունենք ոչ միայն Եհովա Աստծուն՝ մեր Հորը, այլև՝ Իր կազմակերպությանը, ինչպես՝ մեր մորը» («Դիտարան», 1 մայիսի 1957թ., էջ 273):

*«Եհովայի վկաներ» կազմակերպությունը ղեկավարում է Կառավարիչ մարմինը, որին, իբր թե, Աստծուց մեծագույն շնորհներ են տրված.* «Հիսուս Քրիստոսի գլխավորության ներքև այն հավատարմորեն հառաջ կը տանի մաքուր պաշտամունքի շահերը» («Միացած միակ ճշմարիտ Աստծո պաշտամունքին մեջ», էջ 121): «Անոնք որոշումներ առնելու ատեն մարդկային իմաստության չեն ապավինիր... անոնք նախկին Երուսաղեմի կառավարիչ մարմնին օրինակին կը հետևին, որու որոշումները հիմնված էին Աստծո Խոսքին վրա և Աստծո սուրբ Հոգիին առաջնորդության ներքև կլլայի՛ն» («Դուք կրնաք հավիտյան ապրիլ երկրային դրախտի մը մեջ», էջ 195): *Եթե այդպիսի մենաշնորհ է տրված կառավարիչ մարմնին, ապա ով ցանկանում է Աստծուն ծառայել, նախ պետք է Իր ընտրյալներին հնազանդվի.* «Որոշ մարդկանց համար, որոնք ցանկանում են անվերապահորեն ենթարկվել Եհովային, հաճախ դժվար է սովորել ենթարկվելու կազմակերպության ղեկավարությանը: Եթե դա վերաբերում է Ձեզ, ապա դա ծանրակշիռ միջոց է Ձեր վիճակը ստուգելու Տիրոջ առաջ» («Դիտարան», 1933թ., դեկտեմբեր, էջ 364):

*Մեկ ուրիշ տեղ եհովական քարոզիչները նշում են, թե «փոքր հոտի» մնացորդ ընտրյալները, որոնց մեջ մտնում են* «Կառավարիչ մարմնի» անդամները, Հիսուսի ակնարկած



այն եղբայրներն են, որոնց հանդեպ ունեցած վերաբերմունքով է, որ մարդիկ պետք է դատվեն. «Իսկ տակավին հոս երկրի վրայ եղող «պզտիկ հօտը»՝ որոնք Մատթ. ԻԵ 40-ի մեջ Թագավորին «եղբայրները» կոչված են, առաջնորդությունը կառնեն «բարի լուրի» քարոզչության մեջ: Թագավորը մարդիկը կը դատե ըստ իր «եղբայրներուն» և անոնց ծանուցած պատգամին հանդեպ իրենց ցուցաբերած ընդառաջումին: Ինչ որ անոնք կընե՛ն իր «եղբայրներուն», զայն կը նկատե որպես իրեն եղած: Այն անհատները, որոնք Թագավորին «եղբայրները» հյուրասիրությամբ կընդունին, օրհնություններ ստացողներուն շարքին պիտի ըլլան: Դուն անոնցմե մե՞կն ես» («Քու Թագավորությունը գա», էջ 154):

*Այսպիսով, ըստ եհովականների դավանաբանության, Կառավարիչ մարմինը Աստծո փոխանորդն է երկրի վրա, իրենց կազմակերպությունն էլ՝ Նոր ուխտի «տապանն»է: Հարց է ծագում՝ այդ դեպքում ի՞նչ անեին այն մահկանացուները, որոնք, ճակատագրի բերումով, ապրել են մինչև* Եհովայի «տեսանելի *կազմակերպության» ի հայտ գալը, որոնք գրկված են եղել* «իմաստուն ծառայի կողմից տրվող *կերակուրից»: Այստեղ չենք կարող չհիշել Հիսուսի այն խոսքը, թե՝* ***«ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի»*** *(Մատթ. 23.12), որը վերաբերում է նաև մեծ հավակնություններով, մեծամիտ և հպարտ կեցվածք ունեցող այդ աղանդին:*

## Գլուխ 5
## ԱՍՏԾՈՒՆ ՄԱՏՈՒՑԵՆՔ ՄՏԱՎՈ՞Ր, ԹԵ՞ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

*Եհովայի վկաների «աստվածաբանությունից» ենթադրվում է, որ միտքը, իմացությունը գերակա է հոգու այնպիսի հատկանիշներից, ինչպիսին են՝ սրբությունը և առաքինությունը: Անշուշտ, աստվածպաշտության մեջ հոգին և միտքը փոխկապակցված են, սակայն, երբ միտքը հոգուց առաջ է անցնում, ապա տվյալ անձը սայթաքում է: Ամբողջությամբ վերցրած, նույնն է պատկերը նաև «Եհովայի*

*վկաներ» կազմակերպությունում: Ըստ էության, նրանք Աստվածաշնչի ըմբռնումը դիտում են որպես գիտական մի հայտնագործություն, որը տեղի է ունեցել 19-րդ դարի վերջերին՝ հանձինս Չ. Ռասելի և նրա հետևորդների:*

*Եթե Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու հոգևոր ժառանգությունում հանդիպում ենք, իրենց սրբակյաց վարքով հայտնի, նշանավոր դեմքերի ներշնչող քարոզներ, զղջման և ապաշխարության հորդորակներ, հոգեբուխ աղոթքներ, ապա եհովականների հրատարակած պարբերականներում առկա են միայն 19-րդ դարի վերջերի և ներկա դարաշրջանի եհովական «տեսաբանների» վերլուծական ակնարկներ, որոնք հոգևոր կյանքի և հոգևոր ապրումի հետ ոչ մի առընչություն չունեն: Ակնհայտորեն անհոգի են նաև այդ հրատարակություններում զետեղված նկարները:*

*Եթե Հիսուսն ասում է, որ Աստծուն* ***«Հոգով և ճշմարտությամբ»*** *պետք է երկրպագել (Հովհ. 4.24), ապա «վկաների» աստվածպաշտության հիմքում հոգևորից կտրված ճշմարտազուրկ միտքն է: Մի տեղ, ուր ժխտվում է մարդկային հոգու գոյությունը, ուր բացակայում է Սուրբ Հոգու հետ հաղորդակցությունը, անշուշտ, անհոգիության ոգին կիշխի: Այդ առնչությամբ նշեմ, որ մեկ անգամ, երբ առիթ ունեցա ներկա գտնվել Եհովայի վկաների ամենամյա հավաք-պաշտամունքին՝ Քրիստոսի մահվան հիշատակի երեկոյին, այն տպավորությունը ստացա, թե պատմությանը վերաբերող մի գիտաժողովի եմ ներկա գտնվում, ուր լոկ արձանագրվում էին անցյալում տեղի ունեցած իրադարձությունները: Քրիստոսի չարչարանքներին ու մահվանը վերաբերող ընթերցվածքները ոչ մի հույզ և զգացում չէին արտահայտում:*

*Այսպիսով, «վկաների» աստվածպաշտության և աստվածաբանության հիմքում տեսնում ենք մարդկային գիտելիքն ու իմաստությունը և ոչ թե Սուրբ Հոգու ներկայությունն ու առաջնորդությունը: Եթե հոգևոր կյանքին վերաբերող Աստծու պատգամները անտեսում ենք և մարդահնար վարդապետությունների մեջ ենք ճշմարտությունը փնտրում, հակառակվում ենք Ավետարանին, ինչպես Պո-*



*ղոս առաքյալն է այդ մասին ասում.* ***«Այսուհետև չլինենք երեխա, որոնք տարուբերվում ու քշվում են վարդապետության բոլոր հողմերից, մարդկանց խաբեությամբ. այլ ճշմարտությամբ ապրելով սիրո մեջ»*** *(Եփես. 4.14,15):* ***«Իսկ եթե մեկն այլ բան ուսուցանի և չանսա մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողջամիտ խոսքերին և այն վարդապետությանը, որ աստվածպաշտության համապատասխան է, այդպիսին գոռոզամիտ է և ոչինչ չգիտե, այլ բռնուած է հակառակության խոսքեր և խնդիրներ առաջացնելու հիվանդությամբ»*** *(Ա Տիմ. 6.3,4):*

*Սուրբ Գրքի այլ հատվածներ ևս փաստում են, որ երբ մարդկային իմաստությանն է առաջնային նշանակություն տրվում, ապա դա հակառակություն է Աստծու հանդեպ.* ***«...որպեսզի ձեր հավատը մարդկանց իմաստությունովը չլինի, այլ Աստծո զորությամբ»*** *(Ա Կորնթ. 2.5):* ***«Դու քո աչքին իմաստուն մի՛ թվա, այլ վախեցի՛ր Տիրոջից և խուսափի՛ր չարից»*** *(Առակ. 3.7):* ***«Վա՜յ նրանց, որոնք իրենք իրենց իմաստունի տեղ կդնեն, իրենք իրենց աչքին խորագետ կերևան»*** *(Ես. 5.21):*

# ՎԵՐՋԱԲԱՆ

*Ինչպես տեսանք, Եհովայի վկաների ուսմունքը ամբողջությամբ հակառակ է Աստծու խոսքին: Եվ պատահական չէ, որ ընդամենը հարյուրամյա կենսագրություն ունեցող այդ կազմակերպությունը, Աստծու անունով քողարկված, մերժում է ավանդական քրիստոնեական դավանանքը և վարդապետությունը: Նրանք այն խաբեությունն են սերմանում, թե «Երրորդության ուսմունքը» 325 թվականից Կոստանդին կայսրն է բոլոր եկեղեցիներին պարտադրել: Սակայն ճշմարտությունն այն է, որ Հայաստանում մինչ այդ Ամենասուրբ Երրորդության պաշտամունքն էր արդեն հաստատված, և այդ ժամանակներից մեզ հասած սբ. Գրիգոր Լուսավորչի բոլոր քարոզներում Սուրբ Երրորդության Երեք Դեմքերն են հիշատակված:*

*Եհովականների սխալականությունը բացահայտ է նրանով, որ տարբեր ժամանակներում նրանց կողմից կատարված աստվածաշնչյան մարգարեությունների բազմաթիվ մեկնություններից և ոչ մեկը չի իրականացել, այն դեպքում, երբ նրանք իրենց համարում են Տիրոջ ընտրյալ մարգարեները:*

*Ավարտվելով մեր խոսքը, սիրով հորդորում ենք մեր հայրենակից Եհովայի վկաներին, որպեսզի, հրաժարվելով իրենց կեղծ վարդապետությունից, ուղղափառ քրիստոնեական հավատքն ընդունեն և ճշմարիտ աստվածպաշտության մեջ լինեն: Մեր երկիրը՝ մարդկության արշալույսի օրրանը, նոյյան ժամանակների վերածննդի օջախը, Աստծու Որդուն առաջինը ընդունած պետությունը և դարեր ի վեր աստվածանվիրյալ կյանքով ապրած ժողովրդով սրբացած հողը, կարիք չունի նորահայտ «վարդապետությունների»: Մենք աստվածահաճո կլինենք, եթե լոկ հետևենք մեր սրբակյաց նախնիների ճշմարիտ հավատքին և ապրելակերպին՝ դավանելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. Նրան փառք այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:*